Центральной библиотеке Академии
Наук Армянской ССР

ԷՋՄԻԱԾԻՆ

№ 3 9
1961

ՌՆԺ
ԺԸ ՏԱՐԻ

Մարտ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Գ

1961

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Սրբությամբ պանծալանենք եկեղեցական արվեստի մեր ավանդները	3
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ—Ապաշխարության քարոզը	7
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	10
Վեճափառ Հայրապետի քարոզի առթիվ	12
Կաճիրեում կկառուցվի Թեյն-էլ-Սուրեյնի հայոց մատուռը	13
Պերիստերիի (Աթենք) Ս. Աստվածածին եկեղեցու վերաբացումը	13
Պերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիսկոպոս Գալֆայանի ի պատիվ հոբելյանական հաշկերույթ-հանդես	13
Դերենիկ եպիսկոպոս Փոլատյան վերատեսուչ Եթովպական աստվածաբանական կոլեջին	14
Հանգիստ արժանապատիվ Տ. Սահակ քահանա Այվազյանի	14
Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ջեոֆֆրի Ֆիշերը երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում	15
Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ջեոֆֆրի Ֆիշերի հարը Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանում	16
Վաստակավոր աշխարհագիր-քարտեզագետ Զատիկ Խանզադյանի պատմական Հայաստանի քարտեզագիրքը	17
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	22
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Գարեգին պատրիարք Խաչատուրյան	25
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՑԱՆ—Պատմական համառոտ ակնարկ Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վանքերի և այդ վանքերում գտնվող կաթողիկոսական տապանագրությունների մասին	37
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Հաղբատի վանքը և նրա հետ կապված Հաղբատ գյուղի մյուս հուշարձանները	44
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ—Մի անծանոթ էջ ԺԶ դարի տաղասաց Զաքար Լմենցու ստեղծագործությունից	51
Ակադեմիկոս Հովսեփ Արգարի Օրբելյան	56
Հուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	58

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՐ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1961 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՒԱՂՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲՈՒԹՅԱՄԲ ՊԱՀՊԱՆԵՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԵՐ ԱՎԱՆԴՆԵՐԸ

Երբեմն Մայր Հայրենիք այցելած բրազիլիացի գրող Ժայմե Ադոռ դա Կամարան, խոնարհաբարձելով Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունների վրա, հատկանշական մի զուգակշիռ է անցկացրել հայ և նույն ժողովուրդների անցյալում ստեղծած մշակութային ավանդների և հատուկ հուշարձանների պահպանության վերաբերյալ. «Հայերն ունեն մշակութային նույնպիսի ավանդներ, ինչպես հույները. տարբերությունն այն է, որ հույները այդ ավանդները պահպանել են ավերակների մեջ, իսկ հայերը հասցրել են մինչև մեր օրերը»:

Արդարև, մեր Հայրենի հողը հայ հատուկ պատության գոհարներով հարուստ, բացօդյա մի թանգարան է. հայկական կոթողների, պատմական հուշարձանների, տաճարների և խաչքարերի մի սուրբ աշխարհ, որտեղ յուրահանչյուր քարի, ժայռի վրա հավերժացել է հայ շինարար ժողովրդի հանճարը, մեր կառուցող վարպետների տաղանդը և մեր նախնիների մատների շնորհքն ու հատուկությունը:

Պատմական այս հուշարձանների գլխով անցել են ժամանակի փոթորիկները, բնական և բաղմաթիվ ավերածությունների մրրիկները: Այդ հուշարձանների մի մասը վերածվել է ավերակների, բայց շատերն էլ մնացել են կանգուն՝ արհամարհելով արհավիրքները ու ժամանակը, որպես յուր վկաները հայ ժողովրդի շինարարական տաղանդի և հատուկ աշխատանքի:

Հայաստանում հնագույն հատուկ պատական կորողը Դատևի հայկական բազավորական ամրոց-մեհյանն է, կառուցված մեր թվարկությունից առաջ առաջին դարում: Դատևի ավերակների նուրբ խոյակները ու զարդաքանդակները վկայում են հատուկ պատական արվեստի բարձր զարգացումը Հայաստանում:

Բուն հայկական հատուկ պատությունը, սակայն, զարգացման ինքնուրույն, բարձր մակարդակի է հասնում է—ԺԳ դարերում, ուրարտական կառուցողական արվեստի հիմքերի վրա, որից հետո բուն Հայաստանում համարյա նոր բան չի ստեղծվում և մեր երկրում չենք հանդիպում հայ արվեստի մնայուն նոր գործերի: Է դարում է, որ իր վերջնական ձևն ու բովանդակությունն է ստանում հայ հատուկ պատությունը: Մնունդ է առնում և իր կատարելության հասնում հայ հատուկ պատական ոճը:

ԺԳ—ԺԴ դարերից հետո, մեր ժողովրդի քաղաքական կյանքի դժբախտ պայմաններում, հիշ անգամներ կատարվել են յուրջ և հիմնական վերանորոգումներ հատուկ պատական այդ հուշարձանների, պատմական տաճարների և սրբավայրերի վրա:

Այնուամենայնիվ, այստեղ երախտագիտությամբ պետք է հիշատակենք անունները Փիլիպոս Ադրակեցի, Հակոբ Ջուղայեցի, Եղիազար Այնթապցի, Սիմեոն Երևանցի, Ղուկաս Կարնեցի հայրապետների, որոնք, առավել կամ նվազ չափով, կատարել են վերակառուցումներ մեր մի շարք պատմական հուշարձանների վրա, երբեմն նույնիսկ նոր մասեր կառուցելով նրանց վրա:

Այսպես, օրինակ, Մայր Տաճարի զանգակատան շինությունն սկսում է Փիլիպոս Ադ-

բակեցին, այն ավարառում է Հակոբ Զուղայեցին: Եղիազար Այնթապցի կաթողիկոսի անվան հետ է կապված Մայր Տաճարի փոքր կաթուղիկեների շինությունը: Փիլիպոս, Հակոբ և Եղիազար կաթողիկոսները, ըստ Առաքել Դավրիժեցու և Սեբեոս կաթողիկոս Երեվանցու «Ջամբռ»-ի վկայության, կատարել են վերանորոգման աշխատանքներ Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի վանքերում: Ս. Հռիփսիմեի զանգակատան շինությունը եղել է Գուկաս Կարնեցու օրով, ինչպես վկայում է զանգակատան արձանագրությունը:

Շինարարական ավելի փոքր աշխատանքներ կատարել են մեր պատմական հուշարձանների վրա նաև այլ հայրապետներ:

Սակայն, հետագա շրջաններում, մանավանդ մեր օրերից առաջ 100—150 տարիների ընթացքում, թվում է, թե Մայր Աթոռը չի կարողացել զբաղվել ճարտարապետական կոթող մեր հին վանքերի և եկեղեցիների վերանորոգության աշխատանքներով: Այդ պատճառով է, որ այդ ժամանակաշրջաններում, պատմական մեր հայտնի սրբավայրերը և հայ ճարտարապետության գոհար նմուշները, ինչպիսիք են Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Ս. Նոդակաթը, Մ. Գեղարդը, Սանահինն ու Հաղբատը, Հաղարծինն ու Հառիճը, Սևանն ու Հովհաննավանքը և տասնյակ այլ հոյակապ հուշարձաններ, մնացել են համարյա անմխիթար վիճակում: Ավելի ծանր հոգսեր կրածք վերջին 100—150 տարիների ընթացքում պատճառ են դարձել, որ հայ ճարտարապետության հարազատ ոճի և պատմական կոթողների նկատմամբ նվազի մասնավոր գնահատանքը և դրանք պահելու և պահպանելու գուրգուրանքը:

Ավելին, այդ ժամանակներում, մեր մի շարք պատմական կոթողները փոքր նորոգություններ անելիս, դժբախտաբար կատարվել են նույնիսկ սխալներ, հայ ճարտարապետական ոճը հարգանությամբ պահպանելու մասնագիտության պակասի հետևանքով: Այսպես, օրինակ, Ս. Հռիփսիմեի տաճարում նման սխալներ կատարվել են շուրջ 70—80 տարի առաջ, տաճարի մասնակի նորոգումների առթիվ: Պատմական տաճարի հարարապետական ընդհանուր կառուցվածքին բոլորովին անհամապատասխան ոճով կառուցվել է նոր սեղան, իսկ տաճարը ներսից ամբողջովին ծեփվել է գաջով, լրիվ խաթարելով այդ գոհար եկեղեցու հարարապետական ներքին նշմարիտ գեղեցկությունը: Նույն սխալները կատարվել են նաև Ս. Գայանեի վանքում, մասնակի վերանորոգումների ժամանակ, համարյա նույն ժամանակներում:

Մխիթարական է սակայն հաստատել, թե վերջին տասնամյակներում արտասահմանի մեջ կառուցված հայկական մի շարք եկեղեցիներ, արդարացիորեն կրում են հայ եկեղեցական հարարապետության հին ոճի ազդեցությունը, օրինակ՝ Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Անթիլիասի Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը, Բուխարեստի հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցին, Փարիզի և Լոնդոնի հայոց եկեղեցիները:

Նույնպես ուրախալի է արձանագրել, որ վերջերս հայկական ոճի պահպանմամբ կառուցվեցին Միլանոյի, Բոստոնի հայոց եկեղեցիները, ինչպես նաև հայկական ոճով պետք է կառուցվեն Նյու-Յորքի հայոց Մայր եկեղեցին և Մոնտեվիդեոյի հայոց նոր եկեղեցին, որի հիմնարկեքը կատարել է Վեհափառ Հայրապետը 1960 թվականի սեպտեմբերին, երբ այցելությամբ գտնվում էր այնտեղ:

Մեր օրերին, հայրենի վերածննդյան նոր պայմաններում, հետզհետե ամրանում է և խորանում ազգային, հարազատ, հին ոճը պահպանելու և վերականգնելու պայծառ գիտակցությունը: Արդարև, որքա՜ն ճշմարիտ է այն միտքը, ըստ որի ոճը ինքը ժողովուրդն է, որպես տվյալ ժողովրդի անհատականությունը և հանճարը նշող արժեք: Անա այս բարձր ըմբռնումով են առաջնորդվում մեր Հայրենիքում արվեստի մարդիկ և մանավանդ հայ հարարապետները ընդհանրապես և Հայաստանի Պատմական հուշարձանների պահպանության պետական կոմիտեն հատկապես:

Այսօր, մեր Հայրենի բարեխնամ կառավարությունը, Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի միջոցով, մեծ գուրգուրանքով պահպանում է մեր պատմական կոթողները և նորոգում դրանցից շատերը: Մինչև այժմ Հայրենի կառավարության կողմից վերանորոգվել են Սանահինն ու Հաղբատը, Մարմաշենը, Կեչառիսը, Գոշավանքը և ուրիշներ:

Այս նույն գիտակցությամբ ներշնչված, մեր հայրենի պատմական մի շարք սրբավայրերի վերանորոգության սրբազան աշխատանքին է ձեռնարկել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրերին:

Արդարև, մեր պատմական սրբավայրերը վերանորոգելու տաճարումը, ենթադրելն հայ հարարապետական ոճը և տեսքը պահպանելու նախանձախնդրությամբ, Վեհափառ Հայրապետի գործունեության և ծրագրերի մեջ կենտրոնական տեղ է գրավել, նրա գահակալության առաջին իսկ օրերից:

Ծանոթ է բոլորիս, թե Վեհափառ Հայրապետը ինչքան մեծ նշանակություն է տալիս պատմական մեր սրբավայրերի վերանորոգության այդ աշխատանքներին, այդ ծրագրերի իրագործումը նամարելով Իր Հայրապետության նիմնական առաքելություններից մեկը:

Դեռևս 1955 թվականի դեկտեմբերի 1 թվակիր Հայրապետական Իր անդրանիկ կոնդակում, որը մի ամբողջական ծրագիր էր Նորին Ս. Օծության ապագա գործունեության, խոսելով պատմական վանքերի, եկեղեցիների, սրբավայրերի վերանորոգման անհրաժեշտության վրա, նավատով և լավատեսությամբ գեղուն, գրում էր. «ՊԻՏԻ ՏՔՆԻՆՔ ԱՊԱ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԶԱՐԴԱՐԵԼՈՒ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ՝ ՎԱՆՔԵՐ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ Ս. ՀՌԻՓՍԻՄԵՆ, Ս. ԳԱՅԱՆԵՆ, ԽՈՐ ՎԻՐԱՊԸ, ՕՇԱԿԱՆԸ, ԳԵՂԱՐԴԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՍՅՈՒՆԵՐ ԿՀԱՆԴԻՍԱՆԱՆ ԵՎ ՀՌՉԱԿՎԱԾ ՏԱՃԱՐՆԵՐԸ ԱՂՈԹՔԻ ԵՎ ՈՒԽՏԻ ԵՎ ՋՄԱՅԼԵԼԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՌՔԻ»:

Մեր եկեղեցին ու ժողովուրդը պետք է երախտագիտությամբ արձանագրեն, որ Վեհափառ Հայրապետը, խոսքից գործի անցնելով, 1956 թվից սկսել է այդ ծրագրի գործադրմանը և շարունակում է այն նամառ նեռնեղականությամբ:

Ինչպես նայտնի է, Վեհափառ Հայրապետի գանակալության նինգ տարիների ընթացքում, ավարտվել է արդեն նիմնական վերանորոգումը Բշնիի եկեղեցու և Ս. Նողակաթի պատմական վանքի: Նուտով կավարտվեն նիմնական վերանորոգումները Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցիների:

Առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում կվերանորոգվեն նաև Ս. Գեղարդի, Խոր Վիրապի և Հաղարծինի վանքերը: Առավելագույնը երկու տարուց նետո ամբողջովին կավարտվեն նաև Մայր Տաճարի վերանորոգումն ու բարեզարդումը: Ինչպես նայտնի է, Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքները սկսվել են 1954—1955 թվականից և շարունակվում են առանց ընդնատման մինչև այժմ:

Այստեղ մի անգամ ևս պետք է կարևորությամբ ընդգծենք, որ վերոնիշյալ բոլոր վերանորոգումների ժամանակ, Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի նաստատապետական նանձնաժողովի շինարարական ծրագրերի մեջ առաջնորդող սկզբունք է դարձած նայկական ոճի նարազատ, ննագույն ձևերը պանպանելու մտածումը:

Գոնունակությամբ պետք է արձանագրենք այստեղ նաև, որ նայկական ննագույն ոճն ու ձևերը պանպանելու մտածումն ու մտանոգությունը, Վեհափառ Հայրապետի անմիջական ցուցմունքներով և նսկողությամբ, տարածվում են կատարված աշխատանքների այլ մարգերի վրա ևս, աշխատանքներ, որոնք ծրագրվում և ի գործ են դրվում Մայր Աթոռում:

Այս ուղղությամբ ևս Նորին Ս. Օծությունը տանում է նետևողական աշխատանք: Հայկական եկեղեցական արվեստների ննագույն և վավերական ձևերի, նարազատ ոճի պանպանումը նետապնդվում է նաև սրբանկարչության և եկեղեցական քանդակագործության և զարդարվեստի մեջ:

Որքան կարևոր է նայկական ոճի պանպանությունը եկեղեցական նարտարապետական կառուցվածքի տեսակետից, նույնքան կարևոր է նայ ոճի պանպանումը սրբանկարչության և քանդակագործության և առնասարակ եկեղեցական արվեստների բնագավառներում: Նույնիսկ եկեղեցական սպասներ, խաչեր, ասեղնագործ ծածկոցներ, Ս. Սեղանի վարագույներ, անհրաժեշտ է որ կրեն նայկական ոճի կնիքը:

Մասնավոր ուշադրության արժանի է բնականաբար սրբանկարչական արվեստի գործը, որը շատ դժվար իրագործելի ձեռնարկ է: Մեր եկեղեցիներում գործածված սրբանկարները մեծ մասամբ, սկսած Ս. Էջմիածնի Մայր Տաճարից մինչև մեր արտասանմանի եկեղեցիները, չունեն նայկական ոճին նամապատասխան դրոշմ: Սրբանկարը, իր բովանդակությամբ, անտարակույս պետք է կապվի եկեղեցական նարտարապետության ընդնանուր ոճի և առանձնանատկությունների նետ: Դրա նամար էլ եկեղեցում կախված նկարը բավական չէ, որ ներկայացնի, օրինակ, Աստվածածնի սրբանկարը գեղեցիկ արվեստով, այլ այդ գեղեցկությունը Հայ եկեղեցու մեջ պետք է կրի դրոշմը նայկական կատարողական արվեստի կերպի և նայ նոգու յուրանատուկ կրոնական զգայնության: Եկեղեցում նավատացյալին չի կարող գոնացնել սրբանկարի լոկ բովանդակությունը, նույնքան կարևոր և էական է, որ այդ բովանդակության գեղարվեստական ներկայացումը իրականացվի յուրանատուկ տոնիկ ոճով: Հայ եկեղեցում սրբանկարի գեղեցկությունը պետք է արտանայտվի նայկական ոճի կերպով, նայ նաշակով, նայկական նոգեբանությամբ: Սրբանկարի մեջ պետք է կարդացվի նայ արվեստի ոճը:

Մեր օրերում, ստեղծագործելու նամար նայկական սրբանկարչության ոճի նամաձայն, անհրաժեշտ է, որ մեր նկարիչները ներշնչվեն նայ մանրանկարչական արվեստից. նայ

ճին ուրանկարներից, ԺԶ—ԺԷ դարերում զարգացած Ս. Սեղանների ոսկեծած վարագույրների ոճից և առնասարակ հայ եկեղեցական արվեստի ճնշագույն ազդեցությունից:

Դեռևս 1957 թվականի հունիս 11 թվակիր Իր նամակում, ուղղված Հալեպի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Մարտիրոս Սարյան» ակադեմիայի պատվարժան վարչության, Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով վերոհիշյալ հարցերին, գրում էր. «Մենք զմեզ պարտական կզգանք հոգածություն և զուրգուրանք ունենալ առնասարակ արվեստների և ի մասնավորի սրբազան նկարչության և երաժշտության նկատմամբ: Տարիներ առաջ, երբ տակավին ուսանող էինք, Բուրբեշի հայ մայսարանի գրասեղաններուն առջև, արվեստի խորհուրդներուն թափանցել կսորվինք, և երբ, ավելի վերջը, հոգևոր կոչումի մը հետևելով, սպասավորը դարձանք մեր փառապանծ Ս. եկեղեցվ, հետզհետե Մեր մտածումի և մտատանջության առարկան դարձավ մեր եկեղեցիներին հետ արվեստի կատարելության հասնող նկարչություն ունենալու իղձը: Պետք է խոստովանինք դառնությամբ, որ մեր եկեղեցիներուն մեջ գտեղված ու հարգված գրեթե բոլոր սրբանկարները, փիլ բացառությամբ, շատ հեռու են նշմարիտ արվեստեն և բոլորովին զուրկ հայկականությենեն: Մենք արտասահման ալ ճիապքափություն մը ունեցանք, տեսնելով, որ մշակույթի մեծ կեդրոններուն մեջ իսկ, հայ եկեղեցիներուն մեջ ունինք սրբանկարներ, որոնք պատիվ չեն բերեր մեր եկեղեցիին և Ազգին: Ասոնց ողորմությամբ, ինչքան ժամանակ, որ այս Ս. Աթոռին վրա գտնվինք, Մեր շինարարական ծրագիրներուն մեջ կեդրոնական տեղ մը պիտի գրավե սրբազան նկարչության հայկական ոճ մը և դպրոց մը ստեղծելու իղձը... Արդ, մեր առաջ դրված հարցն է, մեկնելով մեր ազգային մանրանկարչությենեն, ճարինել մեծ չափերու վրա սրբանկարներ, ըլլա եկեղեցիներու պատերու վրա (ֆրեսկո), ըլլա յուղաներկ կտավի վրա: Անշուշտ դյուրին գործ չէ այդ, որովհետև պարզապես մանրանկարչության չափերը փոխելով, այսինքն մեծցնելով հարցը չի լուծվիր: Մենք կխորհինք, թե բղծալի արդյունքներու հասնելու համար պետք կա երկարատև աշխատանքի, ներշնչումի և նշմարիտ տաղանդի: ...Այս համբով պետք է ընթանալ ամենայն լավատեսությամբ»:

Վեհափառ Հայրապետը քայլ առ քայլ հետապնդում է Իր այս մտածումների կենսագործումը այն անայլայլ լավատեսությամբ, թե այդ ուղղությամբ ի գործ դրված ջանքերը իրենց արդյունքները կտան առաջիկա տարիների ընթացքում:

Նույն սկզբունքով և ոգով առաջնորդված, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում հիմնել է հայ եկեղեցական արվեստի արվեստանոցներ, որտեղ, ինչպես անցյալի մեր հին վանքերում, պատրաստվում են հայկական ոճով խաչքարեր, եկեղեցական սպասներ, քանդակական և վարդապետական լանջախաչեր, ձեռաց խաչեր, վարագույրներ, եկեղեցական զգեստներ:

Ստորագրված է և պատվիրված հայկական ոճով 30 գորգերի պատրաստությունը՝ նատկապես Մայր Տաճարի գործածության համար:

Մեր գործարար Հայրապետի բոլոր այս ձեռնարկները և մանավանդ եկեղեցական արվեստի վերաբերյալ ամեն գործի մեջ հայկական ոճի պահպանման կենտրոնական մտածումը մեզ բոլորիս խանդավառում է և ոգեշնչում: Մենք մեզ զգում ենք մեր պապերի հոգու մթնոլորտի մեջ, նրանց մտածումների և զգայնության մեջ, ասվածային գեղեցկությունը ընկալելու և արտահայտելու նրանց ապրումների կատարների վրա:

Մեր նախնիք անհուն զոհողությամբ կառուցել և մեզ ավանդ են թողել պատմական այդ հուշարձանները, տաճարներ և եկեղեցական արվեստի զմայլելի նմուշներ: Դուրգուրա՛նք դրանց վրա, պահելով դրանք որպես հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդի նվաճումները, հարազատությամբ գալիք սերունդներին փոխանցենք պատմական այդ կոթողները, որոնցից յուրաքանչյուրի վրա կա հայ հանճարի անջնջելի շունչն ու կնիքը:



ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԸ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԶԱՔԱՐՅԱՆ ԵՎ ՊՈՌՇՅԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԴ ԴԱՐՈՒՄ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

ԲՋՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾ 1031 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

ԴԱՐԵԳԻՆ ԴԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԸ

«Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։

ՄԱՏԹ. Դ 17

Ա.

Պարգևության հոգևոր բոլոր նշանավոր առաջնորդներն ու մարգարեները ապաշխարության քարոզով են սկսել իրենց գործը։ Ապաշխարության են ենթարկվել նախ իրենք անապատի և առանձնության մեջ, խորասուզվել են իրենց հոգու խորին խորանները, սրբություն սրբոցը, զտել են իրենց Աստծուն և նորա պարգևած ճշմարտությունը և ապա վերածնված և մկրտված հանդես եկել պատմության մեջ՝ իրենց սրբազան առաքելությունը կատարելու։ Այսպես էր և մեր կյանքի առաջնորդը՝ Հիսուս Քրիստոս։ Անապատի մեջ ըստ ավետարանական ավանդության քառասուն օր և գիշեր ծոմապահությամբ, տքնությամբ և աղոթքով հաղթել էր չարին, ոչնչացրել նորա զորությունը և իջել Հորդանան, ներքին մկրտության հետ լվացվելու նաև սրբազան դետի ջրերի մեջ։ Այս ամենից հետո միայն նա հանդես է գալիս, սկսելու յուր փրկչական գործունեությունն ու ավետարանական քարոզությունը. և առաջին խոսքը, որ դուրս է գալիս նորա ստրք և օրհնությամբ լի բերանից, ապաշխարության խոսքն էր։

Քրիստոնեական բոլոր հին և նոր եկեղեցիները Փրկչի կենդանի օրինակին և քարոզության հետևելով՝ ապաշխարության գաղափարը հոգևոր փրկության էական պայման են ընդունել և որոշ օրեր նշանակել այդ նպատակի համար։ Արևելյան հին եկեղեցիների հետ՝ Հայոց Եկեղեցին ևս Քառասնորդական պահոց օրերը հատկացրել է ապաշխարության։ Եկեղեցին յուր սրտաշարժ հոգևոր երգերով, ընթերցվածներով, արարողություններով հոտին ապաշխարության է հրավիրում, իհարկե ոչ այն մտքով, որ տարվա մնացած ժամանակը ազատ համարենք մեզ ամեն տեսակ մեղքեր և անիրավություններ գործելու այն հույսով, թե ապաշխարության օրերին կհիշենք և թողություն կստանանք։ Քրիստոնեի կյանքը մշտական ապաշխարություն պիտի լինի իսկապես։ Ապաշխարությունը որպես հոգեկան, ներքին գործողություն բխում է զղջացողի սրտից, ուրեմն և որոշ ժամանակ չի կարելի նշանակել և պահանջել, որ ապաշխարես։ Ժամանակ կարելի է նշանակել արտաքին գործողության համար, բայց ոչ ներքին աշխարհի։ Բայց և այնպես մի խորիմաստ կարգադրություն է մեր հայրերի կողմից, որ Մեծի պահոց օրերը ապաշխարության են նվիրել։ Առօրյա կյանքը յուր բազմաբովանդակ պահանջքներն ու զբաղումներն ունի, և եթե կյանքի ծանր հոգսերի բեռների տակ պարտազանց ենք գտնվել կամ հնարավորություն չենք ունեցել մեր ներքին աշխարհով զբաղվելու, ապաշխարության հատուկ օրերը պետք է հիշեցնեն

մեզ մեր զանցառությունները։ Ապաշխարությունը հոգևոր հաշվետվությունն է մեր խղճի և Աստուծու առաջ։ Հաշվապահության կանոններից մեկն է տարեվերջին մատյանները քննության և ստուգության ենթարկել։ այդպիսի ստուգության պիտի ենթարկել այս ապաշխության օրերում ոչ միայն մեր արտաքին գործողությունները, այլև նրանց ներքին ծածուկ շարժառիթներն ու պատճառները։ Պետք է շտկենք մեր բարոյական թերություններն ու սխալները, եթե չենք կամենում պատասխանատվության ենթարկվել այն արդար Դատավորի առաջ, որ քննել կարող է մեր սրտի և հոգու խորին խորհուրդներն ու գաղտնիքները։

Մարդկային բնությունն առհասարակ հասկված է դեպի աշխարհայինն ու մարմնավորը, և այս հակումն է, որ մեր քայլերը դեպի մեղքն ու կորուստն է ուղղում։ Մենք շատ հեշտությամբ ենթարկվում ենք ժամանակավոր հաճույքների և բավականությունների հրապույրներին, երբ մանավանդ ներքին, ընդդիմադիր բարոյական զորությունը անհաստատ է մեր մեջ։ Ինչպես շրջմոլիկ հուրը փայլում է ճահիճների մեջ, այնպես էլ մարմնական հրապույրներն ու աշխարհային ցանկությունները դրավում են մեզ դեպի բարոյական կորուստը, որի ճանապարհը լայն է և ազատ։ Մեկին հրապուրում է զգայական վայելքը, մյուսին երկրավոր բարիքն ու ստացվածքը, երրորդին փառքն ու պատիվը, և եթե թույլ ենք տալիս, որ այս զգացումները կատարելապես տիրապետող դառնան մեր հոգևոր աշխարհում, մեղքի շղթան արդեն պատրաստ է մեզ համար։ Նյութական ամենայն հիվանդություն պետք է խեղդել յուր սաղմի մեջ. նույն կանոնը պետք է գործադրել նաև բարոյական հիվանդությունների դեմ. անփութության առաջին քայլերն իրենց հետևանքներն ու պտուղներն են տալիս և վարակիչ հիվանդության սաղմերը բազմանալով, հոգևոր մահ պատճառում։

Ապաշխարությունը հոգևոր բժշկության առաջին պայմանն է։ Որովհետև ապաշխարել նշանակում է հետ դառնալ մարմնական հակումների թելադրած ճանապարհից և հոգևոր, փրկարար մի նոր ճանապարհ ընտրել, որ դեպի Աստված և նորա սրբության խորանն է տանում։ Ապաշխարել նշանակում է սրբել մեր մեղավոր միտքը, հոգին, նորոգվել ներքուստ։ Ապաշխարության

Բ

նպատակն է կյանքի ճահիճներից հանել մարդկանց, և նոր արարած շինել։ Անընդհատ աշխատանք և տքնություն է հարկավոր այդ ներքին փոփոխությունը կամ վերածնությունը հառաջ բերելու համար։ Ապաշխարություն և վերածնություն հոմանիշ գաղափարներ են Ավետարանների մեջ, երկուսն էլ միակ պայմանը նոր կյանքի և թագավորության քաղաքացիներ դառնալու համար։ Պետք է խորասուզվենք մեր ներքին աշխարհի մեջ, վերլուծության ենթարկենք նորա շարժումներն ու ելևէջները և անողոք պատերազմ հրատարակենք մեր եսական, սիրո զգացմունքից զուրկ հակումների դեմ, որովհետև շարիքի բոլոր արմատը այդտեղ է, շատ խորը նստած մեր հոգու մեջ։ Զորեղ է թշնամին և ներքին, ուստի և նորա դեմ՝ պիտի զինենք և մեր բարոյական բոլոր ուժերը։ Արտաքին միջոցներն անզոր են նորան արմատախիլ անելու։ Հին ճգնավորներն ու անապատականները փախչում էին աշխարհից նորա ապականություններից և մոլություններից ազատ լինելու համար, ծեծում էին իրենց մարմինը, քաղցած և ծարավ էին մնում մարմինը ճնշելու և դորա հետ նորա մեղավոր հակումները խեղդելու նպատակով, բայց իզուր։ Պատերազմը ներքին է և միայն ներքին զենքերով կարող ենք մաքառել հակառակորդի դեմ։ Այդ ներքին զենքը ապաշխարությունն է, զղջման և դարձի զգացումը, ինքնաքննադատության և ներքին հաշվետվության մի անընդհատ մարզություն, որ հետզհետե զորացնում է իշխելու մեր վատ հակումների վերա, զսպելու և սանձահարելու մեր բարոյական թերությունների հակամետ բնությունը։

Ներքին պայքարման ժամանակ հաճախ զգում ենք մեր կամքի թուլությունը, մենք կցանկանայինք, որ անընդունակ լիներինք ստության, կեղծիքի, որ միայն բարին, վսեմն ու ազնիվը թագավորեն մեր սրտում, մենք կկամենայինք, որ եսականն ու շահասիրականը, ընչաքաղցությունը, զգայական և աշխարհային վայելքի սերը բնավ տեղ չունենար մեր սրտում, որ մենք ուրիշ կերպ ստեղծված լիներինք, առանց մեղավոր հակումների, բայց մեր հոգու հատկությունների ավելի լուրջ և ուշադիր քննությունը համոզում է ընդհակառակն, որ լավագույնն այդ է։ Դժվարությամբ և աշխատանքով ձեռք

Գ

բերված բարիքն է գնահատելի, վտանգավոր պատերազմից յուր քաջությամբ հաղթական դուրս եկած զինվորն է գովության արժանին։ Հրեշտակային մաքրությունն իսկ գին չունի, եթե փորձության, տագնապների, տանջանքի բովից անցած չէ։ Նավապետի հմտությունն ու ճարտարությունը փոթորկի ժամանակ է երևում։

Մի նշանավոր քարոզիչ հետևյալ միտքն է արտահայտում այդ մասին. «Եթե Աստված երևար ինձ և ասեր. «Կկամենա՞ս փոխեմ ես մարդկային բնությունդ և հրեշտականման դարձնեմ, անմեղ», կասեի. «Ո՛չ, Տե՛ր, թո՛ղ ինձ իմ մարդկային հատկություններով, միայն չմեռնի մեջս սայթաքումներից և անկումներից գիտակցության գալու զգացումս և բարձրանալու ձգտումն ու տենչը»։

Ուրացող Պետրոսը չզրկվեցավ յուր առաքելական պատվից, երբ երիցս ուրացավ յուր տիրոջ. աքաղաղի ձայնը սթափեցրեց նորան, և իրեն նայող Տիրոջ աչքերի մեջ տեսավ թախծությամբ լի հանդիմանությունը, բայց և ներողության և թողության նշանները. «Ես ելաց դառնապէս», ավելացնում է ավետարանիչը։ Գիտակցության գալու և զղջման արտասուքն էր, առաքյալի հոգևոր մկրտության ավազանը։

Մարդս բոլորովին անզոր չէ մեղքի և վատ հակումների զորության առաջ։ Մեր մեջ կա նույնպես մի ա՛յլ հակադիր զորություն՝ բարվո զգացում և խղճի ձայն։ Մենք զգում ենք, թե ո՞րն է բարոյապես գեղեցիկն ու ճշմարիտը, մեր խղճի ձայնը անկաշառ և անողոք կերպով ազդարարում է մեր սխալներն ու հանցանքները. պետք է միայն նորան լսել և հնազանդել սովորենք։

Բարվո զգացումն ու խղճի ձայնը դատապարտության են ենթարկվում և նողկանք ներշնչում դեպի մեր եսականությունը և նորա հետ կապված բոլոր մեղավոր գործողությունները, մենք զգում ենք մեր տկարությունը և ապավեն ենք որոնում բարոյապես ավելի բարձր հեղինակություններին մեջ։ Այս զգացումն է, որ մեղավոր կնոջը Հիսուսի ոտքերը ձգեց, որ կեղեքող Զաքեոսին բարեգործ դարձրեց, որ, ուրիշ խոսքով, նրանց ապաշխարող դարձրեց։ Մենք ևս Նորան պիտի դիմենք, մեր բարի նպատակին, կյանքի ալեկոծության ժամանակ, ինչպես ծովում խեղդվող Պետրոսը։

(«ԴԵՊԻ ԼՈՒՅՍ ԵՎ ԿՅԱՆՔ», Անթիլիաս, Լիբանան, 1947 թ.)



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի հերթական նիստը, որտեղ քննության առնվեց Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի վանքերի շրջապատների բարեկարգման հարցը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ, ՈՒՐԲԱԹ երեկոյան, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց Մեծ պահոց առաջին հսկումի արարողությունը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, տեղի ունեցավ հերթական գրական-գեղարվեստական երեկո։ Ուսանողների ուժերով կատարվեցին երգեր և արտասանություններ։ «Գիտության մասին» թեմայով հանդես եկավ Գ լսարանի ուսանող բարեշնորհ Հակոբ Սարկավագ Գյոկչյանը։

Գրական երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Վեհափառ Հայրապետի մեկնումից հետո, ցուցադրվեց դաստիարակչական բնույթի կինոնկար։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ, ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ «Հայր մերս»-ից առաջ քարոզեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը՝ «Եւ ասաց Աստուած՝ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեանս բնաբանով (Ծնն. Ա 26)։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն Պլովդիվի թեմական խորհրդի վերջերս վախճանված ատենապետ Գևորգ Կարապետյանի և Սոֆիայի թեմական խորհրդի անդամ Լևոն Մեծատրյանի հիշատակին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 22-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսություն կարդաց Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս, ֆիզիկոս, դոցենտ Երեմ Ադամյանը՝ «Սովետական արհեստական արբանյակները» թեմայի շուրջ։ Դասախոսությունը լսվեց խորին հետաքրքրությամբ։

Վեհափառ Հայրապետը ներկա էր դասախոսության։

Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը ներկաների կողմից ջերմ շնորհակալություն հայտնեց դասախոսին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիպում, վերջերս Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակույթի կապի հայկական ընկերության հրավերով, ուխտավորաբար Մայր Հայրենիք ժամանած, Հռոմի կոնսերվատորիայի ուսանող, երիտասարդ երգիչ Խաչատուր Պիլիկյանի հետ։

Հարգելի հյուրին ներկաներին ծանոթացրեց Հոգևոր Ճեմարանի եվրոպական երաժշտության դասատու Հրանտ Գևորգյանը։ Այնուհետև ներկաների առաջ հանդես եկավ խոստումնալից երգիչը՝ սիրված օպերաներից մի քանի արիաների հաջող կատարմամբ։

Երիտասարդ արվեստագետը խոր ապրումով կատարեց նաև Կոմիտաս վարդապետի «Կոռունկ»-ը, «Հայաստան երկիր դրախտավայր»-ը և Սաթոյի արիան՝ Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից։

Դաշնամուրի վրա երգչին ընկերակցում էր դաշնակահարուհի տիկին Նելլի Դանիելբեկը։

Համերգին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ, ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարութիւն վարդապետ Մատենչյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը՝ «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո» բնաբանով (Ղուկ. ԺԵ 18)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, թեմական-կազմակերպչական գործերով Մայր Աթոռ ժամանեցին Բաքվի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և Շիրակի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաջիրյանը։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել թեմական առաջնորդներին։

Առաջնորդ վարդապետները վերադարձան իրենց թեմերը երկուշաբթի, մարտի 6-ին։

❁❁❁

ՄԱՐՏԻ 1-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի դահլիճում, երեկոյան ժամը 4-ին, իր երկրորդ դասախոսությունը կարդաց ֆիզիկոս Երեմ Ադամյանը՝ «Տիեզերքի կառուցվածքը» թեմայի շուրջ։

Սույն դասախոսությունը ևս ուսանողության կողմից լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Վերջում հարգելի բանախոսին ջերմ շնորհակալություն հայտնեց վերատեսուչ օրրաղանը՝ շահեկան դասախոսության համար։

Դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 5-ԻՆ, ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը՝ «Եւ ես ձեզ ասեմ, Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցի այն, ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս» բնաբանով (Ղուկ. ԺԶ 9)։

❁❁❁

ՄԱՐՏԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում քահանայական ձեռնադրություն կատարեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։ Քահանա ձեռնադրվեց Հոգևոր Ճեմարանի 1959 թվականի շրջանավարտ ուրարակիր Ծոլակ Աղաջանյանը, խարտավիլակությամբ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի։ Ձեռնադրող սրբազանը խոսեց բովանդակալից խրատական իր աշակերտ և ձեռնասուն Տ. Ղևոնդ քահանայի ձեռնադրության և օծման ուրախ առիթով։

Նորընծան իր քառասունքը կանցկացնի Մայր Աթոռում։

❁❁❁

ՄԱՐՏԻ 7-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի հերթական նիստը, որտեղ քննության առնվեցին Ս. Գայանեի տաճարում կառուցվելիք Ս. Սեղանի նախագիծը, էջմիածնի վանքի պարսպի արևելյան դարբասի վերակառուցման և Ս. Գեղարդի վանքում էլեկտրականի հաստատման և էլեկտրականի վայրի հարցերը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 13-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում կայացավ Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի նիստը, նվիրված Վեհարանի նոր շենքի սրահների ներքին ձևավորման հարցերի քննարկմանը։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՎԵՀՍՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԻ ԱՌԹԻՎ

Մեր հավատացյալ ժողովուրդին հոգեկան վայելքին համար հոս կդնենք հոգեշունչ քարոզը Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Բ շնորհազարդ Կաթողիկոսին Ամենայն Հայոց, զոր խոսած է ան Ամերիկյան ցամաքամասի ասպնջական ու ազնիվ երկիրներու մեջ ցրված իր հոտին հովվապետական շնորհաբեր այցելութենե դարձին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ, 9 հոկտեմբերի կիրակի օրը։

Քարոզին մեջ հայտնապես Վեհափառը կխոսի իր լավագույն տպավորություններու մասին, զորս ստացած է իր հայրենակարոտ պանդուխտ զավակներեն։ Մխիթարված ու մխիթարած, քաջալերված ու քաջալերած է Ան միանգամայն, ու այժմ, լավատես և հուսալից, իր ակնարկը մարգարեական՝ սեեռաբիր ապագային, կտեսնե հայությունը ամբողջ միացած իր Ս. Եկեղեցիին մեջ և Հայրենի սրբազան հողին վրա։

Հավատք, հույս կտոգորեն մեն մի բառը Իր խոսքին։ Սերը Իր ժողովուրդին և անոր սրբազան ավանդներուն կխանդավառեն զինք Իր գործին և Իր սրբազան առաքելության մեջ։ Կանչն է նորեն հայկական և անշահախնդիր, որ կպոռթկա Իր տառապող հոգիեն դարձին ուղեկորույս զավակներուն։

Ամեն բաժանում ազգային հավաքական մարմնեն՝ դատապարտելի է իր բնությամբ իսկ, որքան ալ արդարացի նկատվին շատ անգամ զայն ղեկավարող դրդապատճառները։ Մենք գիտենք, որ ազգի մը կյանքը կղեկավարվի անհրաժեշտ հոգեկան ուժերով, որոնք կգերանցնին սահմանները տրամաբանության և օրենքներու։

Վտանգներու դեմ կենալու մեր ժողովուրդին իմաստությունը կուգա իր դարավոր պատմության փորձառություններեն։ Շատ բան զոհեցինք՝ հասկնալու համար միության և սիրո կյանքի բարերար ազդեցությունը մեր կյանքին հավերժացման տեսակետեն։ Գործենք այնպես, որ մեր աշխատանքները ամեն ուղղությամբ դան միևնույն նշանակետին վրա։ Այդ նշանակետը մեր Հայրենիքն է, ուր պիտի իրականանան բոլոր արդար և ազնիվ երազները մեր ժողովուրդին։ Հայրենիքի հողին վրա բարձրացած ամեն սրբություն, մանավանդ Ս. Էջմիածինը իբրև կոթողացումը մեր հոգեկան տենչերուն և հավատքին, պետք է ըլլա գուրգուրանքի և սիրո առարկա ամեն մեկ հայու։

Անցյալեն դեպի ապագա նետվող ժամանակի գետին վրա ոսկեկամուրջն է ան, մեր Ս. Եկեղեցին, որ անվտանգ պիտի առաջնորդե իր զավակները դեպի իրականացումը մեր իդեալներուն։ Ջխորտակենք անոր սյուները ներքին անշահ վեճերով։ Պատսպարված է հայու հոգին անոր կամարներուն ներքև։ Բերդն է ան, զոր բերդապահները պետք է պաշտպանեն ոգի ի բռին, միախորհուրդ, միակամ և միասիրտ, եթե կուզեն վերապրիլ աշխարհի շարիքեն։ Անկե ներս տիրող անհամաձայնություն, որ կագն ու կռիվն է ընտանիքեն ներս, փլուզումը պիտի ըլլա մեր կյանքի շենքին, ինչպես մեր բոլոր երազներուն։

Մենք կհավատանք, որ ի վերջո պիտի լռեն անձնական, հատվածական աղմուկները կիրքերուն և մեր ժողովուրդը՝ իմաստնացած դարերու իր փորձություններեն, պիտի կարենա ստեղծել ներդաշնակ համանվագը հայության, սիրո, խաղաղության և աղատության բաղձալի մթնոլորտին մեջ աշխարհի բոլոր եղբայրացած ժողովուրդնե-

բու Քրիստոնեական կրոնին տեսլականն է անիկա, և որուն առաջնորդող միակ լուսավոր ճանապարհը խաչյալ Քրիստոսին վարդապետությունն է, անկասկած, որ եկեղեցիին հավիտենականության հիմերը կդնե։

Ընթերցումը Վեհին քարոզին, իր լավատես ոգիով և հեռահայաց իմաստությամբ, մեզ խորհիլ պիտի տա պահ մը մեր արտասահմանյան փոքրակլից կյանքին վրա, միաժամանակ մեզ լիացնելով հույսովը վերջնական փրկության մեր հոգիին և մարմնին, մեր ամբողջական գոյության ուրիշ խոսքով։ Փոքրիկներուն դիմաց, նախախնամության բարի սահմանումով, անմար կեցած է հայուն հավատքին կանթեղը, իբրև փարոս, լի արցունքովը Ս. Լուսավորչին Արագածի բարձունքին՝ որուն ուղղած մեր նայվածքները, մեր բազուկները պիտի զորանան մեր հոգնաբեկ նավարկումներուն մեջ, ու պիտի գոտեպնդվի կամքը, հույսով ու հավատքով պիտի ամրանա հոգին և վերջնական հաղթանակին համար, որ իրականացումն է մեր ժողովուրդի դարերով փայփայած և արյան ի գին պաշտպանած երազներուն։

ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏՅԱՆ
(Բուենոս-Այրես, «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ» ամսագիր, դեկտեմբեր, 1960 թ.)։

ԿԱՀԻՐԵՈՒՄ ԿԿԱՌՈՒՑՎԻ ԲԵՅՆ-ԷԼ-ՍՈՒՐԵՅՆԻ ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՈՒՐԸ

Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, պաշտոնական մի հաղորդագրության մեջ, հայտնում է, որ Եգիպտոսի կառավարության 19 նոյեմբեր 1960 թվակիր պաշտոնագրով արտոնություն է տրվել Կահիրեում, Բեյն-էլ-Սուրեյնի հայոց նախկին Ս. Աստվածածին եկեղեցու տեղը կառուցել մի նոր մատուռ, ամեկ դարե ավելի մեր ժողովուրդին իբրև աղոթատեղի ծառայող նախկին Ս. Աստվածածին եկեղեցիին տեղին վրա, որուն կամարներուն տակ պիտի շարունակեն հանգչիլ Եգիպտոսի առաջին բազմաշխատ առաջնորդին՝ Գաբրիել սրբազան եպիսկոպոս Մարաշցիի նշխարները։

ՊԵՐԻՍՏԵՐԻԻ (ԱԹԵՆՔ) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Հունաստանի հայոց թեմական խորհուրդը, Վեհափառ Հայրապետին ուղղված իր 22 հունվար թվակիր պաշտոնական գրությամբ հայտնում էր, որ Պերիստերիի (Աթենք) հայոց Ս. Աստվածածին եկեղեցին վերադարձվել է Աթենքի հայոց եկեղեցու օրինավոր իշխանության և Ս. Էջմիածնի հավատարիմ ժողովրդին։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻ Ի ՊԱՏԻՎ ՀԱԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ-ՀԱՆԴԵՍ

Եպիսկոպոսական ձեռնադրության 25. ամյակին և դոկտոր աստվածաբանության պատվակալ տիտղոսի ստացման առթիվ, գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիսկոպոս Գալֆայանին ի պատիվ հոկտեմբեր 23, կիրակի երեկո ժամը 6-ին սարքվեցավ շքեղ ճաշկերույթ-հանդես մը, Նյու-Յորքի Ստարլեր-Հիլտոն Հոթելի Կոնգ Բոլրում սրահին մեջ։

Ճաշկերույթ-հանդեսը, որ կվայելեր առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի նախագահությունը, կազմակերպված էր ծանոթ պատվական ազգայիններու կողմե, ատենապետությամբ տիար Ալբերտ Մարտիրոսյանի։

Ընթրիքը սկսավ Ամերիկյան Ազգային Հիմնով, զոր երգեց տիար Եդվարդ Գառնիկյան, և օրհնությամբ թեմական սրբազան հոր։

Հավարտ ճաշի, տիար Ալբերտ Մարտիրոսյան գեղեցիկ ուղերձով բացավ հանդեսը, զոր ձեռնհասորեն վարեց հարգված փաստաբան տիար Տիգրան Սմսարյանը։

Խնամքով պատրաստված ելույթներով հոբելյար սրբազանի ձիրքերն ու գործերը դրվատեցին առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, արժանապատիվ Տ. Բաբգեն քահանա Մազուտյան, արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Գուզուլյան, վերապատվելի Ա. Ա. Պետիկյան, կանոնիկոս Ուեստ, որ միանգամայն կարդաց Սքեյֆ եպիսկոպոսի ուղերձը, անոր բացակայության հետևանքով, դոկտ. Փայլածու Կուտյան-Հերյան, տիար Սուրեն Մանվելյան և Լոդ Շահրազյան։

Բարեբաստիկ այս առիթով Մամբրե սրբազան ստացավ բազմաթիվ խնդակցական և շնորհավորական հեռագրեր և նամակներ պաշտոնական անձերե և բարեկամներե։ Վեհափառ Հայրապետը իր շնորհավորական հեռագրին մեջ գրած էր.

«Ձեր սրտով կշնորհավորեմ Ձեզ, սիրելի՛ Սրբազան Եղբայր, և Ս. Էջմիածնե կեղեմ Ձեզ Մեր սիրո ողջույնը և օրհնությունը. գնահատելով Ձեր ազնիվ ու անձ-

եվեր բազմամյա ծառայությունը եկեղեցիին և հավատարմությունը Մայր Աթոռին։

Ողջ լեռուն, գոռացյալ Սուրբ Հոգվով»։

Իրենց մեներգներով հանդեսին փայլ տվին շնորհալի երգչուհի երեցկին Մայրենի Տանիկյան և սիրված երգիչ Մարտիրոս Քյոշեյան, դաշնակի ընկերակցությամբ տիկին Ալիս Պալայանի։ Տիկին Արտեմիս Տարսոն կարդաց պատշաճ բանաստեղծություն մը։

Ամենեն հետո, հոտնկայս, խանդավառ ծափերու մեջ Մամբրե սրբազան շնորհակալություն հայտնեց ներկաներուն, հոբելյանական հանձնախումբին, խոսողներուն, երգողներուն և մամուլին, զինքն ու իրմով Հայաստանյայց Եկեղեցին պատված ըլլալնուն համար։

Ներկաներու զվարթ տրամադրության ներքև, ճաշկերույթ-հանդեսը վերջ գտավ Տերունական աղոթքի երգեցողությամբ և առաջնորդ սրբազան հոր աղոթքով, երեկոյան ժամը 11.30-ին։

ՄՅՈՒՌՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԴ. ԿՌՃԻԿՅԱՆ
(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ».
դեկտեմբեր, 1960 թ.)։

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ԵԹՈՎՊԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿՈԼԵՋԻՆ

Եթովպական աստվածաբանական հաստատությունը հիմնված է տարիներ առաջ։ Այս հաստատությունը ունի իր նախակրթարանի, երկրորդական վարժարանի և կրոնուսույց-ուսուցչանոցի բաժինը, շուրջ 500 աշակերտներով։ Իր հասցուցած ուսուցիչներով ան մեծապես սատարած է արդի Եթովպիո հառաջդիմության։

Հայլե Սելասիե կայսրը և Եթովպական եկեղեցվո իշխանավորները գաղափարը ունեցան այս հաստատությունը բարձրացնելու կրոնական համալսարանի մը մակարդակին, այսպիսով զայն դարձնելով կեդրոնը Ուղղափառ Միաբնակ եկեղեցիներուն։ Ջորս տարվան դասընթացքն մը վերջ՝ շրջանավարտները պիտի ստանան Պսակավոր Աստվածաբանության տիտղոսը։

Ահա այս համալսարանին վերատեսչությունը և իր հարակից հաստատություններուն նախագահությունը ստանձնելու համար է, որ հրավիրվեցավ Դերենիկ սրբազան, բարեհաճ թույլտվությամբ Կիլիկյան միաբանության պետ ամենապատիվ Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանի։

Այս իրողության մեջ վերստին արտահայտություն. կգտնե Հայ և Եթովպական եկեղեցիներուն միջև գոյություն ունեցող պատմական սերտ հարաբերությունը։

ՀԱՆԴԻՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ

Հունվարի 26-ին ի Տեր հանգյավ Բոմբեյի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Սահակ քահանա Այվազյանը։

Հանգուցյալը ծնվել էր Իրանի Ղարզուն գյուղում 1892 թվականին և իր կրթությունն ստացել Նոր-Ջուղայի ազգային Քանանյան դպրոցում։ Երկար տարիներ նա զբաղվել էր ուսուցչությամբ։

1920 թվականին քահանա է ձեռնադրվել Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքում, Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի ձեռքով։ Հանգուցյալը քահանայագործել է նախ իր ծննդավայրում, ապա Իրանի հայկական գյուղերում։ Նրա պաշտոնավարության վերջին կայանն է լինում Բոմբեյը։

Հանգուցյալը 40 տարի ծառայել է իր եկեղեցուն և ժողովրդին, թե՛ Իրանի և թե՛ Հնդկաստանի հայ համայնքներում։ 1958 թվականին, մատուցած ծառայությունների համար, Վեհափառ Հայրապետի կողմից պարգևատրվել է քահանայական լանջախաչով։

Հանգուցյալի վերջին օծումն ու թաղման կարգը կատարել է Հնդկաստանի և հեռավոր Արևելքի թեմի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, մասնակցությամբ Տ. Պողոս քահանա Պետրոսյանի։

Հանգի՜ստ նրա հոգուն և աճյունին։

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏՈՐ ՋԵՈՖՖՐԻ ՖԻՇԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔՈՒՄ

Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերը, դեպի Ս. Երկիր կատարած իր ուխտագնացության առթիվ, 1960 թվականի նոյեմբերին, այցելել է նաև Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքը։ Նորին Սրբությունը հանդիսավորապես առաջնորդվել է Մայր Տաճար՝ Սրբազան Պատրիարքի և միաբանության կողմից, ապա Հայոց Պատրիարքարանում զրույց է ունեցել Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքի հետ և ցանկություն է հայտնել, Ամենայն Հայոց Հայրապետի գիտությամբ և ցանկությամբ, հարմար դատված ժամանակ, Հայ և Անգլիկան եկեղեցիների միջև աստվածաբանական զրույցներ սկսել, ինչպես որոշվել էր 1956 թվականին, երբ Վեհափառ Հայրապետը, Լոնդոն այցելելիս, եղել էր Հյուրը Քենտրբերիի Արքեպիսկոպոսի։

Ուրախությամբ հրատարակում ենք Անգլիկան Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությանց խորհրդի 1961 թվականի հունվար 19 թվակիր նամակը ուղղված Վեհափառ Հայրապետին, որտեղ խոսվում է Քենտրբերիի Արքեպիսկոպոսի՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին տված այցելության, արտասանած ճառի, ինչպես նաև Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև աստվածաբանական զրույցներ սկսելու անգլիկանների ցանկության մասին։

«Զերդ Սրբություն.

Քենտրբերիի Արքեպիսկոպոսի հետ Երուսաղեմ կատարած մեր ուխտագնացությունից վերադարձին, Նորին Սրբազնությունը խընդրեց Երուսաղեմում, Սրբոց Հակոբյանց Հայոց Պատրիարքարանում արտասանած իր պաշտոնական ճառի պատճենը ուղարկել Ձեզ։

Նորին Ամենապատվություն Եղիշե Պատրիարքի հետ ունեցած իր զրույցի ընթացքում, Նորին Սրբազնությունը իր գոհունակությունը և ուրախությունը հայտնեց իմանալով, որ շարունակվում են բարի հարաբերությունները Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և Ս. Էջմիածնի Կաթողիկոսության միջև։ Նա նշեց նաև անգլիկանների ցանկությունը աստվածաբանական զրույցներ սկսելու Հայ Ուղղափառ Ս. Եկեղեցու հետ, երբոր հաճո է Զերդ Սրբության։ Այսպիսի հնարավորությունը քննարկվեց, ինչպես կհիշեք, Զերդ Սրբության 1956 թվականին Լոնդոն կատարած այցելության ժամանակ։

Երուսաղեմից մեկնելուց հետո, երբ կարճատև մի այցելություն կատարեցինք Բեյրութ՝ իբրև հյուրը Հույն Օրթոդոքս Միտրոպոլիտի, Քենտրբերիի Արքեպիսկոպոսը հանդիպում ունեցավ Սիսի Կաթողիկոսի հետ։ Նորին Սրբազնությունը հույս հայտնեց, որ Սիսի և Էջմիածնի միջև գոյություն ունեցող այժմյան պառակտումը շուտով կդարմանվի։ Քենտրբերիի Արքեպիսկոպոսն ասաց, որ անգլիկանները ամենուրեք աղոթում են այդ պառակտման վերացման համար և հույս ունի, որ շուտով խաղաղություն և համերաշխություն կհաստատվի Հայ Եկեղեցու կյանքում։ Արքեպիսկոպոսը պատմեց Կաթողիկոսին, թե ինքը ինչպիսի ուրախությամբ է ընդունել Զերդ Սրբության այցելությունը Անգլիա 1956 թվականին։ Նորին Սրբազնությունը ասաց, թե ինքը հուսով է, որ Աստուծո շնորհիվ, ժամանակի ընթացքում կարող կլինենք քրիստոնեական սիրով հանդիպումներ ունենալ՝ մեր երկու եկեղեցիների միջև վարդապետական խնդիրներ քննարկելու համար, երբոր Զերդ Սրբությունը հավանի։

Համայն Ձեր Եկեղեցու համար աղոթքներով և բարեմաղթություններով, մնամ Ձեզ հանդեպ անկեղծ և հարգալիր ի Քրիստոս՝

ՋՈՆ Ռ. ՍԱՏԵՐԹՈՒԵՅՏ

Քարտուղար Անգլիկան Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությանց խորհրդի

ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱՌԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Եղիշե Պատրիարքին Հայոց, Սրբոց Հակոբյանց վանք, Սիոն լեռան վրա.

Պատիվ է ինձ համար ընդունվել Ձեր Ամենապատվության, Սրբոց Հակոբյանց Ձեր միաբանության եղբայրների կողմից, այստեղ, Երուսաղեմում, Սիոն լեռան վրա, Ձեր Պատրիարքարանում։ Հաճույքով եմ հիշում Ձեր այցելությունը Լոնդոն 1955 թվականին և ուրախ եմ, որ կարողացա այցելել Ձեզ այստեղ։ Ձեզ բոլորիդ ցանկանում եմ մեր Տիրոջ և Փրկչի անվամբ խաղաղություն և խնդություն։ Ձեր տոկունությունը հավատի մեջ, հավատարմությունը դառն հալածանքների և պայքարի ընթացքում՝ հայտնի են բոլորին։

Անգլիկան եկեղեցին ուրախ է, որ վայելում է Հայ Ուղղափառ եկեղեցու սերտ ընկերակցությունը։ Անգլիկանների համար առանձին ուրախություն է, որ ամեն տարի Երուսաղեմի մեր արքեպիսկոպոսը հրավիրվում է մասնակցելու Տիրոջ շարչարանաց Ավագ շաբաթվա արարողություններին։ Մենք շնորհակալ ենք նաև, որ կապ է պահպանվում մեր Սենտ Ջորջ դպրոցի և Ս. Քաղաքի Ձեր Հոգևոր Ճեմարանի միջև։

Յորս տարի առաջ մենք պատիվը ունեցանք Անգլիայում ընդունելու Ձեր Գերագույն Կաթողիկոսին՝ Նորին Սրբություն Վազգեն Ա-ին։ Նրա այցելությունն ամրապնդեց այն կապերը, որոնք շատ տարիներից ի վեր աճում էին մեր երկու եկեղեցիների միջև։ Միասին հույս հայտնեցինք ապագայում ավելի սերտացնելու մեր հարաբերությունները, սպասելով, որ կգա ժամանակը, երբ հնարավոր կլինի մեր երկու եկեղեցիների միջև աստվածաբանական խոսակցություններ սկսել այստեղ Երուսաղեմում։

Այնուամենայնիվ մենք տխրեցինք, երբ լսեցինք եկեղեցու ծոցում առաջացած տագնապի և անհամերաշխության մասին։ Բոլոր քրիստոնյաների համար Երուսաղեմը լեռան վրա կանգնած քաղաք է, և բոլոր հավատացյալները նայում են նրան՝ որպես միության, խաղաղության և սիրո Սուրբ Քաղաքի վրա։ Այժմ կարող ենք փառք տալ, որ պառակտումը վերջացած է և անցյալը՝ մոռացության տրված։ Մենք Անգլիկան եկեղեցում մի անգամ ևս նայում ենք դեպի առաջ և աղոթում այն օրվա համար, երբ կարող կլինենք ավելի մերձենալ Հայ Ուղղափառ եկեղեցու մեր եղբայրներին։

Ինձ համար մասնավոր հաճույք է, որ Լոնդոնում է գտնվում ոչ միայն Նորին Սրբություն Վազգեն Ա-ի անձնական ներկայացուցիչը, այլև Սրբոց Հակոբյանց Ձեր միաբանության մեկ անդամը։ Պսակ եպիսկոպոս Թումայանը օգտակարակայան էր եկել ինձ ողջերթ մաղթելու և Ձեզ հղելու իր եղբայրական ողջույնները։

Հայցում եմ Աստուծո օրհնությունը Ձեր Ամենապատվության, Սրբոց Հակոբյանց միաբանության, Ձեր բոլոր հոգևորականության և Ձեր հավատացյալ ժողովրդի վրա։ Թող խաղաղության Աստվածը, որ ի մեռելոց հարություն տվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ հավատացյալ հոտի այդ մեծ Հովվին, արյան հավիտենական ուխտով կատարելության առաջնորդի Ձեզ բոլոր բարի գործերում, կատարելու Իր կամքը, գործելու այն, ինչ հաճո է Նրա աչքին։

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԾԱԽՐԱՀԱԳԻՐ-ՔԱՐՏԵԶԱԳԵՏ Զ. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԱԳԻՐՔԸ

Վերջերս Փարիզում լույս տեսավ բազմահմուտ և վաստակավոր աշխարհագիր-քարտեզագետ Զ. Խանզադյանի հոյակապ մի աշխատությունը՝ պատմական Հայաստանի քարտեզագիրքը։

1960 թվականի սեպտեմբերին, երբ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը հովվապետական այցելությամբ գտնվում էր Փարիզում, Զատիկ Խանզադյանը որդիական հարգանքով Վեհափառ Հայրապետին է նվիրել պատմական Հայաստանի քարտեզագրքի երկրորդ օրինակը, մինչ առաջին օրինակը, գովելի և սրտառուչ հայրենասիրությամբ, որպես նվեր ուղարկել էր արդեն Հայրենիք, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային, երբ դեռ աշխատությունը հրապարակ իսկ չէր հանված։

Զատիկ Խանզադյանը հմուտ, նուրբ ճաշակի տեր և խղճամիտ քարտեզագետ է. ծանոթ մանավանդ միջազգային քարտեզագրական աշխարհում։ Մի շարք եվրոպական պետությունների հանձնարարությամբ, նա է պատրաստել Ֆրանսիայի, Թունուզի, Մառոկկոյի, Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի, Հունաստանի և այլ երկրների քաղաքական և տնտեսական քարտեզները։

Զատիկ Խանզադյանի պատմական Հայաստանի քարտեզագիրքը՝ հայ քարտեզագրության կոթողային գործը՝ երկար տարիների անխոնջ պրպտումների, որոնումների, հոգնաջան աշխատանքի արդյունքն է։

Մեծանուն արվեստագետը, քառասուն տարիներ շարունակ, թաղված պետական և թանգարանային արխիվների, մատենադարանների և գրադարանների մեջ, համառորեն և անվհատ, պրպտել, հավաքել, ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության հետ կապ ունեցող այն բոլոր պատմական, աշխարհագրական, մատենագրական վավերաթղթերը, ուր կա հայ ժողովրդի և հայ երկրի անունը, և այդ բոլորի հիման վրա կազմել է պատմական Հայաստանի քարտեզագիրքը, ժամանակագրականորեն, ավելի քան 250 քարտեզներով, որոնք միաժամանակ առնվել են նուրբ և գեղեցիկ, աշխատված զարդանկարների շրջանակի մեջ։

Զատիկ Խանզադյանի պատմական Հայաստանի քարտեզագիրքը արդարացիորեն մասնագետների կողմից բնութագրվել է որպես «հայ ժողովրդի խտացած պատմություն՝ քարտեզներով պատկերված։ Հեղինակի ձգտումը և «երազը եղած է,— ինչպես նշում է ինքը,— վավերական և անհերքելի փաստերով ապացուցանել, թե հնադարյան հայ երկիրը և հնամենի հայ ժողովուրդը գոյություն ունեցած են և տոկացած մարդկային պատմության հարափոփոխ դեպքերուն, իբրև անխորտակելի ժայռ մը ջրհեղեղեն ի վեր»։

Հեղինակը ծնվել է Մանիսայում (Զմյուռնիայի շրջան, Փոքր Ասիա), սովորել է Փարիզի Ջրագրության և ճարտարագիտության վարժարանում, և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է ֆրանսիական նավատորմում՝ որպես հրամանատար։ 1913 թվականին, հայկական բարենորոգումների օրերին, Խանզադյանը պատրաստել է հայկական վեց նահանգների վերաբերյալ տեղեկագրեր՝ վավերաթղթերով։ 1915 թվականի եղեռնից հետո, Խանզադյանը պատրաստել է նաև հայկական կոտորածների վայրերի քարտեզները։ 1920 թվականին Խանզադյանին է հանձնարարվում պատրաստել Հայաստանի քարտեզը՝ Սևրի դաշնագրի ընդունած սահմաններով։

«Երկրագունդիս բոլոր երկիրներուն մեջ, — գրում է հեղինակը,— Հայաստանն է, որ աշխարհիս ստեղծումեն մինչև տասնիններորդ դար ամենամեծ թվով «պրոտոտիպ» քարտեզներու ամենահետաքրքրական հարստություն ունի, գծված մեծ աշխարհագետներու կողմեն։ Ֆրանսացի հռչակավոր եկեղեցական Բոսյուեն, որ ուսուցիչ էր Մեծն Լուդովիկոսի զավակին, Հոլանդայեն Փարիզ հրավիրած էր ամենեն անվանի աշխարհագրագետները, հաստատելու համար, թե դրախտը Հայաստանի մեջ կգտնվի, որպեսզի արքայազունը ըստ այնմ գծե իր քարտեզը»։

Այս հետաքրքիր քարտեզը մտել է Խանզադյանի հրատարակած պատմական Հայաստանի քարտեզագրքի մեջ։

Ի պատիվ հեղինակի, հուզումով և երախտագիտությամբ պետք է արձանագրել նաև այն, որ տպագրության համար հսկայական գումար պահանջող պատմական Հայաստանի քարտեզագիրքը տպվել է «տնային մեթոդներով», այսինքն Փարիզի մոտ, Գուրբվուա արվարձանում, հեղինակի բնակարանի առաջին հարկում հաստատված «ընտանեկան տպարան»-ում, սրտագին աշխատակցությամբ Խանզադյանի որդու, աղջկա և փեսի։

«Կյանքիս վերջալույսին ուզեցի կտակ մը թողուլ Ազգիս և զավակներուս»,— ասել է այս համեստ, ճշմարիտ արվեստագետ և իսկական հայ մարդը իր գործի հրատարակության առթիվ, նման մեր հին գրիչների, որոնք մագաղաթների բուրգեր են ծաղկազարդել և փոխարեն իրենց մեծ աշխատանքների, խնդրել են միայն «վայելողների մեկ «ողորմիա»-ը։

Զատիկ Խանզադյանի պատմական Հայաստանի քարտեզագիրքը հայ քարտեզագրության կոթողային պլուխ-գործոցն է, արժանի մեր ժամանակի գնահատանքին և սերունդների անմոռաց հիշողության։

Ամսագրի սույն համարում, որպես նմուշ, հրատարակում ենք Զատիկ Խանզադյանի աշխատությունից 3 քարտեզ։

ԶԱՏԻԿ ԽԱՆԶԱԴԵԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՔԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ



ՀԱՅՍ KIRCHERի ՔԱՐՏԵԶԻ ՀԵՏՈՍՏԱՆ ԵՒԻՐ ԴՐԱՀՏԱՎԱՅՐ

ՖՐԱՆՍԻԱԿՈՍ ՀԱՐԻՑՈՒՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԸ» ԳՐՔԻՑ

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 40-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 40 տարին։ Այդ իրադարձությանն էր նվիրված համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի, վարչա-տնտեսական աշխատողների և ուսանողության հոբելյանական հանդիսավոր նիստը, որը տեղի ունեցավ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում։

Հոբելյանական նիստը ներածական խոսքով բացարեց համալսարանի պրոռեկտոր, գիտությունների վաստակավոր գործիչ Ա. Մելիքյանը։ «Համալսարանը 40 տարուան զեկուցումով հանդես եկավ համալսարանի ռեկտոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Դավթյանը։ Նիստում ողջույններով հանդես եկան Հայկական ՍՍՌ լուսավորության մինիստրի տեղակալ Ս. Մովսիսյանը, ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Հ. Բունիաթյանը, համալսարանի ավագագույն դասախոս, Դոցենտ Գ. Յուրարյանը, համալսարանի շրջանավարտներից՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ջրբաշյանը, Երևանի բժշկական ինստիտուտի դիրեկտոր, պրոֆեսոր Լ. Հարությունյանը, բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, ինչպես նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դիրեկտոր Գ. Մելիքյանը և ուրիշներ։

Ընթերցվեցին համալսարանի 40-ամյակի առթիվ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանից, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայից, «Սովետական հանրագիտարան»-ի խմբագրությունից, Լենինգրադի, Կիևի, Մինսկի, Թբիլիսիի, Բաքվի, Տարտուի և այլ համալսարաններից և նշանավոր գիտնականներից ստացված բազմաթիվ հեռագրեր։

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿԵՐ.— Վեց հարյուր տարի առաջ, ոտար բռնակալների ստրկական լծից ազատվելու համար, Երևանից ընդհուպ հեռացել է նրա առաջին բանաստեղծը՝ Տերտեր Գրիգոր Երևանցին։ Ապաստան գտնելով հեռավոր Ղրիմում, նա թախծոտ տողեր է հղել իր Հայրենիքի, հարազատների, կորցրած ցգեկանների մասին։ Մշակելով Հայրենիքի երկրից իր հետ տարած ժողովրդական գրույցները, նա ստեղծել է «Հազարդի, գինու և խմաստասերի վիճաբանությունը» դրամատիկական պոեմը, որը հայ միջնադարյան բանաստեղծության մեծարժեք նմուշներից մեկն է։ Սակայն դարերի փոթորկալից իրադարձությունները բանաստեղծի գործերը ցրիվ էին տվել Սիսյուռքով մեկ, իսկ նրա անունը գրեթե մատնել մոռացության։ Տերտեր Գրիգոր Երևանցին որպես բանաստեղծ իր հայրենակիցներին վերստին հայտնի է դառնում վեց դար հետո, Մատենադարանի ավագ գիտաշխատող Ա. Մնացականյանի կողմից նրա ստեղծագործության ինքնագրի հայտնաբերման շնորհիվ։

Բազմամյա գիտական պրպտումների ընթացքում մատենադարանի տարբերություններում և այլ ձեռագրերում գրականագետներին հաջողվել է հայտնաբերել միջնադարյան հայ բանաստեղծների բազմաթիվ անհայտ գործեր, ճշտել շատ բանաստեղծությունների հեղինակային պատկանելիությունը, ինչպես նաև երևան հանել մի շարք մոռացված բանաստեղծների։ Մինչև այժմ կարծվում էր, թե առաջին հայ բանաստեղծուհի Սահակդուխտ Սյունեցու ստեղծագործությունները անհետ կորել են, բացի այն երեք տողերից, որոնք գտել էր Հայր Ղևոնդ Ալիշանը։ Բայց ահա Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության ձեռագրաց մատենադարանում հայտնաբերվել է Սահակդուխտի հորինած մի ամբողջական գրվածք՝ «Սահակդուխտ» ակրոստիխոսով։ Սա հայ մատենագրության մեջ վերջին ժամանակների ամենաչքառու հայտնագործություններից մեկն է, որը կատարել է Սրբոց Հակոբյանց վանքի միաբան և Երուսաղեմի հայոց վանքի ձեռագրաց մատենադարանի տեսուչ, հմուտ բանասեր Նորայր եպիսկոպոս Գողարյանը։

Միջնադարյան հայ բանաստեղծության Նորահայտ հուշարձաններից մեկն է նաև «Տաղ Տէր Ստեփաննոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմը, որը բաղկացած է 144 տնից։ Հեղինակը անհայտ է։ Մատենադարանում վերջին ժամանակներս հայտնաբերվել են նաև Գրիգոր Նարեկացու, Վարդան Անեցու, Ներսես Շնորհալու, Դավիթ Սալաձորցու, Մարկոս Արարկիրցու և միջնադարյան ուրիշ ցարդ անհայտ գրողների շատ

երկեր, որոնք լույս կտեսնեն Ա. Մնացականյանի կազմած «Հայկական միջնադարյան բանաստեղծներ» (Ն—ԺԸ դ. դ.) ժողովածուում։

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՈՐ ՁԵՌԱԳՐԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ. — Մեր մատենագրության մեջ ծանոթ է ն դարի եկեղեցական նշանավոր հայր Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն բ մայրութեանս» գրքի հայերեն թարգմանությունը։ Վերջերս սույն գրքի հայերեն թարգմանությունից գտնվեցին ևս մի քանի էջեր։ Եռով 1100 տարի առաջ ընդօրինակված այդ մատյանը անցյալում բաժանվել է բազմաթիվ մասերի և ցրվել աշխարհով մեկ։ Հետագայում նույն ձեռագրից երկու թերթ գտնվել է Անիում, չորսը Վարագում, չորսը Մոսկվայում, չորսը Աղթամարում, երկուսը Լիբանանում, մեկը Ս. Էջմիածնում։ Այդ գրքի պոկված էջերը այժմ իրար են հանդիպել Մատենադարանի կամարների տակ և նորից խմբվել մի կազմի մեջ։

Վերջերս Մատենադարանում ստացվեց Քիֆլիսեցի մի հայ ձերունու նվերը՝ մի ձեռագիր։ Դա Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» աշխատության ձեռագիրն է։ Դրանով Մատենադարանի ձեռագրերի քիվը հասավ 10 000-ի։

ՈՒՇԱԳՐԱՎ ՁԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.— Վերջերս Մատենադարանում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ս. Նարինյանը հայտնաբերել է մի ձեռագիր աշխատություն, որը պատկանում է Քիֆլիսեցի բժիշկ Ստեփանոս Շահրիմանյանի գրչին։ Գրքի վերնագիրն է «Հայաստանի բուսաբանությունը կամ բուսական աշխարհը», գրված գրաբար լեզվով 1818 թվականին։ Գիրքը բաղկացած է 856 էջից, գրված է թանաքով երկու սյունի վրա։ Աշխատության մեջ տրված է այն ժամանակվա Հայաստանում աճող մոտ 2000 տեսակի ծառերի, թփերի և խոտաբույսերի նկարագրությունը։ Հեղինակը յուրաքանչյուր բույսի անունը տալիս է հայերեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն և թուրքերեն։ Հեղինակը միաժամանակ տալիս է բույսերի, ծաղիկների, պտուղների նկարագրությունը և նշում, թե որտեղ է աճում գրանցից յուրաքանչյուրը։

Աշխատության առաջին էջում գետեղված չափածո առաջաբանում հեղինակը գրում է, որ Հայաստանի բույսերի նկարագրությանը նվիրված իր 24-ամյա աշխատանքի արդյունքը նվիրում է հայ ժողովրդին՝ համաժողովրդական օգտագործման համար։

Շահրիմանյանի ձեռագիր աշխատությունը գիտական մեծ արժեք է ներկայացնում։ Նա առաջինը տվել է Հայաստանի բուսականության լրիվ նկարագրությունը։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ.— Վերջերս Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միությունում տեղի ունեցավ վիճաբանություն՝ նվիրված «Արդիական երաժշտական լեզուն սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ» թեմային։ Զեկուցումով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Ռոբերտ Աթայանը։ Զեկուցման մեջ շոշափվող շատ դրույթներ հետաքրքիր էին և արժեքավոր։

Արծարծելով երաժշտական ստեղծագործության ազգային բնույթի, տարբեր ազգային արվեստների փոխազդեցության, ստեղծագործողի անհատականության, մեղեդու և երաժշտական արտահայտչական մյուս միջոցների օգտագործման և այլ հարցեր, զեկուցողը իրավացիորեն իր ուշադրությունն էր բևեռել իր զեկուցման մեջ երաժշտության գաղափարական բովանդակության հարցին։ Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ նաև վերջին երկու-երեք տարիների ընթացքում գրված մի քանի առավել նշանակալի ստեղծագործությունների վրա, ինչպիսիք են Ա. Բաբաջանյանի յութակի և դաշնամուրի համար գրված սոնատը, Ալ. Հարությունյանի սիմֆոնիան, Է. Հովհաննիսյանի կվարտետը, Ջ. Տեր-Թադևոսյանի երկրորդ սիմֆոնիան, ցույց տալով նաև դրանց արժանիքներն ու թերությունները։

Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակության ընթացքում ոչ միայն հետաքրքիր, այլև արժեքավոր էին կոմպոզիտորներ Գ. Եղիազարյանի, Ալ. Հարությունյանի, Է. Հովհաննիսյանի և Կոմպոզիտորների միության նախագահ Է. Միրզոյանի ելույթները։

Նրանց առաջ քաշած հարցերը շատ բազմազան էին, իսկ շատ դրույթների արժեքավորությունը նրանում է, որ ժամանակակից և ազգայինի ընդհանուր բնորոշման մեջ դիպուկ, խելոք ու զգայուն շեշտում էին երաժշտական առանձին տարրերի նպատակահարմար օգտագործումը, մի բան, որ շատ օգտակար է ստեղծագործական պրակտիկայի համար։

ՀԱՅ ԱՍՏՐՈՖԻԶԻԿՈՍՆԵՐԻ ՆՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Բյուրականի աստղադիտարանում շահագործման հանձնվեց Սովետական Միությունում ամենախոշոր և աշխարհում երկրորդ՝ ինտերֆերենցիոն ռադիոհեռադիտակը, տեղակայվեց իր մեծությամբ աշխարհում երկրորդ Եմիդտի տիպի դիտակը։

Հայկական ՍՍՌ Նոր Համբերդի կոսմիկական կայանը կազմակերպեց ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ։

Աստղադիտարանի գործունեության մեջ զգալի տեղ են գրավում անկայուն աստղերի հետազոտությունները։

Երկնքի տիրույթների՝ Բյուրականում ստացված լուսանկարների վրա, հաջողվեց գտնել այն դերեր աստղը, որը 1959 թվականի մայիսին Պալոմարի աստղադիտարանի աշխատակից դոկտ. Հյումասոնը հայտնաբերել էր գալակտիկաների Վերոնիկայի վարսեր համաստեղության մեջ գտնվող կուտակում։ Այդ լուսանկարները Հայաստանի աստղադիտարանի երիտասարդ աշխատակցուհի Ռոմելիա Շահբաղյանը ստացել էր դեռ ամերիկացի դիտնականի հայտնագործությունից առաջ։

Շատ արժեքավոր արդյունքներ են ձեռք բերվել Արեգակի շրջակայքում սպիտակ թզուկ աստղերի տարածական բաշխման ուսումնասիրության ասպարեզում։ Գալակտիկական միգամածությունների պրոբլեմի գծով ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Գուրզադյանը հետաքրքրական մի հետա-

գուրություն է կատարել, որը նվիրված է այսպես կոչված Լայմանի սերիայի առաջին գծում չլուծված գայթման ցրված ֆոնի հարցին։ Ձգալ հետաքրքրություն են ներկայացնում նաև գիտավորաձև միգամածությունների նոր հետազոտությունները։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ՍՏԱՑԵԼ Է Կ. ԲՐՈՒՍԻ ԱՆՎԱՆ ՄԵԴԱԼԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը վերջերս ստացել է Կատերինա Բրուսի անվան ոսկե մեդալ, որով նրան պարգևատրել է Եռաստղվիճանության աստղագիտական ընկերությունը։

Կատերինա Բրուսի անվան մեդալը հիմնվել է 1898 թվականին։ Այն ամեն տարի շնորհվում է աշխարհի թվականին։ Այն ամեն տարի շնորհվում է աշխարհի հռչակավոր գիտնականներից մեկին՝ աստղագիտության զարգացման գործում առավել ակնառու ավանդի համար։

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը առաջին սովետական գիտնականն է, որին շնորհվում է այդ պարգևը։ Անցյալ տարի Վ. Համբարձումյանը պարգևատրվեց Անգլիական թագավորական աստղագիտական ընկերության ժամանակյան մեդալով։

Ակադեմիկոս հայ աստրոֆիզիկոսը այժմ Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Կանադայի, Գերմանիայի, Բելգիայի, Ավստրիայի տասը ակադեմիաների և գիտական ընկերությունների թղթակից-անդամ և պատվավոր անդամ է։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ.— Դարձյալ շարունակ Սևանը իր կապույտ ջրերի տակ պահպանել է հնագույն բնակավայրեր։ 1960 թվականին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանի աշխատակիցը, պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանի ղեկավարությամբ, ջրից ազատված վայրերում Լճաշենի մոտ կատարեց պեղումներ։ Հայտնաբերվեցին մեր թվարկությունից առաջ բրոնզի 15—14-րդ դարերին պատկանող գերեզմանական սափորներ և այլ իրեր, որոնք մեծ լույս են սփռում Հայաստանի հնագույն պատմության և հայ մշակույթի վրա։

ԱՐԱՄԵԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Վերջնականապես վերծանվել են Հայաստանում Սևանի լճի մոտակայքում հայտնաբերված քարակոթողների արձանագրությունները։ Քարակոթողները (ստելաները) ուղղահայաց քարե սյուներ են՝ արձանագրություններով կամ փորագիր պատկերներով։

Հանելուկային արձանագրություններ ունեցող այդպիսի քարակոթողներ այդ շրջանում գտնվում են արդեն մի քանի տասնամյակներ շարունակ։ Սակայն չէր հաջողվում որոշել ոչ տեքստերի բովանդակությունը, ոչ էլ այն լեզուն, որով գրված էին, քանի որ քարակոթողները վնասված էին։ Դրանց արձանագրությունները կիսով չափ ջնջված էին կամ էլ մասամբ բացակայում էին։

1957 թվականին հայտնաբերվեց ևս մի քարակոթող, որի արձանագրությունը լիովին պահպանվել էր։ Այժմ Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Ի. Վիննիչկովին հաջողվել է լիովին վերծանել այդ արձանագրության տեքստը։

Այն բաղդատելով ավելի վաղ հայտնաբերված գրությունների հետ, գիտնականը պարզել է, որ այդ բոլոր արձանագրությունների լեզուն մեկ է՝ արամեական։

Ավելի քան հազար տարի այդ լեզուն տարածված է եղել Արևելքի մատենագրության համար, ընդհանուր մինչև մեր թվարկության 2 դարը։

Վերծանված տեքստերը հաղորդում են այն մասին, որ Արտաշես Ա թագավորը, որը պատմության մեջ է մտել որպես հայկական պետության հիմնադիր (Բ դ. մ. թ. ա.), այդ վայրերում հողեր է բաժանել, ուր եղել են քարակոթողները, որպես (ենթադրաբար) սահմանաքարեր։ Մինչև այժմ որոշ չէր այդ քարակոթողների ստույգ ժամանակը և կանգնեցման նպատակը։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ*

Բ. ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ԻՐ ՆԱՐԵԿԸ

1. ՆԱՐԵԿԻ ՎԱՆՔՆ ՈՒ ԻՐ ՎԱՆԱԿԱՆԸ

Ակնարկը, զոր նվիրեցինք մտքի և գրչի վաստակին հայ հոգևորականության ամենեն պատկառելի դեմքերեն մեկուն՝ Կոստանդնուպոլսի Գարեգին պատրիարքին, իր կյանքի ութսուն տարիներուն առթիվ, լրիվ պիտի չըլլար, եթե չանդրադառնայինք նաև իր գրական վաստակին մաս կազմող այն ուշագրավ երկին, որ Նարեկի թարգմանությունն է, և որ ինքնին փավական էր, որպեսզի Գարեգին Տրապիզոնցին պարտք մը հատուցած ըլլար հայ գրականության։

Բայց կարժե, որ ադկե առաջ լայն փակագիծ մը բանանք Նարեկին ու Նարեկացիին համար, հասնելե առաջ իր թարգմանիչին։

Անհրաժեշտ էր արա փակագիծը, որովհետև այլապես դժվար պիտի ըլլար ըմբռնել պաշտամունքը, որուն, ինչպես տասը դարերու ընթացքին, նույնպես և մեր օրերուն առարկա եղան մեծ վանականն ու իր երկը, և որովհետև նույն այդ պաշտամունքին պտուղն է տքնությունը, որուն հանձնառու եղավ Գարեգին Տրապիզոնցին՝ ներկա մեր հայերենին վերածելու համար հայ մատենագրության ամենեն խորունկ ու ամենեն խորհրդավոր այդ գիրքը։

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի Մ Մ Թ-ից, Ժ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1961 թվականի Մ Ա-ից։

***

Ժ դարը հայ մշակույթի պատմության ամենեն ցայտուն դարերեն մեկն է, եթե հինգերորդ դարը ոսկեդարն էր եղած հայ լեզվին, ու շրջանը՝ համախմբում հիգերու հայ մշակույթը օժտելու համար վերելքի հնարավորություններով, եթե յոթերորդ դարուն խորացեր էր հայ գիտական միտքը, ճարտարապետության մեջ հայ ոճը հասեր էր ուշագրավ ինքնատիպության մը ու պատմագրությունը սկսեր էր տոգորվիլ ճշգրտության մտահոգությամբ, տասներորդին արդեն հայ մշակույթը ստացած է այլապես ինքնուրույն դիմագիծ մը։ Հայ ճարտարապետությունը անգամ մը ևս կկոթողանա այդ դարուն, և հայ ոճը նոր տարրերով կրեղմնավորվի։ Մտավորական կյանքի բարգավաճման ավելի լայն մղում կտրվի ու կընդհանրանան իմաստասիրական մարզանքները մենաստաններեն ներս։ Ծավալ կստանա հայեցողական կյանքը անոնց ծոցին մեջ, մինչ աղանդներ թև կառնեն դուրս։

Մենաստանները, որոնք սկսած էին ծավալիլ Հայաստանի մեջ արդեն է դարեն, Ժ դարուն կվերածվին արդարև մտավոր օջախներու լայն ցանցի մը։ Կամրջաձոր, Հոռոմոս, Սանահին, Շիրակ, Կապուտքար, Խլաձոր, Արդինա արդեն շեն վանքեր են և հայ մշակույթի մեյմեկ լուսավոր բջիջ, ուր մարդիկ կփորձեն հորիզոն բանալ իրենց։

Այդ վանքերուն մէջ մարդիկ կրնան իրենց հոգին ընդլայնել։ Անապատական միայնակեցութիւնը կդարձնէ պարզապէս ճգնավորի կեանք մը ըլլալէ, ու կդառնայ առիթ պարպումներու և վերծանումներու։ Բնազանցական որոնումներու և խոկումներու։

Ինչպէս նախորդ դարերը, Ժ դարը ևս կունենայ իր կարկառուն դեմքերը, թէև համեմատաբար քիչ թիվով։ Ան հայ մատենագրութեան կուտայ Անանիա Նարեկացիի և Գրիգոր Անձևացիի նման հմուտ հոգևորականներ և արժեքաւոր պատմիչներ ալ, ինչպէս Ուխտանէս և Ստեփանոս Ասողիկ։ Բայց այդ դարը պիտի շողար մեր մշակոյթի պատմութեան մէջ շնորհիվ Նարեկի մեծ վանականին, և պիտի ստեղծեր ուշագրաւ հանգրվան մը այդ պատմութեան մէջ։

Մինչև այդ դարը Նարեկ անշան գիւղ մըն էր Վանա ծովուն հարաւը, և անշան ալ կմնար, եթէ հոն չգար վանք մը հիմնել Ժ դարուն սկիզբը Անանիան, որ Նարեկացիին մոտիկ ազգական էր, և եթէ այդ վանքը կրթական վառարան մը չդառնար շուրջը։ Բայց ան պատմութեան պիտի անցներ շնորհիվ այն համեստ վանականին, որ պիտի գար սքեմ առնել հոն և գարուն փառքը դառնալ։

Գրիգոր Նարեկացին էր ան, զավակը բազմահմուտ հոգևորականի մը՝ Անձևացւոց Խոսրով եպիսկոպոսին, և ծնած էր 951-ին։ Մեծցած իր հոր անմիջական շունչին ներքև, բայց ուռճացած Անանիայի նման գիտնականի մը հոգածութեան տակ. Գրիգոր ինքն ալ պիտի օժտեր իր միտքը շուտով բացառիկ հմտութեամբ մը, պիտի բռնկեր ստեղծագործութեան անապառ թափով, ու պիտի նոր ուղի բանար հայ մտածման մէջ, նոր հորիզոններու տանելով հայ հոգին ու իր հուզումները։

Ոչ խակ վաթսուն տարի ապրեցաւ ան։ Բայց այդ վաթսուն տարին բավական եղաւ, որ անկորնչելի երկեր կտակէ հայ գրականութեան։ Իր անդրանիկ երկն է «Երգ երգոց»-ի «Մեկնութիւն»-ը, հետո կուգան իր «Ներբող»-ները, որոնք չորս են թիվով, իր երեք «Գանձ»-երը և տաղերու շարք մը, որոնց մէջ քանատեղծական այնպիսի գոհարներ կան, որոնք զայն արժանի կընեն հայ տաղասացներուն գլուխն անցնելու։

Նարեկացիի գլուխ-գործոցը սակայն իր Աղօթամատեանն է, իր «Նարեկ»-ը, ինչպէս պիտի անվանվեր ան հետագային։

Բայց Նարեկը աղօթամատեան մը չէ միայն, Կսխալին ու պիտի սխալին քոլոր ատենք, որ զայն կարծած են հասարակ աղօթագիրք մը։ Իր ձևովը «սրտի խորերեն խոսք» մըն է ան Աստուծոյ հետ, բայց իր խորքին մէջ հնոց մըն է հոգեկան բարդ խոովքներու, կաթսա մը մարդկային բոլոր հուզմունքներուն, որոնք կեռան անդադար ու կաշխատին ժայթքիլ դուրս։ Աղօթքը պատրվակ մըն է հոն՝ մարդկային հոգին շարշարելու, որպէսզի իր բովանդակ հրայրքը պոռթկա։ Աղօթքը առիթ մըն է հոն՝ խորհուրդի ու խորհրդավորութեան մէջ թաթախելու մարդկային զգացումները, ու զանոնք ցայտելու կրակե շրվեժի մը պէս։

Նարեկով միստիկականութեան շրջանը կբացվեր հայ գրականութեան մէջ։ Ընենք անմիջապէս, թէ հայ հոգին իր խորքին մէջ միստիկ երբեք եղած չէ։ Արև կա հայ հոգիին ու անոր բոլոր ստեղծագործութեանց մէջ։

Միստիկականութիւնը բացառիկ պահերու միայն սպրդած է հայ հոգիեն ներս, որպէսզի խորհրդավորութեան մէջ սքողել ինչ որ պիտի չկարենար սովորական բառերով ըսել։

Միստի՛կ, այո՛, միստիկ է Նարեկացին։ Բայց իր միստիկականութիւնը ուրուն բնույթ մը ունի։ Ան Արևմուտքի ըմբռնած միստիցիզմը չէ։ Ան հայ միստիկականութիւնն է, որովհետև կզգաս, որ ան հաճախ կերպ մըն է խորհրդավոր ձևի ներքև ըսելու ինչ որ պիտի չկրնար պարզ բառերով արտահայտել։

Նարեկացին իր աղօթքներուն մէջ հեռու է հավատքի ծամծմված բանաձևերեն։ Աստվածաբանական բոլոր մարզանքները տեղ չունին բնավ անոնց մէջ, որովհետև Նարեկացին Գերագույն էակը ըմբռնելու և անոր մերձենալու իր հատուկ կերպը ունի։ Ստորգելիներու հեղեղի մը մէջ, որ Նարեկը կողողէ, գտնենք տարբեր Աստված մը, քան ինչ որ երևակայեր էին մարդիկ մինչև իր օրերուն, և տարբեր ալ մարդ մը, որ կրնա այդպէս համարձակ խոսիլ իր Աստուծուն հետ։

Նարեկացիի գլուխը իր ժամանակի ազանդներուն հետ քննութեան առարկա եղած է հաճախ և ոմանք աղանդի մը արձագանքը փորձած են նշմարել իր Աղօթամատեանին մէջ։ Ուրիշներ զայն նկատած են իբրև աղանդավոր մը, որ դարձի փուգա, և որ ինքն ալ հետո զայն պձաղկեն։ Կարելի չէ որոշ ըսել, թէ ո՛րն է ճիշտը այս տեսութիւններեն։ Ստուգ է սակայն, որ անոր հավատքին մէջ տարբեր շունչ մը կա, շեղթաներ չունի իր հոգին իր Աստուծուն աղօթած ատեն, ինչպէս երբ կընենք մարդը իր ներքին փոթորիկներուն մէջ։

Նարեկը աղօթամատեան մըն է, ուր սակայն կապանք չունի աղօթող մարդը իր հոգին պարպած ատեն։ Ան կժայթքի ինչ որ

կա ներսը, ցավոտ փոթորկի մը պես։ Եվ ան վեր է բոլոր նախապաշարումներեն ալ, երբոր կմերձենա աշխարհիկ իրերուն։ Իր սքեմը չի կաշկանդեր իր հոգին, երբ կփորձե մարդուն մեջ որոնել մարդը, ինչպես որ ան կա։

Աստվածածինը, օրինակ, իր հատուկ տեղն ունի Նարեկի մեջ, ինչպես ունեցած է մեր հոգևոր բանաստեղծներեն շատերուն երկերուն ու երգերուն մեջ ալ։ Բայց տարբեր է Նարեկի վանականին երևակայության հաճախող Աստվածածինը· ան մայրն է, որուն գուրգուրանքին պետք է դիմել Աստուծո մոտեցած ատեն, բայց նաև կինը, որուն գեղեցկությամբը պճնված է ան։

Բարեխոսություն մը աղերսելե տարբեր բան մը կա պաղատանքին մեջ, որով Նարեկացի մը կխոսի Աստվածածնի հետ։ Զգուշանա՛նք այդ պաղատանքը մեկնելե. պիտի չհաջողինք անոր թափանցել։

Ի՞նչ կմնա քեզ «երգ երգոց»-են, եթե փորձես մեկնելու անոր ամեն մեկ բառը։ Արվեստի հրաշակերտները հանգիստ թողունք իրենց գեղեցկության մեջ։

Ըսենք վերջապես, թե անձնական հուզումներու երևույթին տակ, Նարեկացին մարդկային հոգին է որ կպեղե, Անոր աղոթքներուն մեջ ոչինչ կա խորթ մարդկային հոգվույն։ Մարդն է, որ իր մեջ կերպարանք կառնե իր թովանդակ կիրքերով և խոովքներով, իր միտքը փարձունք տանելու և իր հոգին ազատագրելու ամբողջ ճիգով։

Մարդկային՝ իր խորքին մեջ, Նարեկը հայ ժողովուրդի ստեղծագործությունն է սակայն։ Անոր հոգին է, որ կցոլանա մեն-մի էջի մեջ։ Իզուր չէր հետևաբար, եթե հայ ժողովուրդը անոր պաշտամունքը ստեղծեց։ Ան Նարեկացիի աղոթքներուն մեջ իր սեփական հոգին գտավ, և կարծեր, թե ինքն է, որ կաղոթե անոնց հետ։ Ու գարը, ուր Նարեկացին ապրեցավ, կշնչե անոր էջերուն մեջ, իր ամբողջ խոովքով ու խոկումներով։

Շատերը փորձեցին օտար ազդեցություններ տեսնել Նարեկացիի երկին ու արվեստին մեջ։ Ազդեցություն ո՞վ չի կրեր որ։ Նարեկացին ալ անշուշտ կրած է։ Այդ ազդեցությունը խորքին հետ կապ չունի սակայն։ Իսկ պետք է շատ չարչարվիլ՝ օտար հետքեր գտնելու համար իր արվեստին մեջ։

Թե արաբական մտքին ազդեցությունը այնքան զորեղ էր Հայաստանի մեջ, որ կըրցած էր շեշտ դնել հայ մշակույթի վրա, դեռ շատ վիճելի հարց է։ Արդարև, ոչ մեկ փաստ կա, թե արաբական տիրապետության հետ արաբ մշակույթն ալ թափանցած ըլլա Հայաստան։ Եվ առավելապես որևէ հնարավորություն չունինք, թե Նարեկացին ազդված է այդ որևէ մշակույթեն։ Թող մեզ ըմբռնեցնե ածականներու և հոմանիշներու հեղեղը, որ հատկանիշն է արաբ ընագիրներուն, և որ կողողե նաև մեր Նարեկացին։ Մեր հին դասականներն ալ վարակված էին արևելյան այդ նախատրությամբ, արաբներեն շատ առաջ։ Նարեկացին զայն արդեն իր ոճին հատկանիշը դարձուց։

Թող ոչ ոք չըսե, թե ժողովուրդը պաշտամունք կստեղծե տեղի-անտեղի։ Եթե ան պաշտամունքի առարկա դարձուց Նարեկն ու Նարեկացին, անոր համար էր, որ իր իսկ հուզումներուն արձագանքը լսեց Նարեկի ողբերուն մեջ, իր սրտին հարազատ տրոփյունը անոր մեն-մի տողին մեջ։

Նարեկը հայ հոգին է, իր խորքին ու իր ոճին մեջ։

2. ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ԻՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Ամբողջ տասը դար Նարեկը խորհրդավոր մատյան մը մնաց։ Հայ ժողովուրդը պետք չուներ սակայն, որ զայն իրեն մեկնեն։ Իր հոգին կըմբոշխներ զայն լրիվ։

Եվ սակայն փորձեր եղան Նարեկը քննելու իր խորհրդավոր ծալքերուն մեջ, որովհետև արդեն կամ այնպես Նարեկը մութ անկյուններ շատ ուներ պարզ հոգիներուն համար։

Նարեկի մեկնություններ կվերագրվին, օրինակ, Առաքել Սյունեցիի, Գրիգոր Տաթևացիի, Սարգիս Շնորհալիի և Ներսես Լամբրոնացիի, թեև ասոնց վերագրված մեկնություններեն որևէ մեկը չէ հասած մեզի։ Իսկ վերջին երկու հեղինակներուն վերագրված «Լուծմունք» մը, որ մեզ հասած է, կենթադրվի, թե գործն է ԺԴ դարուն ապրած կիլիկյան գրչի մը։

Առաջինը, որ Նարեկի մեկնությունը գրեց, Հակոբ Նալյան պատրիարքն էր, մեկը Հայ Եկեղեցվո ամենեն հմուտ և ամենեն բեղմնավոր դեմքերեն[1]։ Առաջին փորձն էր այդ պարզելու բարդ հոգին, որով Նարեկացի կխտանա իր Նարեկին մեջ, և խորհուրդը, որով սքողված են իր աղոթքները։ «Հոգվով և հմտությամբ գրված ընդարձակ և կարևոր գործ մը,— կըսե Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան Նարեկի թարգմանության իր վերջաբանի մեջ,— որուն ընթերցումը դժվարացնող միակ բանն է շուայլաբան ոճը»։

Նալյան պատրիարքեն ավելի քան կես դար հետո, Նարեկի նոր մեկնություն մը գրեց Հ.

[1] «Գիրք մեկնութեան Երգոյն Գրիգորի Նարեկացւոյ ճոխաստկական վարդապետին..., շարադրեալ և մեկնեալ մեծաւ զգուշութեամբ և շրջահայեցութեամբ ի Յակոբայ արքեպիսկոպոսէ և պատրիարքէ Կոստանդնուպոլսոյ Աստուածաբան կոչեցեալոյ», Կ. Պոլիս, 1745, 1186 էջ։

Գաբրիել Ավետիքյանը, Վենետիկի Մխիթարյանց ամենեն բազմարդյուն դեմքերեն մեկը, որ Նարեկացին զննեց ավելի ու ավելի խորունկեն[2], և որուն գործը, ինչպես կըսե Թորգոմ սրբազան, ավելի տանելի էր ոճի տեսակետով։

Ուշագրավ է, որ Նարեկի զույգ թարգմանիչները՝ Թորգոմ Գուշակյանն ու Գարեգին Տրապիզոնցին, իրարմե անկախաբար, դիմած են Նալյանի և մանավանդ Ավետիքյանի մեկնությանց, ավելի լավ թափանցելու համար խրթնաբանությանց իմաստին, որոնցմով լի է անշուշտ Նարեկը, երբ մանավանդ զայն թարգմանել կփորձես։

Երբոր անով կաղոթես, խրթին չի թվիր ան քեզի. ավելին՝ հաճելի է կարծես քեզ իր խրթնությունը. խրթին չի թվեր քեզի, երբոր հրաշք կաղերսես անկե. առանց իր խրթնության, կարծես պիտի չգա հրաշքը։

Եվ այնուամենայնիվ ժողովուրդը միշտ աղոթեց անով, անկե միշտ հրաշք սպասեց։

Որպեսզի ժողովուրդ մը հրաշագործ սեպեր աղոթքի գիրք մը, պետք էր չափազանց սիրած ըլլար զայն ու չափազանց գեղեցկություն գտած ըլլար անոր մեջ։ Բայց մանավանդ պետք էր անոր հրաշագործ ուժին հավատար։

Հայ ժողովուրդը հավատաց Նարեկի ուժին, ու Նարեկացին անցուց սուրբերուն դասը։

Նարեկացիի պաշտամունքը այդ ձևով սկսած է։ Ան ուղղված է հրաշքի մարդուն։

***

Նոր օրերու պետք էր զալ, որպեսզի մարդիկ զգային, թե աղոթքի սովորական մատյան մը չէ Նարեկը, թե անոր խորքին մեջ ուրի՛շ աշխարհ մը կա։

Մեր օրերուն, Արշակ Չոպանյան առաջինն եղավ, որ փորձեց աղոթքներուն խորն իջնել։ Իր զույգ մը հոդվածներով, որոնք լույս տեսան 1895-ին իր «Ծաղիկ»-ին մեջ[3], և որոնց մեջ Նարեկացին կուսումնասիրեր այնքան աղապատանքով, կստեղծեր նաև Նարեկացիի պաշտամունքը մեր նոր սերունդին մեջ։

Չոպանյան, երիտասարդ օրերուն, կգրեր. «Դեմք մը կա սակայն մեր գրականության մեջ, թերևս միակը, որ զուտ միստիկական է, և մեկը՝ ամենեն հրաշալի դեմքերեն ընդհանուր միստիկական գրականության։ Նարեկացին է ան»[4]։

«Հպարտությամբ, ուրախությամբ և հիացմամբ, ողջունենք զանիկա։ Մեր գրականության տիտանը, մեր ցեղին է՛ն ուժով արտահայտությունն է ան։ Հանենք զանիկա աղոթք գրողի կրոնական գույնեն, ուր սահմանափակված էր, և դնենք իր տեղը, գրական մեծ հանճարներուն օգակարկառ բարձունքին մեջ։ Ա՛լ չըսենք, որ մեր բանաստեղծությունը հսկա շոմի։ Հոմերոսին ու Աստվածաշունչին հետ, մեր տղոցը ձեռքը տանք զայն և սորվեցնենք անոնց սքանչանա՛լ այդ մեծության վրա. ըսենք անոնց, որ այդ հոգին՝ հանելով զայն միստիկական կաղապարեն, իր իսկության մեջ նկատելով, մեր ցեղին հոգին իսկ է, խանդի, քնարերգության, ուժեղ ստեղծման և արվեստագետ զգայնության հոգի մը։

Մեր մեծ մարդն է ան։ Անկից առաջ, անկից հետո, ոչ մեկը ունինք անոր հետ բաղդատվելու։ իրմե հետո, եկեղեցական բանաստեղծությունը քանի մը անգամ մինչև վսեմը կբարձրանա, բայց հեռու է Նարեկացիին ոճն ունենալե»[5]։

Չոպանյան իր այդ հոդվածներուն մեջ կմատնանշեր ազդեցությունը, զոր Նարեկացիեն կրած են անցյալ դարու մեր գրական փառքերեն ոմանք, գոնե իրենց ոճի մեջ. «Այդ ոճը մեր դարուն մեջ նմանողներ ունեցավ, կամ հոգեկան վիճակի նմանությամբ մը՝ մասամբ կրկնվեցավ. Ղևոնդ Ալիշանի «Ընդ եղևեան»-ին և քանի մը գրաբար բանաստեղծությանց մեջ Նարեկացիին ոճին ցոլքը կա. Եղիա Տեմիրճիպաշյան իր դեկադան արձակի հաջողած կտորներուն՝ ինչպես «Մոնազ»-ին մեջ, նոր ժամանակներու Նարեկացիի ոճ մը գտավ. և չե՞ք կարծեր, որ հուզման, տառապանքի և ծայրահեղ քնարերգության շեշտով տեսակ մը հեռավոր եղբայրություն կա մեր նոր մեծ բանաստեղծ Պետրոս Դուրյանին և մեր հին բանաստեղծին՝ Նարեկացիին մեջ»[6]։

Այդ հոդվածները գրված միջոցին դեռ հասունցած չէր այն մյուս սերունդը, որ մեր գրականությունը պիտի գար պճներ անկորընչելի նոր գոհարներով։ Ու Չոպանյան չէր կրնար գիտնալ, որ Նարեկը այդ սերունդը ևս պիտի հմայեր։

Նարեկը սնարի գիրքն էր Միսակ Մեծարենցին։ Ու ի՞նչ ավելի խոր արտահայտություն պաշտամունքի, քան այն արձակ կտորը, զոր նվիրեց Նարեկացիին, «Նարեկացիին հետ» խորագրին ներքև, և ուր կըսե.

---

2 «Նարեկյան. Նարեկ աղոթից հարազատ և զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ, ի նպաստ բանասէր աղթաւորաց։ Ընդ նմին առանձին բացախօսութիւն ի հատուած ինչ «Գումարք խմբից» ներբողին Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին։ Վենետիկ, 1801, ԺԶ+288 էջ։

3 «Ծաղիկ», ազգային գրական և քաղաքական կիսամսյա հանդես, խմբագրապետ՝ Արշակ Չոպանյան, Կ. Պոլիս, 1895, էջ 129—138 և 170—185։

4 Անդ, էջ 129։

5 Անդ, էջ 188։

6 Անդ, էջ 188—189։

«...Նարեկացի՞ն է. սրբության իղձին կրակովը վառված անշեջ մորենին...

...Նարեկը ալեկոծություն մըն է. հոգեկան վրդով մրրիկ մը...

...Բայց բոլոր այս խավարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու հորձանքներուն ետին, հավիտենական, երջանիկ, անշիջանելի գաղափարը կա պահված. և կուգա կամքի ու գիտակցության արեռոտ այն վայրկյանն ալ՝ ուր երջանիկ ձայնարձակությունը կլսվի. «Տօնեա զկեալս կռուսելոյս վերնակեացն պարհրփուրեամբ»[7]:

Թնքեյանին համար՝ մեծ հոգին է Նարեկացին.

«Ո՛վ դուն, կոչո՛ւնք. դուն կը մրխաս տակավին՝
Իրրև կաթսա մը պըղինձ, ուր կեռա միտքն եղնիկին,
Իրրև շամփուր մ'ուր կայրի Նարեկացվո մեծ հոգին,
Իր խնկաման մ'որուն մեջ սի՛րտն է դրրեր Շնորհալին...»[8]:

Նարեկացիի պաշտամունքը Ցարենցն ալ ուներ։ Արդարև, ի՞նչ խորունկ իմաստ միակ տողի մեջ.

«Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ եակատ չկա»:

Սիամանթոն միակը եղավ սակայն մեր օրերու հայ քերթողներեն, որ կրցավ մերձենալ Նարեկացիին։ Տարբեր էին իրենց դարերը, տարբեր էին և իրենց հոգեկան հուզումները, բայց մարդկային հոգին միշտ բացառիկ ճիգ մը կընե, բացառիկ իր խոռվքները պոռթկալու համար։ Կուգա պահ մը, երբոր հայ լեզուն տկար կմնա ներքին փոթորիկը ժայթքելու համար, ու բառերը անզոր կդառնան մտածումի, երևակայության, ցասումի հեղեղը թուղթին հանձնելու ատեն։ Սիամանթո ևս հայ լեզվին շղթաները փշրեց հաճախ, ինչպես ըրեր էր Նարեկացին, բառերուն նոր իմաստ տվավ, ու իմաստներուն նոր բառեր, որպեսզի իր հոգին պարպել կարենա։

«Սուրբ Մեսրոպ»-ի մեջ Սիամանթոն նոր օրերու Նարեկացին է արդեն։ Հայ լեզուն նոր թափ կստանա, բառերը նոր ուժ կզդենուն, որպեսզի պատմեն հրաշալի այն պահը, երբ Մեսրոպ Մաշտոցը տառեր կուտար հայ լեզվին, որպեսզի կարենար ան արշավել դարերու մեջեն։

Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» պոեմի մասին էր, որ կգրեր Վարուժան.

«Տառերու գյուտին [հոբելյանին] առթիվ գրված պրակ մը՝ որ պիտի կարծվեր Նարեկի մատյանեն փրթած, նոր գրականության ցոլքերով վերանորոգված, և ինկած մեր սրտերուն վրա՝ խանդավառության այս օրերուն։ Մեկ շունչով երգված կթվի ան. քիչ մը աճապարանք կա իր կշռույթին մեջ։

Սիամանթո վերագիրներու գրիչ մըն է, ինչպես իր վարպետը՝ Նարեկացին. և այս քերթվածին մեջ իր վերագիրներուն մեկ մասը միչին դարու միստիկականները մաշած են արդեն, բայց կա մեծագույն մաս մը, որ գյուտերու շարք մըն է։ Սիամանթոն վրեժի մարտագոռ շեփորողը և տառապանքի խելահեղ բանդագուշողը չէ՝ անոր մեջ. մեզի կապացուցանե, թե գիտե նաև աստվածաբանի մը պես աղոթել Սուրբ Մեսրոպին հետ։

...Սիամանթո իր այս քերթվածին մեջ տվավ իրեն համար նոր ձև մը քերթելու, որ իր մյուս երկերուն մեջ հազիվ կուրվագծվեր. այս՝ զինքը Նարեկացիին հետ կապող թելն էր՝ զոր ամրակուռ շղթայի մը վերածեց»[9]։

Տարակույս չկա, որ Նարեկը իր հետքը ձգած է մեր հին ու նոր բանաստեղծներեն շատերուն ստեղծագործության վրա, եթե ոչ միստիկ իր բովանդակությամբ, գոնե իր արվեստով։

Նմանաձայնությունները, զորս Նարեկացին գործածած է առավելապես իր տաղերուն մեջ, փորձած են շատեր ալ մեր օրերուն։

Բառերու հեղեղը ևս, որով կհորդին Նարեկի հատվածները, կտեսնենք մեր օրերուն ալ շատ մը բանաստեղծներու մոտ։

Բարձր բոլորեն, բայց իր հոգիեն Նարեկացին բաշխած է բոլորին։

Յ. ՕՏԱՐԸ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Օտարը, երկար ատեն, անհաղորդ մնաց Նարեկացիին։

Առաջին փորձը Նարեկացին օտարին ծանոթացնելու դարձյալ Ցոպանյանն ըրավ։ Ուսումնասիրությունը, զոր 1895-ին լույս ընծայեց Կոստանդնուպոլսո «Մաղիկ»-ի մեջ Նարեկացիի մասին, թարգմանաբար լույս տեսավ նաև Փարիզ, «Մերկյուր դը Ֆրանս»-ի մեջ։ Ուսումնասիրության կցված էին քանի մը հատվածներ ալ Նարեկեն[10]։

Ադեկ հետո ոչ մեկը քաջություն չունեցավ՝ աշխարհին ներկայացնելու ինչ որ դարերը մեզ բերեր էին, որպեսզի հպարտությամբ ներկայանանք աշխարհին։

---

7 «Լույս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1908, թիվ 4։

8 Վահան Թեքեյան, «Տաղ դրաբարին», «Սեր», 1933, էջ 48։

9 Դանիել Վարուժան և Լ. Ծ. Սիրունի, «Նաւասարդ տարեգիրք», Կ. Պոլիս, 1914, էջ 254։

10 Արշակ Ջոպանյան, «Ուսումնասիրություն Գրիգոր Նարեկացիի մասին», «Մերկյուր դը Ֆրանս», Փարիզ, 1900, նոյեմբեր (Ֆրանսերեն)։

Պետք է անցներ ավելի քան կես դար, որպեսզի Նարեկացին անգամ մը ևս երևար Եվրոպային, բայց այս անգամ արդեն օտարի ձեռքով։

Հայ հոգեկան գեղեցկությանց խորքին թաքնված օտարներուն մեջ բացառիկ տեղ պետք է տալ Վալերի Բրյուսովին, որ հայ բանաստեղծությունը կրցավ զննել ու ճանչնալ իր իսկական արժեքին մեջ ու ռուս լեզվին վերածեց շատերը հայ քնարի գոհարներեն, որոնց մեջ թարգմանությունը կմրցի հաճախ բնագրին հետ, և տեղ-տեղ նույնիսկ կգերազանցե զայն իր գեղեցկությամբ։

Վալերի Բրյուսով «Հայ բանաստեղծության» հառաջաբանին մեջ, հայ քերթողության դարավոր հանգրվանները վերլուծելու առթիվ, պահ մը կանգ կառնե Նարեկացիին հասած ատեն.

«Գրիգոր Նարեկացիի քերթվածներուն մեջ կրոնական զգացումը կմիանա իսկական բանաստեղծական ավյունի հետ. անոր շատ մը այլաբանական ներբողները կմնան միշտ գեղեցիկ, անկախ անոնց աստվածաբանական մեկնություններեն։ Ասկե զատ, Գրիգոր Նարեկացին ոտանավորներու ձևը հասցուց բարձրագույն կատարելության մը, մշակելով նաև բառախաղերը պարսկական և արաբական քնարերգության մեջ ծաղկելե շատ առաջ։ Այս տեսակետով Գրիգոր Նարեկացիի ոտանավորները նախակարապետ կհանդիսանան միջնադարյան «աշխարհիկ» բանաստեղծության»։

Վալերի Բրյուսովի կողքին կուգա ահա կանգնիլ Լուկ Անդրե Մարսել ֆրանսացի բանաստեղծը, որ տասնյակ մը տարիե ի վեր կուսումնասիրե հայ բանաստեղծությունը, հինն ու նորը։ Արդեն իր զննության բովեն անցուց ան մեր հին տաղասացներեն և աշուղներեն ոմանք, ինչպես Գրիգորիս Աղթամարցին, Նահապետ Քուչակը, Նաղաշ Հովնաթանը և Սայաթ-Նովան, քանի մը գոհարներ հայ ժողովրդական բանաստեղծութենեն, և քանի մը նոր դեմքեր ալ, ինչպես Պետրոս Դուրյանը, Վարուժանը, Մեծարենցը, Չարենցը, բնորոշելով զանոնք իրենց գրական դիմագծությանը մեջ և նմուշներ տալով անոնց երկերեն։

Բայց հայ հոգվույն հետ իր կապը ան կանմահացնե Նարեկի մասին իր ուսումնասիրությամբ և անկե կատարած իր թարգմանություններով[11]։ Ոտարներեն շատ քիչեր կրցած են հայ հոգիին հետ այնքան նույնանալ, որքան ֆրանսացի երիտասարդ բանաստեղծը, և այնքան ջերմությամբ ու հավատարմությամբ հայ հոգեկան գանձը պատմել իրենց ժողովուրդին։

Լուկ Անդրե Մարսել տասնյակ մը էջերու մեջ Նարեկացին ու իր երկը կվերլուծե այնպիսի խորաթափանց մտերմությամբ մը, որ զարմանք և միևնույն ատեն սքանչացում կպատճառե մարդուս։

4. ՆԱՐԵԿԱՑԻՆ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԵՋ

Ու հիմա, որ բոլոր մեր հին արժեքները անգամ մը ևս նժարը կդրվին, Նարեկացին ևս անցավ զննության բովեն։ Նարեկը, մեր հին ու նոր արժեքներու կողքին, իր արժանի պանծացումը գտավ վերջերս Սովետական Հայաստանի մեջ, ըլլա գրականության դասագրքերու միջոցով, ըլլա առանձին մենագրությամբ և թարգմանությամբ[12]։

Մանուկ Աբեղյան առաջինը կըլլար, որ Նարեկացիին նոր օրերու պաշտամունքը կստեղծեր։ Վաթսունի մոտ էջերը, զորս ան հատկացուց Նարեկացիին իր գրականության պատմության մեջ, փաստն են այն հիացման, զոր ան կտածեր «մեր առաջին մեծ բանաստեղծ»-ին հանդեպ, որուն Նարեկը «մեր բանաստեղծության առաջին մեծ հրաշակերտությունը լինելով՝ ոչ միայն հրաշալիք է երևացել մեր ժողովրդի աչքին, այլ մի սրբություն հրաշագործ զորությամբ»[13]։

Ավելի հետո պրոֆ. Մ. Մկրյանն էր, որ բացառիկ ուշադրություն դարձուց գրական տիտանի մը, որ կրնա հպարտ անցնիլ բոլոր դարերուն մեջեն, արհամարհել սերունդներու վաղանցուկ կուռքերը և տոկալ ամենեն խրատարիր զննությանց, մեր օրերուն ալ։

Պրոֆ. Մ. Մկրյան, որ հայ գրականության պատմության դասագրքին մեջ ինքն իսկ խմբագրած էր շրջանը, որուն կպատկաներ Նարեկացին, կգրեր. «Ողբերգության մատյան պոեմը մեր գրականության մեջ նշանավոր է նաև նրանով, որ առաջին անգամ մեծ խորությամբ վեր է հանվում մարդկային ներքինը, ուշադրություն է դարձվում և արժեքավորվում են մարդկային անձնական ապրումները»[14]։

Ավելի հետո էր, որ ան մասնավոր ուսումնասիրության նյութ դարձուց Նարեկացին, արժեքավոր մենագրության մեջ, ուր գուրգուրանքն ու պաշտամունքը հաշտ կրնթանան գրական խղճմտության հետ[15]։

11 Լուկ Անդրե Մարսել, «Գրիգոր Նարեկացին և հայ հին բանաստեղծությունը», Փարիզ, 1954 (ֆրանսերեն)։

12 Ցենց տեսեր Մկրտիչ Խերոյանի նոր թարգմանությունը արևելահայ լեզվով, լույս տեսած Երևան, 1960 թվականին։

13 Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Ա, Երևան, 1944, էջ 552։

14 Մ. Մկրյան, «Հայ գրականության պատմություն», Ա, Երևան, 1951, էջ 134։

15 Մ. Մկոյան, «Գրիգոր Նարեկացի», Երևան, 1955։

խոսելով նախ Նարեկացիի քնարական էջերուն մասին, պրոֆ. Մ. Մկրյանը կեղրակացնե. «Նարեկացին հայ գրականության պատմության մեջ նոր դարագլուխ է բացանում իր տաղերով ու Ողբերգության մատյան լիրիկական պոեմով։ Նա առաջինն է մեր մեծ բանաստեղծներից, որ գրականության մեջ լիրիկայի ժանրը աղատեց եկեղեցուց ունեցած ենթակայական կախումից և խիզախեց այն պատկերացնել անկախ արարողություններից՝ իր ինքնուրույն արժեքով ու նպատակներով։ Նարեկացու տաղերից յավադուլները թե՛ իրենց իդեական բովանդակությամբ և թե՛ պոետիկական մշակույթով հայ գրականության մեջ վերածնության սկզբնավորումը նշող՝ լիրիկայի առաջին փայլուն նմուշներն են»[16]։

Նարեկացիի միստիկականության մեջ պրոֆ. Մկրյան կգտնե շուրջի կյանքեն դժգոհ մարդու մը հոգեկան խռովքը՝ քնարերգական էջերու մեջ պոռթկացած[17]։

Պրոֆ. Մկրյան համաձայն է, որ Նարեկը սովորական աղոթամատյան մը չէ, ինչպես տիտղոսած են զայն, այլ աղոթքի ձևին տակ բողոքի ժայթքում մը ընդդեմ տիրող կարգերուն[18]։

Պրոֆ. Մկրյան զերծ կգտնե նույնպես Նարեկացին իր սքեմին կաշկանդումներեն և կընդունի, որ Աստվածածինը ներբողած ատեն անոր հոդին այլևս կապանք չունի[19]։

Պրոֆ. Մկրյան չի վախնար փոքրիկ ժողովուրդի մը այս մեծ հանճարը համեմատության դնելե օտար մեծ մաքերուն հետ. «Նարեկացին բնությունից վերցված որևէ տեսարան մեծ մասամբ օգտագործում է ուղղակի և անմիջապես հասկանալի կերպով, տվյալ խոհը կամ հույզը համեմատությամբ կամ փոխաբերությամբ պատկերավորելու և ցուցադրելու նպատակով։ Այսպիսով՝ նա չնայած երեք դար առաջ է Դանթեից, բայց այս առումով էլ նրանից շատ ավելի մոտ է նոր ժամանակի բանաստեղծներին. հայտնի բան է, թե դժվարըմբռնելի ալեգորիաները որքան մեծ տեղ են բռնում Դանթեի ստեղծագործության մեջ»[20]։

Դանթեեն հետո Նարեկացին կբաղդատե քրիստոնյա Արևմուտքին մեծ հռչակով մարդոց հետ ևս. «Նարեկի գեղարվեստական արժանիքները այնքան մեծ ու շատ են, որ եթե օրինակ՝ Թովմա Գեմպիացու այնքան գովաբանված և հռչակ վայելող «Համահետևումն Քրիստոսի» գիրքը դրվի նրա կողքին, իր մտահղացմամբ ու արվեստով պիտի թվա մի շատ գորշ ու թույլ լիրիկական ստեղծագործություն։

Մեր գրականության վերածնության շրջանը սկզբնավորող մեծ բանաստեղծի Մատյան ողբերգության պոեմը, անշուշտ, մարդկային ստեղծագործական մեծագործության գանձերից մեկն է»[21]։

Նարեկացիով կզբաղի նաև պրոֆ. Առաքել Գ. Առաքելյանը։ Հայ ժողովուրդի մտավոր մշակույթի զարգացման պատմության նվիրված իր ծավալուն երկին մեջ, քննության կառնե նաև Նարեկացին, և կրսե ի միջի այլոց. «Բանաստեղծը վառ պատկերներով, գեղեցիկ ու ճոխ լեզվով արտահայտում է իր զգացմունքները, տրամադրությունները, խոհերը, բողոքը, որոնք ըստ էության ուղղված են իր ժամանակի ըմբռնումների և հասարակական ճնշիչ մթնոլորտի դեմ։ Այդ զգացմունքները հախուռն են, հորդաբուխ, սրտահույզ։ ...Փիլիսոփայական այս դարաշրջան կազմող երկի մեջ երևում են կրիտիցիզմի առաջին ցոլքերը. նա խարազանում է և՛ իրեն և՛ իր ժամանակը»[22]։

5. ԱՐՄԱՇ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Արմաշ չէր կրնար շստեղծել Նարեկացիով խանդավառվողներու սերունդ մը։ Հազիվ քառորդ դար տրվեցավ անոր շնչել հոգեկան ոգևորության շրջանը, բայց այդ քառորդ դարը բավական եղավ, որ հասնի սերունդ մը, որ գուրգուրանքով պրպտե հայ ժողովուրդի հոգևոր գանձը և զայն զնե նոր օրերու հոգեբանությամբ։

Նարեկացիի մասին իրենց սքանչացման խոսքն ունեցան, նախ, Արմաշի զույգ գաստիարակները իրենք՝ Օրմանյան և Դուրյան։

Օրմանյան իր «Ազգապատում»-ին մեջ, ինչպես և հավանաբար իր դասերուն, շատ հարևանցի անցած է, իր նպատակը չըլլալով դրական վերլուծման մը ենթարկել Նարեկացին ու իր երկերը, վերաբերում, զոր այն ցույց կուտա առհասարակ գրական հին արժեքներու հանդեպ, իր մտահոգութենեն դուրս նկատելով զանոնք։

«Սքանչելի աղոթագիրքը... եթե մեկ կողմեն յուր քերթողական ավյունին, գրական հայողության և բարեպաշտ զգացմանց միությունը կհաստատե,— կրսե Օրմանյան Նարեկացիի մասին խոսելու ատեն,— մյուս կողմեն կցուցնե այն սրբության և կարողության համբավը, զոր կվայելեր Գրիգոր, Նարեկա վանքին համեստ վանականը։ Մեր

16 Մ. Մկրյան, «Գրիգոր Նարեկացի», էջ 140։
17 Անդ, էջ 193—194։
18 Անդ, էջ 80։
19 Անդ, էջ 137։
20 Անդ, էջ 216։
21 Անդ, էջ 245։
22 Պրոֆ.-դոկտ. Առաքել Գ. Առաքելյան, «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», Երևան, 1959, էջ 219։

նպատակեն դուրս է Նարեկ գիրքին առավելությունները վերլուծել, բայց իբրև պատմագիր բավական կսեպենք հիշել տալ, թե ազգին մեջ գրեթե Սուրբ Գիրքին համահավասար պատիվ ընծայված է այդ գիրքն, և սքանչելագործ հատուկ զորություններ կվերագրվին անոր մեն մի տողին։ Այդ ազդեցիկ գիրքն եղած է նաև մեծ փաստը, որ Գրիգորին առաքինաղարդ կյանքը ցոլացնելով, անոր անունը տոնելի սուրբերու կարգը անցուցած է[23]։

Տարօրինակ է սակայն Դուրյանը իր դատումներուն մեջ։ Հիացո՞ւմ. հարկավ ան ալ ունի Նարեկացիի մասին. բայց որքա՞ն վերապահում Նարեկի արժեքը ընդգծած ատեն։

Հայ մատենագրության պատմության նվիրված իր երկասիրության մեջ, ուր կխաչանան Արմաշի և հետո Երուսաղեմի մեջ իր երած դասախոսությունները և որ լույս տեսավ հետմահու, ան արդարև կըսե.

«Ցնծ կտորներն բաղկացած այդ աղոթքները կամ ապաշխարողի աղերսները թարգման կհանդիսանան ինկած ու անմաքուր հոգիներու կսկիծին ու մեծերուն, միևնույն ատեն լսելի ընելով նաև վերելքի մը թափն ու թռիչքը դեպի հավիտենական բարձրությունն ու սրբությունը։ Իր մտածումները, որոնք խորհրդավոր խրթնությամբ մը կծածկվին շատ անգամ, զուրկ չեն սակայն փայլակի այն շողյուններեն, որ ցավերու աշխարհի մը մութ խորությունները կլուսավորեն մերթ ընդ մերթ։ Իր ոճը պահանջված հատակությունը չունի՝ բառական բարդություններու և քերականական անճշտություններու հետևանքով. այսուամենայնիվ, իր ծանր պարբերություններուն զանգվածային այն կազմը, որ իմաստ մը փոխադրելու անհարմար պիտի ըլլար ինքնին, զորեղ շունչի մը շարժմամբը կթավալի, իր մեջ լուծելով նաև քերականական այն անհարթությունները, որոնց հաճախ կհանդիպինք իր գրչին տակ, ու այդ պղտոր հոսանքին մեջեն դժվար չէ ընդնշմարել սակայն խորտակված կիրքերու հուսահատ մաքառումը։ Եթե զղջացող մեղավորի մը ա՞նքան անկեղծ խոսքերուն և չեմ հավատալիքներուն քիչ խառնվեին գրական արվեստի ճիգեր ու չափարերական տողերու շարքեր— այս վերջիններուն շա՞տ մտադիր է Նարեկացի— թերևս ամբողջ գործը ավելի պարզ և հասկնալի ըլլալու առավելությունը պիտի ունենար. սակայն և այնպես իր բանաստեղծական խանդը Աստուծո հետ խոսելու լեզվին կրցած է տալ նորագույն ճաշակ մը, առանց զերծ մնալու ժամանակին զարտուղի բերումներեն[24]։

Եվ սակայն նույն այդ Դուրյանն էր, որ իր սաներուն մեջեկ Նարեկ ընծա կրներ երբոր անոնք իրենց ընթացքը կավարտեին՝ պատվիրելով, որ չհեռացնեն զայն երբեք այրքեն և մտածումեն։ Ընծայականը, որ իր նվերին կընկերանար, գովք մըն է միևնույն ատեն ամենահանճար կրոնավորս-ին. «Ի նուէր նուիրելոյդ ի սպաս պաշտաման Սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեայց զմիոյ ի շնաշխարհիկ վարդապետացն մերոց զհոգեշունչ մատեանն մատուցեալ՝ ցանկամ զակն ի նմա պահել քեզ, ո՛չ միայն յիմաստս յոգնաթախանձ գրոյն, այլ և ի պատկեր անարատ ոգւոյ մեծահանճար կրօնաւորին ուշ կալեալ յաւէտ։

Որ գիտէ ընդ Աստուծոյ խօսել բանս համարձակութեամբ, գիտէ և մարդկան խօսել զարժանն, զպիտանին և զհաճոյսն ի ժամանակի։

Իցի՞ւ ըստ ըղձանաց Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականին արժանացուցէ զքեզ Հզօրն ճառնել և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր լսողացս»[25]։

Պատգամ մըն էր արդեն ան իր ձեռնասունները համար, ու անոնք չմոռցան երբեք այդ նվիրական պատգամը։

Արմաշի նոր սերունդեն Մուշեղ Սերոբյանն եղավ, որ վարդապետական իր թեզին Նարեկացին նյութ ընտրեց։ Դժբախտաբար տեղյակ չենք այդ ուսումնասիրության պարունակության։

Պետք էր անցներ քառորդ դար, որպեսզի երկու ուրիշ արմաշականներ, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանն ու Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին, ձեռնարկեին գրեթե միևնույն ատեն Նարեկի թարգմանության, ու այդ առթիվ վերլուծեին Նարեկացին ու իր Նարեկը։

Պետք է ըսել, թե երկուքն ալ ջերմությամբ մոտեցած են հանճարեղ մարդուն ու իր գլուխ-գործոցին։

***

Արդարև, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի համար ազնխավոր ու տիրական դեմքն է անիկա, որ իր հզոր ու բարի մտածումին քաղցրությամբը կիշխե իր ժամանակի մտքին վրա, ինչպես ծիրանի աղեղը՝ թունընկեցներն այնինչ մաքրված երկնքին վրա։ Խորհուրդի և զգացման բոլոր ձևերը, սիրտի և հոգիի բո-

23 Մատթիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում». Ա, կ. Պոլիս, 1913, էջ 1181։

24 Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան, «Պատմություն հայ մատենագրության», Երուսաղեմ, 1933, էջ 172—173։

25 Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Հատուցքան Նարեկի թարգմանության», էջ է։

լոր բերումները, խոսքի և ոճի բոլոր շեշտերն ու երանգները, որոնք հոս ու հոն, իրեն ժամանակակից այս կամ այն դպրոցին մեջ, միջավայրին իմացական ու բարոյական կյանքը կարտահայտեն որոշ ինքնատպություններով, ամենքը կմիանան իր մեջ զմայլելի ներդաշնակությամբ. իր նկարագիրը համադրությունն է իր գարուն ձգտումներուն»[26],

Թորգոմ արքեպիսկոպոս Նարեկացիի երկին մեջ կգտնե իմացական բոլոր տարերքը անոր գարուն. «Երկարոգի և ուշագիր վերլուծում մը հաջողությամբ պիտի դուրս բերեր անոր գրականության մեջեն՝ իր ժամանակին իմաստասիրական ուսուցման բոլոր տարերքը. քերթողականն ու հռետորությունը, քերականությունն ու բառարանը, մեկնողականն ու տրամասացությունը, դավանաբանությունն ու մինչև անգամ ֆոլկլորը. ամենքն ալ ընդելուզված ոսկի մը վրա, որ իր բանաստեղծությունն է, իր հոգեկան խառնվածքին ամենեն տիրապետող գիծը, իր էությունն իսկ. վասնզի ամեն բանեն ավելի բանաստեղծ մըն է ան, մեր մեծագույն բանաստեղծը»[27],

Ինչ որ սակայն մեծագույն հատկանիշը կնկատե Նարեկին, անոր հարազատությունն է հայ ժողովուրդի հոգիին. «Բայց ինչ որ իսկապես ուշագրավ է իր մեջ և հատկանշական, սա իրողությունն է մանավանդ, թե Նարեկացիին մեջ ներշնչումի և հմտության մարդը ինքն ու իր ցեղն է գերազանցապես. ոչինչ կա իր մեջ կեղծ ու օտարոտի։ Եվ այս է պատճառը, որ հակառակ անիմանալի իրթնաբանություններուն, որոնք հաճախ անթափանցելիին մոայլովը կպարուրեն իր տողերը, հակառակ զարտուղություններուն՝ որոնք կընդոտնեն լեզվի ու ճշտության ամեն կանոն, ան կմնա դարձյալ ներքնապես հասկցված և սրտախոսիկ մատենագիրը, որ գաղտնիքն ունի ամենքը մոգելու, ամեն սրտի մեջ աստվածայինին զգացումը վառելու»[28],

Թորգոմ սրբազան չընդունիր սակայն, որ արաբական ազդեցությունն ըլլա Նարեկացիի մեջ տիրապետողը. Նարեկացիի ոճին ակը գտնելու համար պետք է Ոսկեդար երթալ. «Ոճը մարդն է». ո՛չ մեկ ուրիշի համար այնքան ճիշտ պիտի ըլլար կիրարկել վճիռը, որքան Նարեկացիին համար։ Իր գրիչը պատկերն է իր անհատականության։ Իզուր պիտի ըլլար անոր ոճին մեջ տեսնել արաբերենին ազդեցությունը. այդ լեզուն, ինչպես և հունարենը, իսպառ անծանոթ մնացած է իրեն. և ինչ որ մեկին կամ մյուսին պատրանքը կթվին տալ մեզի անոր մեջ, պետք է բացատրել առ առավելն ազդեցությամբը մեր հին— նույնիսկ ոսկեդարյան— գրականության մեջ, զոր օրինակ Կորյունի և Ագաթանգեղոսի մեջ ի հայտ եկած մատենագրական երևույթներուն, և հետո հելլենական դպրոցի բազմաթիվ գործերուն, որոնցմե ո՛չ մեկը կրնար անծանոթ մնացած ըլլալ իրենին նման միտքի մը»[29],

Նարեկ, որ վերջին երկն էր Նարեկացիին, միևնույն ատեն եղավ անոր գլուխ-գործոցը, որուն շնորհիվ է, որ Նարեկացին կապրի դարերուն հետ մեկտեղ. «Իր գործերուն մեջ ոչ միայն վերջինն է ան, այլ նաև գերազանցը, ըլլալով ամենեն կատարյալ արտահայտությունը իր հոգիին։ Առանց անոր, այսինքն լոկ մյուսներով, իր անունը փայլակի ցոլք մը միայն պիտի եղած ըլլար մեր գրականության հորիզոնին հեռավոր մեկ կետին վրա. ասով՝ դարերուն հետ կապրի ինքը, մեր հավատքին երկնքին վրա նշուլելով իր հոգիին խորհրդալույս պայծառությունը»[30],

Նարեկի գլխավոր հմայքը իր բանաստեղծության, հետևաբար իր արվեստին մեջ կգտնե Գուշակյան[31],

Բայց ինչ որ բացառիկ կգտնե Գուշակյան Նարեկացիի մեջ, անոր ճիգն է հոգեկան կապանքները խզելու, և նոր հորիզոն բանալ անոր՝ անձնատուր մտասքանչության. «Անոր մեջ կտեսնես աղոթքի պայմանագրական կապերեն դուրս նետված հոգին, որ հայեցողության, այսինքն գերբնականին տեսակ մը անընդմիջական հայտնատեսությանը մեջ Աստուծո հետ մտերմական ծանոթության մը գաղտնիքը կփնտռե։ Ու որքան ավելի կհետամտի այդ բանին, այնքան ավելի կվերանա հոգեռանդն սավառնումներով, մինչև որ մտասքանչության (extase) վայրկյանի մը մեջ կմիանա անոր հետ սիրո միացումով, որ անհունապես գերազանց է քան իմացական միացումը։

Ինչ որ ուրիշ խորհրդապաշտ հոգիներու, զոր օրինակ Նվանության Հիսուսի մատենագրին (Թովմաս Գեմրացի) մեջ հաճախված երևույթ մըն է ասիկա, Նարեկացիին մեջ սակավագեպ՝ եղական բան մըն է սակայն։ Անոր մեջ հոգին, բուռն բայց կարճ փոթորկումի մը եաքը, կգտնե միշտ իր անդորրանքը, կատարելության իր իդեալին հագուրդն ընդունելով կարծես։ Մերինին մեջ, անդադրում մրրիկն է, որ կգոռա միշտ, ճեն-ճերող սրտի բոցավառումներուն մեջենն»[32],

26 Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան. «Նարեկ», էջ 20։

27 Անդ, էջ 21։

28 Անդ։

29 Անդ, էջ 22։

30 Անդ, էջ 23։

31 Անդ, էջ 24։

32 Անդ, է. 24—25։

Միստիկականությունն է աս Նարեկացիին, բայց «... ավելի հայեցի գիծ մը ունի իր միստիկականությունը, ուր մեր ճակատագրին մշտագիշեր մռայլը կա, չկորսված, շուրացված հույսին պայծառությունը փաղփուն»[33]։

Նարեկացին, բոլոր բացառիկ մարդոց պես, չէրծ չեղավ խծբծանքներե, մինչև իսկ հալածանքներե, բայց ի հեճուկս բոլոր ադոնց՝ անաղարտ մնաց ան հայ ժողովուրդի պաշտամունքին մեջ, ինչպես դիտել կուտա Գուշակյան. «Իր կյանքը, որ հայեցողական ապրումներու, գրի և գրչի տքնությանց, խոսքի և խորհուրդի, նվիրման և ներշնչումի մաքուր կյանքը եղավ, գերծ չմնաց— ինչպես միշտ—հաշաղկոտներու ստգտանքներեն։ Բայց ինչպես Ժանդը չի կրնար կրծել ոսկին, նույնպես նախանձը չհաջողեցավ աղարտել անոր համբավին անթծությունը. և ժողովուրդը, որ անոր կյանքին մեջ շոշափած էր անբասիր արժանիքի մը առաքինությունները, իր մահեն վերջը, իբրև սուրբի մը վկայարանը պատվեց անոր գերեզմանը»[34]։

Նարեկի թարգմանության իր վերջաբանին մեջ իրավամբ կմատնանշե Գուշակյան. «Ծանր ու դժվարին գործ է Նարեկի ուսումնասիրությունը, որ կրնա ամբողջ կյանքեր գրավել. անոր անթերի հասկացողությունը կկարոտի մեծ տքնությանց, ու կմնա դարձյալ ընդունակ միշտ՝ վերստուգումի և սրբագրության»[35]։

***

Կուգանք այլևս Գարեգին Տրապիզոնցիին։ Ան ալ, ինչպես Գուշակյանը, բացառիկ գուրգուրանքով կմոտենա Նարեկացիին ու իր Նարեկին, որովհետև մեծ վանականին ու իր երկին մեջ ան ալ կգտնե գերագույն մեկ արտահայտությունը հայ ժողովուրդի մեծ ճիգին դեպի բարձունք հասնելու, և մեծագույն հաղթանակը, զոր ան տարած է երբեմն։

Գուրյանի պատվերը Գարեգին Տրապիզոնցին հետը պտտցուցած է սրբազան պատգամի մը պես։ Ամենուրեք իր ալ բարձին գիրքն էր եղեր ան, ինչպես կվկայե ինքն իսկ Նարեկի թարգմանության իր հառաջաբանին մեջ այդ թարգմանությունը իր վարպետին ձոնելու առթիվ. «Նվերդ՝ նվիրվածիս Հայաստանյայց Եկեղեցու սպասարկության՝ քսաներկու տարիներ շարունակ եղավ ոչ միայն իմ գուրգուրանքի և պաշտամունքի առարկան, այլ նաև իմ սփոփարար ու գոտեպնդիչ բարեկամը թախիծի ու տրրտմության պահերուն և խորհրդամտմունչ ու սրբազան հուտությունը՝ տառապանքի ու հալածանքի օրերուն։ Այդ «հոգեշունչ մատյան»-ի մասին սնուցածս սերն ու հիացումը,— մանկունի հիշատակներուս հրեշտակային ու բուրումնավետ տարտամությամբը սաղմնավորված. փթթած ու ծլած,— ուռճացեր, ծաղկեր և իրենց գիտակցական հասունության են հանգեր Գպրեվանքի այն խորհրդազգած ու խնկապարար մթնոլորտին մեջ՝ որ Քու խանդարծարծ շնորհայի ներշնչումներովդ էր մագնիսացած, Հա՛յր»[36]։

Գարեգին Տրապիզոնցի կուգա իր վարպետին ըսելու, թե հավատարիմ մնաց իր ուխտին իր հետագա կյանքի ամբողջ տևողության. «Բայց ես, Հայր, չէի մոռցեր երբեք Քու ցանկությունն ու հանձնարարությունը՝ զգակն ի նմա պահելու։

Չէի մոռցեր և չէի կրնար ալ մոռնալ։ Ընդհակառակը, Նարեկի սերը իմ մեջ ավելի ու ավելի էր արծարծվեր այն սիրով, զոր ես կտածեմ ու կտածեմ իմ մտքի ու հոգու սրբազան ու անզուգական ծնողի նկատմամբ։ Չէիր կրնար մոռնալ հուշարար գիրք մը, ուր տասը դարերով իրարմե բաժնված երկու վարդապետներ, մեկն իր աստվածախոս քնարով և մյուսն իր խորհրդաշունչ սրինգով փորձեր էին կերտել իմ մեջ աստվածային խորհուրդի մը կրակով տոչորող հոգին»[37]։

Ու հիմա, իբրև տրիտուրը իր ուխտին, կուգա իր վարպետին մատուցանելու Նարեկը աշխարհաբարի վերածված, գիտակիր՝ թե ձգտած է անհնարինին, բայց և մաքառած իրականացնելու համար զայն։ «Քսաներկու տարիներ շարունակ ես իմ աչքը պահեր եմ այդ պաշտելի ավանդին վրա, չանալով թափանցել «յիմաստս յոգնաթախանձ գրոցն»։ Եվ Նարեկը, ուր մեծ վանականին խորհուրդը կթնճկոտի ա՛յնքան հրաշագեղ բազմերանգությամբ՝ զլխապտույտ անդունդներով և բարձունքներով միտքը խորասուզելով ու վերացնելով, միշտ ալ ունեցավ անհասության մաս մը, ուր մանկությանս հպանցիկ տպավորություններուն ու մակերևութային զգացումներուն տարտամությունը միայն կպայծառանար աստիճանաբար։ Բայց տիրանալ Նարեկի բովանդակ միտքին, հասնիլ անոր հանճարին աստվածային թռիչքին, նայիլ, առանց աչքի մթագնության, անոր հոգու բազմացնցուղ ճառագայթներուն, որոնցմով կերտված են իր բա-

33 Անդ. էջ 35։

34 Անդ. էջ 36։

35 Անդ. էջ 636։

36 «Նարեկ», Ողբերգություն Ս. Գրիգոր Նարեկացիոյ, աշխարհաբարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, Կ. Պոլիս, 1926, էջ ԺԳ։

37 Անդ. էջ ԺԶ։

ոերն ու խոսքերը հրաշալիորեն, մեկ խոսքով՝ բաց գիրքի պես կարդալ Նարեկացին իր Նարեկին մեջ, թերևս այնքան դժվար էր, որքան անհնար է երկինքը գրկել կամ օվկիանն ամփոփել ակնթարթի մը մեջ։ Երկու հոգիներու իրերաթափանցումը, երբ անոնցմե մեկը մարմնազերծ հավիտենությամբ մ'է երկրեն բաժնված և մյուսը նյութի բոլոր հավանական և ճակատագրային վիրապանքներու մեջ խարխափող ու դանդաչող եղկելի մ'է, ըղձանք մ'է լոկ»[38]։

Թե ինչ պաշտամունքի առարկա էր Նարեկը ժողովուրդին լայն խավերուն մեջ, կարելի է տեսնել այն գեղեցիկ էջեն, ուր Գարեգին Տրապիզոնցի կպատմե իր իսկ ծնողքին պատկառանքը դեպի Աղոթամատյանը[39]։

Նարեկացին ու Նարեկը գտնելու համար Գարեգին Տրապիզոնցին մեզ կտանի նախ երբեմնի հայ մենաստաններուն[40]։

Նարեկի մենաստանը ևս, ուր իր հոգին պիտի գար թրծել Նարեկացին, մեկն էր այն բացառիկ ուխտերեն, ուր կլայնար անոնց հոգին[41]։

Ի՞նչ ավելի շքեղ փաստ այն լայնամտության համար, որ կհասուններ այդ վանքերուն մեջ, քան մարդկային անկաշկանդ հոգին նույնիսկ աղոթած ատեն, քան ներբողը, զոր Նարեկացին պիտի ձոներ օր մը Աստուծո մորը[42]։

Ու ահա այդ մենաստանին մեջ էր, որ Նարեկացին իր գլուխ-գործոցը երկնեց. «Նարեկը... Հայ ժողովուրդի չերմեռանդ համբյուրներով ու սրտագին պաշտումներով երիցս սրբազնացած և ըստ հոգեգրիչ հեղինակի նախատեսության իսկ՝ «յամս հազարս» ապրելու կոչված Սաղմոսարանն է այն, իր պայծառ ոգիով, իր վսեմ և ո՛չ թե «հիվանդոտ» թռիչքով և իր հոյակապ կերտվածքով գերազանց քան Դավթյան տասնաղին։ Անհափշտակելի և անհնանալի սեփականությունն է այն Հայաստանյաց Սիրտին, իր սեռին մեջ անբաղդատելի՝ մարդկային հոգիի և միտքի որևէ արտադրության հետ»[43]։

Գարեգին Տրապիզոնցին համամարդկային հուզումներուն հետ, որոնցմով շաղախված է Նարեկը, զայն կնկատե իբրև ստեղծագործությունը հայ հոգիին. «Համամարդկային խորքին հետ, սակայն Նարեկն ու Նարեկացին ունին տարազ մը՝ որ որչափ ինքնատիպ ու ահնատական՝ կկրե հատկանշական դրոշմը զանոնք ծնող ցեղին, միջավայրին ու պատմության։ Այդ տարազը արվեստն է, որ կոչված է հայտնաբերել հոգիին թաքուն գեղեցկությունները միանգամայն, դյուցազնական գոռ, ողբերգական տխուր, քնարական գողտր և այլ զանազան շեշտերով»[44]։

Նարեկի արվեստին գալով, Գարեգին Տրապիզոնցին զայն կնկատե իբրև ամենեն սանձարձակ պոռթկումներեն մեկը մարդկային հոգիին, սանձարձակ նաև իր արտահայտության ձևին մեջ. «Նարեկը, հազվադեպ կաղացումներով որոնց սպրդումը կարելի է վերագրել գոնե մասամբ անճարակ ու անճաշակ ընդօրինակողներու, խառն ու տիրական կշռույթով դաշնավորված ու մերթ հանգավորված առոգանական (prosodique) ողբերգություն մ'է։ Տիրապետող չափն է 5+5, որով կսկսի նույնիսկ յուրքանչյուր խոսքի խորագիր. «Ի խորոց սրտից+խօսք ընդ Աստուծոյ։ Բայց Նարեկացիին արվեստը չի մտներ երբեք արվեստականության մը ընդվզեցնող սեղմ սահմաններեն ներս, այլ իր բռնող ու անզուսպ հոգին կուտա ներշնչումի հորդառատ թրթռումներու խաղընթաց, և երբեմն գահավիժող հոսանքին. այնպես որ առոգանություններն ալ իր հոգիի մերթ մեղմ ու մերթ ուժգին ելևէջներուն համաձայն կառնեն կշռույթի երաժշտական բոլոր ազատ ու քաղրահընչյուն չափերը»[45]։

Խորքի և ձևի այդ սանձարձակությունը սակայն չի խաթարեր կշռույթը ստեղծագործության մը, որ հայ մատենագրության մեջ կցցվի իբրև բացառիկ կոթող մը. «Նարեկի մեջ հոս ու հոն ցանցնված նմանատառական շարոցները (alternation), որոնք հետևակ գրչի մը տակ խրտուցիչ ճոռոմություններ պիտի նկատվեին, Նարեկացիի մագաղաթին վրա երաժշտական հաճելի եղանակավորումներ են միայն, որոնք չեն խաթարեր գործին գեղագիտական ընդհանուր ոգին։ Ա՛յսպես են նաև լեզվականքերականական այն կանոնազանց այլ պերճ սանձարձակությունները՝ որոնք Նարեկացիի քերթողական հանճարի տեսակ մը անիշխանական ոգիեն կպոռթկան և՝ մերթ ներշնչումի ամպածրար ու գլխապտույտ սավառնումներուն և մերթ գրչական ինքնամոռաց ու մոլորուն ոստոստումներուն մեջ կուգան ի հայտ»[46]։

38 «Նարեկ», էջ ԺԷ։
39 Անդ, էջ ԺԴ—ԺԵ։
40 Անդ, էջ ԻԲ։
41 Անդ, էջ ԻԴ—ԻԵ։
42 Անդ, էջ ԻԶ։
43 Անդ, էջ ԻԷ։
44 Անդ, էջ ԼԱ։
45 Անդ, էջ ԼԵ։
46 Անդ, էջ ԼԶ։

❁❁❁

Գարեգին Տրապիզոնցին, ուսումնասիրության մեջ[47], զոր կցած է Նարեկի Քարոզմանության, կհայտնվի, ինչպես տեսանք, խոր պես թափանցած Նարեկացիին և անոր ստեղծագործությանց։ Հիացումը, զոր ան ունի դեպի Նարեկացին և գուրգուրանքը, որով ան կմոտենա անոր ստեղծագործությանց, ավելի ևս կշեշտեն բախտավորությունը Նարեկը ըմբռնած ըլլալու իր բովանդակ խորքին մեջ։

Ճամբան հարթված է անոր վերածման համար մեր օրերու գրական լեզվին։

6. ՀԱՅ ՄՏՔԻ ՀՍԿԱՆ

Փաթեւ առաջ ներկա գլուխը, պետք է անգամ մը ևս ըսենք, թե Նարեկացին դարագլուխ մըն է, դարագլուխ այն իմաստով միայն, որ նոր էջ մը կբանա ան հայ մտքի պատմության մեջ. բայց այդ էջը կմնա բոլորովին ուրույն, ու չեն հպիր անոր հաջորդ էջերը պատմության գրքին. ան առանձին դագաթ մըն է, որուն չեն համարձակիր մերձենալ ուրիշները. ան իր մեջ կխտացնե դարերը, որոնք հայ հոգիին մեջեն անցան, ու անոնց նոր բարձունք կուտա, որպեսզի հայ հոգին կոթողեն գալոց դարերուն դիմաց. ան այդ բարձունքեն կնայի վաղվան դարերուն, իր խորքեն խորհուրդ ու գեղեցկություն բաշխելով անոնցմե ամեն մեկուն, իր փառքը պահելով միշտ բոլորեն վեր։

Արդարև Նարեկացին աննմանելի մնաց, և դեռ կմնա ահա տասը դար է։ Դարերը, իրմե առաջ ու իրմե հետո, իրենց հոգևոր հուզումները կրցեր էին պոռթկալ մեկը մյուսեն ավելի անուշ շարականներու մեջ. մեր տաղասացներն ու աշուղները, իրենց կարգին, տարբեր քաղցրություն բերին թրթռացնել հայ քնարին վրա, ու նոր օրերուն, հայ քնարը պանծացուց քերթողներու քանի մը սերունդ։ Նարեկացին բոլորեն վեր է, բայց նաև բոլորին մեջ։

Որ կողմեն ալ դիտես դուն Նարեկացին, մեծագույն հսկան կմնա միշտ ան բովանդակ հայ գրականության մեջ։ Ինչ բիծեր ալ փնտռես անոր երկին մեջ, ան քեզ կընկճե միշտ լույսի ու բոցի իր հեղեղին տակ։ Ան կախարդ մըն է, որ քեզ հանկարծ անդունդ կիջեցնե, որպեսզի մարդկային հոգվույն դիրքը տեսնես, և մերթ կտանի քեզ աստղերուն, որպեսզի քեզ որոնես աստվածային կատարելությունը։ Մերթ ալեկոծ ծով մըն է ան, որ կփոթորկե քու հոգիդ ևս անչափելի խռովքներով, մերթ քեզ կտանի դյուրական պարտեզներու, որպեսզի գտնե հոգիդ իր խաղաղությունը։ Երբ ան կաղոթե, հեզասահ առվակի մը մրմունջն է կարծես իր աղերսանքը, բայց հանկարծ զայրույթ ու բողոք կդառնա իր պաղատանքը ու կփորձե Աստուծո գահը սարսել։ Հայ լեզուն իր բովանդակ շքեղությամբ ու բոլոր իր գանձերով անզոր կմնա իր հոգվույն ճիչը պոռթկալու, ու նոր կերպարանք կառնե, անզուսպ բառերու հեղեղին մեջ ժայթքելու իր ներսի կրակը։ Միստիկ մըն է, որ խորհրդավոր իր բառերուն մեջ կսքողե անբացատրելին, ու հանկարծ իրապաշտ մը կցցվի դեմդ, որուն ոչինչ խորթ չէ շուրջի աշխարհեն։ Սիմվոլներով կխոսի ան մերթ քեզի, բայց իր հոգին քեզ լայն կբանա, որպեսզի իջնես մինչև խորերը։

Նարեկացին իր Նարեկին մեջ հայ հոգիին գերագույն ճիգն է բարձունք հասնելու։

❁❁❁

Կանցնին դարերը զիրար հերքելով։ Սերունդներ կուգան հեգնելով իրենց նախորդները, որդիները կուգան և կուրանան իրենց հայրերը։ Տախտակներ կփշրվին ու կգրվին ուրիշները, կուռքեր կգլորին վար և ուրիշներ կբարձրանան անոնց տեղ։

Ի՞նչ աստղեր, շողալե հետո պահ մը, անդունդը կիյնան, և ի՞նչ հռչակներ մոռացության գիրկը կերթան թավալիլ ընդմիշտ։

Բացառիկ հանճարներն են միայն, որոնց առջևեն դարերը գլխահակ կանցնին։

Նարեկացին այդ հանճարներեն է։ Ան պիտի մնա միշտ կանգուն, դարերը պիտի չդպին անոր։ Իրենց գլուխը պիտի ծռեն ու անցնին։ Տասը դար անցավ, ու տասնյակ դարեր դեռ կանցնին, բայց ան մնաց ու պիտի մնա իր անսասան փառքին մեջ։

❁❁❁

Ամբողջ տասը դար է, հայ հոգին կապրի անոր հմայքին տակ։ Ի՞նչ փույթ, թե անմեկնելի էին հաճախ անոր բառերը, անթափանցելի իմաստներով լի։ Հայ ժողովուրդը սիրեց անով աղոթել։ Հուսալքը մըն էր ան չարին ու չարիքին դեմ, փորձությանց ու պատուհասներուն դեմ, ու ժողովուրդը իրմե զայն երբեք չբաժնեց բոլոր մրրիկներուն, բոլոր աղետներուն ատեն։

Նարեկը վկա մըն է աշխարհին առջև, թե հայ հոգին կրնա հասնիլ լեռան կատարը, ու անմատչելի բարձունքներեն նայիլ վար՝ հեգնելու համար դարերը, որոնք փորձեցին զինքը մեռցնել, հեգնելու և ժողովուրդները, որոնք կարծեցին չքացնել զայն աշխարհի երեսեն։

Հայ ժողովուրդը, Նարեկը գրկած, մահը կանգոսնե։

(Շարունակելի)

[47] Այդ ուսումնասիրությունը, որ «Վերհիշումներս խորագիրը կկրե, կոչված էր հառաջաբան ըլլալ վերլուծական խորհրդածություններու, զորս ան պիտի կցեր Նարեկի ամեն մեկ գլուխին, ձեռնարկ, որ մնացած է ծրագրային վիճակի մեջ՝ «էջմիածնի և միջավայրի փոփոխություններուն հետևանքով»։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արտաքսյալ բեմի)

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ, Ս. ԳԱՅԱՆԵԻ ԵՎ Ս. ՇՈՂԱԿԱԹԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ԱՅԴ ՎԱՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Բ. Ս. ԳԱՅԱՆԵԻ ՎԱՆՔ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հարավ-արևելյան կողմը, Արարատյան դաշտում, կանգուն է Ս. Գայանեի հինավուրց վանքը, ըստ Ագաթանգեղոսի վկայության՝ կառուցված ճիշտ այն տեղը, ուր Ս. Գայանեն նահատակվեց իր երկու ընկերուհիների հետ. «Եւ զմիսն շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց Գայիանէ նորուն սնուցիչն երկու ընկերօքն»[48]։

Ագաթանգեղոսի ակնարկությունը վերաբերում է Ս. Գրիգոր Լուսավորչի 301 թվականին կառուցած նախնական վկայարանին, որտեղ ամփոփվեցին Գայանեի և նրա երկու նահատակ ընկերուհիների նշխարները· «Արարեալ, շինեալ, կազմեալ զսուրբ վկայարանս... զՍուրբն Գայանէ ի կողմն հարաւոյ իւրոյ մարտիրոսութեանն երկու ընկերօքն զնէր ի վկայարան տաճարին»[49]։

Հավանաբար 6 դարում այստեղ հաստատվում է վանք և միաբանություն։

Ս. Գայանեի վանքի մասին շուրջ 329 տարի ոչինչ չի հիշատակվում մեր պատմության էջերում։ Եզր կաթողիկոսը (630—641 թ. թ.), ըստ Ժ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու վկայության, Գայանեի խիստ մթին, խեղճ ու նեղ շինությունը քակել է տալիս և այն հիմնովին վերակառուցում կոփածո, սրբատաշ քարերով. «Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան Սրբոյն Գայիանեայ, որ երբեմն խրթին և մթին էր, զնա շինեալ՝ քակեալ, նա ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց՝ կոփածոյ քարամբք և կրով ձուլելով. և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին»[50]։

Ս. Գայանեի վանքում Եզր կաթողիկոսի օրով կատարված վերաշինությունից հետո, մինչև ԺԷ դարը, պատմության մեջ այս վանքի մասին նորից ոչինչ չի հիշատակվում։

ԺԷ դարում, Ս. Գայանեի վանքի տխուր և քայքայված վիճակի մասին վշտով գրում է Առաքել Դավրիժեցին· «Իսկ Գայիանեայ և Հռիփսիմեայ ամենեին անքնակ և անպարիսպ, նա և դրունք ևս ոչ գոյին եկեղեցեացն և խորանացն, և յարտաքուստ կողմանէ տանիսն բովանդակ և երեսք որմոցն քանդեալ, և հիմունքն խարխալեալ և խրամատեալ. և ի ներսի կողմանէ բեմն և յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ և բովանդակ եկեղեցին և խորանքն աղբովք անասնոց լցեալ, վասն զի յատուրս ամարայնոյ և ձմերայնոյ անասունք, որպէս եզինք և ոչխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն, և Գայիանեայ տաճարի տանիքն բովանդակ իջեալ էր, և որմունքն միայն կային կանգնեալ և ոչ այլ ինչ»[51]։

Փիլիպոս Ա կաթողիկոսի շինարարությունները Ս. Գայանեի վանքում.— Ինչպես նկա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի № 8-ից։

48 Ագաթանգեղոս, էջ 441։

49 Նույն տեղում, էջ 447։

50 Դրասխանակերտցի, էջ 46։

51 Դաւրիժեցի, էջ 180 (այս և հայոց բոլոր ընդգծումները մերն են— Վ. Վ. Տ.)։

բագրում է Դավրիժեցին, Ս. Գայանեի վանքը քայքայման վիճակի մեջ էր գտնվում, երբ Հայրապետական Աթոռ բարձրացավ Փիլիպոս Ա — շինարար կաթողիկոսը (1633—1655 թ. թ.)։ 1651 թվականին Փիլիպոս կաթողիկոսը սկսում է Ս. Գայանեի վանքում իր շինարարական աշխատանքներին։ Ըստ Դավրիժեցու վկայության, նա կատարում է հետևյալ վերանորոգումները. «Եւ յետ ամենայն շինուածոցն Էջմիածնի, զոր սուրբ Հայրապետն Փիլիպոս արար, այնուհետև ձեռն ի գործ էարկ, զի և զտաճարս սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ նորոգեսցէ...։ Բայց Սրբոյն Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր, զի տանիքն բովանդակ իջեալ էր, միայն շուրջանակի որ-

Ս. Գայանեի վանքում, բացի վերոհիշյալ հիմնական նորոգություններից, Փիլիպոս կաթողիկոսը կատարում է նաև ավագ խորանի ներքևի մատառն նորոգությունը. «Քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատուռն՝ որ է դիր հանգստեան նշխարաց սրբոցս, աւերեալ էր բնաւին, ոչ միայն մատուռն, այլ և ի վերայ նորին կառուցեալ աւագ բեմն աւերեալ և քանդեալ էր մինչև ցյատակն, և աղբիւսովք և գոհհօք լցեալ մինչև ի վերս»[53]։

Ըստ Դավրիժեցու վկայության, Փիլիպոս կաթողիկոսի Ս. Գայանեի վանքում կատարած վերանորոգումների ժամանակ հայտնաբերվում են Ս. Գայանե կույսի և ընկերուհիների նշխարները երեք տապանների մեջ.

Ս. ԳԱՅԱՆԵԻ ՏԱՃԱՐԸ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

մունեմ և չորեքին սիւնեմն կային կանգուն, գլուխն ի բաց. և յատակի որմոցն ասա և աճող ծակոտեալ և խրամատեալ. որոց արար նորոգման սկիզբն կոթուղիկոսն Տէր Փիլիպոս, մեծաձիգ կառոյցի և ջանի, և բազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկաշէն, ի հիմանց մինչև ցգագաթն զմրէքին. յորոց վերայ կառուցին զնշան տէրունական խաչին»[52]։

[52] Դաւրիժեցի. էջ 238։

ի նեղքոյ հիման եկեղեցւոյն, որոց մինն էր ի կողմն հարաւոյ և մինն ի կողմն հիւսիսոյ. և մինն ի կողմն արևելից։ Եւ եղև գիւտ նշխարաց սրբուհւոյ կուսին Գայիանեայ և ընկերաց նորա, և նորոգումն նորին եկեղեցւոյն ՌԺԱ թուին (1652) հոկտեմբեր ամսոյ ԺԲ, յաւուր երեքշաբթի»[54]։

Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը, իր հերթին, վկայում է Փիլիպոս կաթո-

[53] Նույն տեղում։

[54] Նույն տեղում, էջ 223։

դիկոսի Ս. Գայանեի վանքում կատարած նորոգությունների մասին. «Փիլիպպոս կաթողիկոս Հաղբակեցի յամի 1652, նախ քան զշինութիւն նորոգութեան վանաց Սրբուհւոյն Հռիփսիմեայ, նորոգէ զսա գրեա թէ ըստ մեծի մասին, և զկաթուղիկէն պխովին՝ որ ի վերայ չորից սեանցն ի միջավայր տանեաց տաճարին. յայս կաթուղիկէ ի բաժնի արևմտեան հարաւոյ յարտաքին կուսէ գրի թուական շինութեան՝ ըստ այսմ՝

ՌՃԱ թուին նորոգեցաւ եկեղեցիս
եւ շինեցաւ կաթուղիկէս»[56],

Եղիազար Ա Այնթապցու (1682—1691 թ. թ.) վերանորոգությունները Ս. Գայանեի վանքում.— *Ս. Գայանեի վանքում, Փիլիպոս կաթողիկոսից հետո, Եղիազար Ա Այնթապցին 1688 թվականին կատարում է մի շարք վերանորոգություններ, որոնք հիշվում են վանքի արևմտյան պատի հյուսիսային կողմի աջում գտնվող 1688 թվակիր հետևյալ արձանագրության մեջ.*

«Ես Տէր Եղիազար կաթողիկոս Սուրբ Էջմիածնի, Հռոմկլայեցի գոլով, տեսի զամայութիւն սուրբ վանացս, որ յանուն Սրբուհւոյն Գայիանեայ[ս], շարժեցայ ի զուր ճոգեւոր սիրով, եւ պարսպեցի զսա սրահով, յարկով եւ խցերով. նայեւ զգաւիր եկեղեցոյս կառուցեալ. յաջմէ խորան յանուն Սուրբ առաքելոյն Պետրոսի, և ի ձախակողմն խորան յանուն Սուրբ առաքելոյն Պողոսի, յիշատակ ճոգոյ իմոյ. եւ ի Հայոց թվականիս հազար ճարիւր Լէ ամին»:

Եղիազար կաթողիկոսի Ս. Գայանեի վանքում կատարած այլ շինարարությունների մասին խոսում է ժամանակակից Զաքարիա սարկավագ պատմիչ Հովհաննավանեցին. «Նոյնպէս և ի մայրն Գայիանէ շրջապատեալ պարսպեաց. և յարևմտեան դրանն արտաքոյ կողմանէ շինեաց խորանս (Ս. Պետրոսի անվան— Վ. Վ. Տ.). և ի նոյն տեղին հիւսիսոյ կողմն շինեաց զգերեզման իւր և զտնտեսատունն և դիտուցան. հաստատեաց և միաբանս զի ժամ և պատարագ մատչի հանապազ»[58],

Դավիթ կաթողիկոսը 1803—1804 թվականներին ցանկացել է վերանորոգել Ս. Գայանեն. «Զի Տեառն գործակցութեամբ ի յառաջիկայ գարնանս ձեռն ի գործ արարեալ նորոգեսցուք զխախտեալ տեղիսն Սրբոյ Աթոռոյս, և վանից Սրբոյ Գայիանէի...»[57],

Իսկ Բարգուղիմեոս Ջելեպին գրում է. «Բայց զի ահա ցուրտն վերաժամանի, և մշակաց բանիլ ոչ լինի, վասն որոյ ունիմք գնալ ի Սուրբ Աթոռն և սպասել մինչև ցրացումն գարնան. զի յայնժամ շինել տացուք և զեկեղեցին, ունիմք նորոգեցուցանել ի գարնանն և զտանիսն Աստուածածէջ Սրբոյ Տաճարին, և զեկեղեցին Սրբուհւոյն Գայիանեայ, որք խախտեցեալք են, մինչ Տէր յաջողեսցէ»[58],

Վերանորոգությունները Ս. Գայանեի վանքում Գևորգ Դ կաթողիկոսի (1864—1882 թ. թ.) օրով, ձեռամբ վանահայր Վանեցի ծայրագույն վարդապետ Բաստամյանցի— *1872 թվականին, Ս. Գայանեի վանքի վանահայր, բազմավաստակ գիտնական և եկեղեցական իրավունքի հմուտ մասնագետ Վահան վարդապետ Բաստամյանցը կատարում է վերանորոգչական մեծ և հիշատակելի աշխատանք։*

Հ. Ղ. Ալիշանը դրվատանքով է խոսում Բաստամյանցի շինարարության մասին Ս. Գայանեի վանքում. «Յետին ժամանակս Գէորգ Դ կաթողիկոս յամի 1872 յանձն արար զտեղին՝ ի խնամս եռանդուն և գիտնական նորընծայ վարդապետի Վահանայ Բաստամեանց, սատարելով և ոռճիկ յԱթոռոյն, որով ձեռն արկեալ նորա նորոգեաց և զվանսն և զեկեղեցին՝ ոչ սակաւ խաթարեալս և աղտեղեալս, բանալով զխցեալ լուսամուտսն և ընդարձակեալ ուղ և տասն պատուհանս. և յետ նորոգման գմբէթին և որմոցն, զարդարեաց և զներքինն վայելուչ սպասուք, կառոյց կամարակապ դուռն յարևմտեան պարսպին հանդէպ մեծի դրան եկեղեցւոյն. շինեաց բազմասենեակ տուն վանահօր, և բնակարանս միաբանից, Հաստատեաց և դպրոց մանկանց և տպագրատուն, ուր տպագրէր ամսագիր Քերթ մի Դպրոց անուն, որք խափանեցան յետ երկուց ամաց՝ առ ծանրութեան ծախուցն, և առ բացակայութեան իւրոյ յԵւրոպա»[59],

Վահան վարդապետը Ս. Գայանեի վանքում իր կատարած վերանորոգությունների մասին հանգամանորեն գրել է «Մշակ» թերթում[60],

Այնուհետև, Բաստամյանից հետո, Ս. Գայանեի վանքում կատարվել են մասնակի վերանորոգումներ։

Խրիմյան Հայրիկի օրով, ինչպես վկայվում է «Արարատ» ամսագրում, նույնպես ավարտված է Ս. Գայանեի վանքի տանիքի և հատակի վերանորոգությունը։ «Այս վանքի դարբասի երկու կողմը շինված նոր կո-

56 Շահխաթունյանց, Ա, էջ 274։

58 Զաքարիա սարկաւագ, «Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870 թ., Բ, գլ. ԽԲ, էջ 106։

57 Պլատ ավագ քահանա Աղանյանց, «Դիվան Հայոց պատմության», գիրք է, Թիֆլիս, 1908 թ., էջ 328.

58 Նույն տեղում, էջ 386։

59 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 244։

60 «Մշակ», 1879 թ., № 62։

փածո և կամարակապ շինությունն ևս արտաքուստ ավարտված է»[61]։

Ս. Գայանեի վանքի վերանորոգությունները Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի օրով.— Խրիմյան Հայրիկի օրից մինչև Վազգեն Ա Հայրապետի գահակալությունը, ոչ մի նորոգություն չի կատարվել Ս. Գայանեի վանքում։ Վեհափառ Հայրապետը, իր անդրանիկ կոնդակում, ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովրդի, հայտարարեց, որ ի շարս այլ վանքերի, վերանորոգելու է նաև Ս. Գայանեի վանքը։

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գործող Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը կազմել է Ս. Գայանեի վանքի վերանորոգության ծրագիրը։

1960 թվականի մարտից սկսվել է Ս. Գայանեի վանքի հողամասի լրիվ պարապատումը՝ տեղական սրբատաշ տուֆ քարից։ Վանքը շուտով կկանաչապատվի պտղատու ծառերով։

Նոր տապանաքարեր գրվեցին 1920 թվականից ի վեր վանքի շրջապատում թաղված Մայր Աթոռի հանգուցյալ միաբանների գերեզմանների վրա՝ մարմարյա տախտակներով և տապանագրությամբ։

Ս. Գայանեի վանքի այժմյան վերանորոգության հիմնական և գլխավոր նպատակն է եկեղեցու տանիքի պատերի դրսից և ներսից վերանորոգումն ու ամրացումը և Ս. Սեղանի վերակառուցումը։

Ա. Գայանեի եկեղեցու ներսի ծեփը, Ծ. Հռիփսիմեի օրինակով, կմաքրվի ավազաշիթ մեքենայով, նրա նախնական տեսքը վերահաստատելու նպատակով։ Հիմնովին կկառուցվի պատարագի Ս. Սեղանը հայկական ոճով։

Վերակառուցվում է արևմտյան դռան կից եղիազար կաթողիկոսի կառուցած գավիթը, որը հանդիսանում է կաթողիկոսների դամբարանը։ Եկեղեցու հատակը վերաշինվում է կարմրավուն տուֆ քարերով։

Ծրագրված է բակում կառուցել նոր մայթեր։ Միաժամանակ վերանորոգման կենթարկվեն միաբանական գերեզմանները։

Ս. Գայանեի վանքում թաղված կաթողիկոսների տապանագրությունները.— Վերջին ժամանակներս Ս. Գայանեն եղել է կաթողիկոսների դամբարան։

Ս. Գայանեի վանքում թաղված են հետևյալ կաթողիկոսները.

Վանքի հյուսիսային կողմում՝ Հակոբ Ե Շամախեցի (1759—1763 թ. թ.), եղիազար Ա Այնթապցի (1682—1691 թ. թ.), Ղազար Ա Ջահկեցի (1737—1751 թ. թ.), Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի (1858—1865 թ. թ.), Դավիթ Ե (1801—1807 թ. թ.), երկու գերեզմանի աղատ տեղից հետո, վերջում խոչեն Ա Մուրադբեկյան (1932—1938 թ. թ.)։

Վանքի հարավային կողմում, արևմտյան դռան առջև, թաղված են Սիմեոն Ա Երևանցի (1763—1780 թ. թ.), Աբրահամ Բ Մշեցի կամ Խոշաբեցի (1730—1734 թ. թ.), Մինաս Ա Ակնեցի (1751—1753 թ. թ.), Ս. Էջմիածնի առաջին պրոկուրոր Թովմա Ղորղանյան, Հովսեփ ընտրյալ կաթողիկոս Արղությանը, Բարսեղ տեղապահ արքեպիսկոպոս։

Այստեղ թաղված կաթողիկոսներից եղիազար Այնթապցու, Աբրահամ Խոշաբեցու և Մինաս Ակնեցու շիրիմների վրա տապանաքարեր չկան, բայց կան փաստեր, որ նրանք թաղվել են այստեղ։

Այսպես, եղիազար Այնթապցի կաթողիկոսը, ըստ Զաքարիա սարկավագ Հովհաննավանեցի պատմիչի վկայության, թաղված է «ի նոյն տեղին, հիսիսոյ կողմն շինեաց զգերեզման իւր»[62]։

Եղիազար կաթողիկոսի գերեզմանը գտնվում է Ս. Գայանեի վանքի հյուսիսային կողմում, Հակոբ Շամախեցու և Ղազար Ջահկեցու շիրիմների մեջտեղը։ Այդ մասին վկայում է նաև Շահխաթունյանցը, որն իր ժամանակին գրի է առել կաթողիկոսների տապանագրությունները. «ի միջոցի երկուց այսոցիկ կաթողիկոսաց (Հակոբ Շամախեցու և Ղազար Ջահկեցու— Վ. Վ. Տ.) ամփոփեալ է մարմին Եղիազարու կաթողիկոսի Հռոմկլայեցւոյ ի ՌՃԼԹ թվականի Հայոց՝ յամի Տեառն 1690, յ8-րդ օգոստոսի»[63]։

Արդարև, այսօր էլ Ս. Գայանեի վանքի հյուսիսային կողմից առաջին գերեզմանն է Հակոբ Շամախեցունը, իսկ երրորդը՝ Ղազար Ջահկեցունը։

Սիմեոն Երևանցին ևս վկայում է, որ Եղիազար Այնթապցին «այսպէս խրոխտ կենաք մնացեալ՝ փոխի ի Քրիստոս ի ՌՃԼԹ թուին մերում և դնի յաջ կողմն գաւթի Սուրբ Գայիանէին՝ զոր ինքն էր շինեալ»[64]։

Ալիշանն ևս ընդունում է Եղիազար կաթողիկոսի Ս. Գայանեի հյուսիսակողմում թաղված լինելը. «Քանզի շատք ի յետին կաթողիկոսաց թաղեալ են ի գաւթի անդ եկեղեցւոյն, ուր նախ շինողն Եղիազար պատրաստեալ էր զգերեզմանն իւր ի հիւսիսոյ կողմանէ, այլ տապանաքար նորին

61 «Ս. սրատ», 1895 թ. հոկտեմբեր, էջ 402։

62 Զամարիա պատմիչ. «Պատմութիւն», էջ 106։

63 Շահխաթունյանց. Ա, էջ 278։

64 Սիմեոն կաթողիկոս Երևանցի. «Ճամբոր», էջ 86։

բարձնալ է, իսկ յայտնիրն արձանագրսբ են...»[65]։

Օրմանյան սրբազան ևս Եղիազար կաթողիկոսի դերեզմանի տեղը դնում է Ս. Գայանեի վանքի հյուսիսակողմը. «Եղիազար թաղված է Ս. Գայանեի վանքի խորաշեն գավթին այակողմը»[66]։

Այդ ձևով ընդունում են նաև Հուսիկ վարդապետ Մովսիսյանը[67], *ինչպես նաև Հ. Ս. Էփրիկյանը*[68] *և այլ բանասերներ։*

Ս. Գայանեի վանքի հյուսիսային կողմում առաջին շիրիմը Հակոբ Եամախեցունն է, հետևյալ տապանագրությամբ.

ՅԻՇԵԱ ԱՀՈՎԻ ՔՈ ԾԱՌԱՅԻՆ,
ՈՐ Է ՍՐԲՈՅ ԱՐԵԱՆՑ ՔՈ ԳԻՆ,
ՏԵԱՌՆ ՅՈԿՈՎԲԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ,
ՇԱՄԱԽԵՑԻ ԶՈՐ ԿՈՉԷԻՆ,
ՅԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԴ ՄՈՅԹ ԵՐԿՆԱՅԻՆ,
ԴԱՍԵԱ ԸՆԴ ՍՈՒՐԲՍ ԱՄԵՆԵՍԻՆ։
ԵՂԵԻ ԹՈՒԱԿԱՆՍ ՌՄԾՔ, ԵԻ
ՅԱՄՍԵԱՆՆ ՄԱՐՏԻ 21»։

Երկրորդն է Եղիազար Ա Այնթապցու շիրիմը, առանց տապանագրության։ Այժմ, Վեհափառ Հայրապետի հրամանով, պատրաստվում է նոր տապանագրություն։



ԵՂԻԱԶԱՐ Ա ԱՅՆԹԱՊՑՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԳԱՅԱՆԵԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ

«ՔՐԻՍՏՈՍ ՈՐԴԻ ՀՕՐ ՄԻԱԾԻՆ,
ԴԱՏՈՂ ԱԶԳԻ ՄԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ,
ՅՈՐԺԱՄ ԳԱՅՅԵՍ ՓԱՌՕՔ ԿՐԿԻՆ,
ԱՌ Ի ԴԱՏԵԼ ԶԱՄԵՆԵՍԻՆ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՆԺԱՄ ՔՈՅԻՆ.
ԵԻ ԳԹՈՒԹԵԱՄԲԴ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ,

Երրորդն է Ղազար Ջահկեցու շիրիմը, հետևյալ տապանագրությամբ.

«ՁՔՆԱՂ ՏԱՊԱՆՍ Է ՀՐԱՇԱԼԻ,
ԱՌՆ ՄԵԾԻ ԳԻՏՆԱԿԱՆԻ,
ՏԵԱՌՆ ՂԱԶԱՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ,
ՀԱՆՈՒՐՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԳԻ,
ՈՐ Ի ՄԱՐՄՆԻ ՔԱՂՑՐԱՎԱՐԻ,
ԲԱՐԻՈՔ ՄԱՀՈՒԱՄԲ ՎԵՐԱՓՈԽԻ,
ԴԻՄԵԱԼ ԱՌ ՏԷՐ Ի ՆԱ ՀԱՆԳՑԻ,
ՈՐՈՒՄ ԲԱՂՁԱՆ ՀՈԳԻՔ ԲԱՐԻ,

65 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 243։
66 Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2660։
67 Հուսիկ վրդ. Մովսիսյան, «Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատմություն», 1884 թ., էջ 278։
68 Հ. Ս. Էփրիկյան, «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», էջ 427։

Ի ՄԻՆ ՀԱՋԱՐ ԵՐԿՀԱՐԻՒՐԻ,
ՄԵՐՍ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ ԹՈՒԱԿԱՆԻ,
Ի ԾԱՂԿԱԶԱՐԴ ՅՕՐ ՎԵՐՋ ՄԱՐՏԻ.
ԱՍՏ ԱՄՓՈՓԵԱԼ ՎԵՐԱՊԱՏՈՒԻ»[69]:

Չորրորդն է Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու շիրիմը. հետևյալ կարճ տապանագրությամբ.

«ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ՄԱՏԹԷՈՍ Ա Կ. ՊՕԼՍԵՑԻ.
ՎԱԽՃԱՆԵՑԱԻ ԾՕԹԱՆԱՍՈՒՆ
ԵՒ ՄԻ ԱՄԱՑ Ի 21 ՕԳՈՍՏՈՍԻ 1865 ԱՄԻ»:

Հյուսիսային կողմից Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու կողքին կան երկու գերեզմաններ, որոնց մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում պրոֆ.-դոկտ. Լ. Մ. Մելիքսեթ-բեկը[70].

Հինգերորդ տապանաքարը Դավիթ կաթողիկոս Էնեգեթեցունն է, հետևյալ տապանագրությամբ.

«ԱՀԱ ԴԱՄԲԱՐԱՆ ԵՒ ՅԱՐԿ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ
ԴԱՒԻԹ ՀՕՐՆ ԱՅՆ ԴԻՈՑ ՀԱՆԳՍՏԵԱՆ,
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԻՒ ՕԾՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԻՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ,
ՈՐՈՑ ԴԱԴԱՐԵԱԼ Ի ԽՈՒՈՎՈՒԹԵՆԷ,
ՁԿՆԻ ՀՐԱԺԱՐՄԱՆ Ի ՎԵՀՈՒԹԵՆԷ,
ՍԻՐՈՎ ՄԻՇՏ ԳԳՈՒՌԵԱԼ Ի ՊԵՏԷՆ ՄԵՐՄԷ
ՍՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ ՄԵԾԷՆ ԵԳԻՐԵՄԷ:
ՀԱՆԳԵԱՒ ՍԱ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ՓՐԿՉԱԿԱՆ,
ՀԱՋԱՐ ՈՒԹՆ ՀԱՐԻՒՐ ՅԱՍՆԵՕԹ ԹՈՒԱԿԱՆ
Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ ԱՒՈՒՐ ՄԻԱԿԱՆ,
ՄԵԾԱՇՈՒՐՔ ՓԱՌՕՔ ԵԴԱՒ ՅԱՅՍ ՏԱՊԱՆ»:

Վեցերորդ և յոթերորդ տեղերը դատարկ են։

Ութերորդը Խորեն Ա կաթողիկոս Մուրադբեկյանցինն է, հետևյալ արձանագրությամբ.

«ԽՈՐԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
1873—1932—1938»:

Ս. Գայանեի վանքի հարավային կողմի գավթում նույնպես կան 10 գերեզմաններ, որոնցից մի քանիսը ունեն տապանագրություն։ Տապանաքարեր չունեն Աբրահամ Խոշաբեցու և Մինաս Ակնեցու շիրիմները։ Այստեղ թաղված են Սիմեոն Երևանցին (1763—1780 թ.թ.), Աբրահամ Խոշաբեցին, Մինաս Ա Ակնեցին, Ղուկաս Կարնեցին (1780—1799 թ. թ.) և Հովհան բնտրյալ կաթողիկոս Արղությանցը։

Սիմեոն կաթողիկոս Երևանցին Աբրահամ Բ Խոշաբեցու մասին գրում է. «Ապա ի Ռաշկ (1684) թուին վախճանի և գնի ի գաւիթ Սրբոյն Գայիանէայ ի Խախակողմն կոյս»[71].

Շահխաթունյանցը վկայում է, որ Ս. Գայանեի վանքի գավթի հարավային կողմում, «կից յայս տապան ի հիւսիսոյ է շիրիմն Բ Աբրահամ կաթողիկոսի Մշեցւոյ՝ որ վախճանեցաւ յամի 1734, ի 11 նոյեմբերի՝ որոյ մարմարիոնեայ վէմ մակագրութեամբ հանդերձ անհետացեալ է և կից սմին ըստ այնմ Մինասայ կաթողիկոսի Ակնեցւոյ՝ որ վախճանեցաւ յամի 1753, ի 12 մայիսի, այսր տապանի վէմ գոլով կիսարեկ, և այն հատոր վիմին անհայտ, թողաք ի բաց գթերին մակագրութիւն»[72].

Իրոք, Ս. Գայանեի վանքի հարավային կողմը, Սիմեոն Երևանցու գերեզմանի կողքին, կան երկու գերեզմաններ առանց տապանագրության։ Դրանցից մեկը Աբրահամ կաթողիկոսի գերեզմանատեղն է, իսկ մյուսը՝ Մինաս Ակնեցու։

Իրենց աշխատություններում Ալիշանը[73], Հ. Ս. Էփրիկյանը[74] և Օրմանյանը[75] հաստատում են նույնը։

Ս. Գայանեի վանքի հարավային կողմում առաջին գերեզմանը Սիմեոն կաթողիկոս Երևանցունն է։ Ղուկաս կաթողիկոս Կարնեցին, մանրամասնորեն նկարագրելով Սիմեոն կաթողիկոսի մահվան պարագաները և տալով տեղեկություններ Մայր Աթոռի մասին, Երևանցու թաղման մասին գրում է. «Որ և թաղեցաւ յատուրն Բ շաբաթի ի սուրբ վանսն Գայիանէի, հուպ դամբարանի Տեառն Աբրահամու հոգեւոյս հայրապետի Մշեցւոյ, ըստ կտակի և բաղձանաց իւրոց»[76].

Սիմեոն կաթողիկոս Երևանցու տապանագրությունը հետևյալն է.

«ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ԻՄ ՏԷՐ ԲԱՐԻ,
ԼՈՒՐ ԱՂԷՏԻՑ ՔՈՅՍ ԾԱՌԱՅԻ.
ԴՈՒ ԿԱՑՈՒՑԷՐ ՁԻՍ ՅԱՅՍ ԿԱՐԳԻ,
Ի ՄՇԱԿԵԼ ԸՆԴՔՈ ԱՅԳԻ.

69 Շահխաթունյանցը ջահկեցու այս տապանագրությունը սխալմամբ իր աշխատության առաջին հատորում (էջ 377) գրել է որպես առաջին տապանագրություն, իսկ Շամախեցունը՝ երկրորդը, որ ճիշտ չէ. «Ի միոյ երկուց այսոցիկ կաթողիկոսաց ամփոփեալ է մարմին Եղիազարու կաթողիկոսի Հոռմկլայեցւոյ ի Ռաշկ Թուականի Հայոց՝ յամի Տեառն 1697, թ-բդ օգոստոսի»։

70 Պրոֆ.-դոկտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի վանքերի երկրեղվյան յափսեր տապանագրերը», «Էջմիածին», 1958 թ. սեպտեմբեր, էջ 34—38։

71 «Ջամբռ», էջ 32։

72 Շահխաթունյանց, Ա, էջ 379։

73 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 243։

74 Հ. Ս. Էփրիկյան, «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», էջ 428։

75 Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2882։

76 «Դիվան Հայոց պատմության», գիրք Դ, էջ 101։

ԻՍԿ ԵՍ ԱՆՈՒԱՄԲ ԱՅՍ ՊԱՇՏՕՆԻ.
ԴՏԱՑ ԾԱՌԱՅ ԱՄԵՆԱՅՆԻ.
ԵՒ ՈՐՊԷՍ ԹԷ ՁՊԱՐՏԱՒՈՐ ՄԻ,
ՓՕԽԱՏՈՒԱՑ ՁԻՍ ՄԱՏՆԵՑԻ.
ՈՅՑ ԵՏՈՒ ԵՒ ԾԱՌԱՅԵՑԻ
ՎԱՐՁՆ ԻՄ ՁՍՈՒԳ ԵՒ ՁՅԱՒ ԱՌԻ.
ԱՅՍՈՒ ԿԵՆՕՔ ՈՂՈՐՄԵԼԻ
ԺԱՄԱՆԱԿՍ ԻՄ ՎՃԱՐԵՑԻ.
ԱՅԺՄ ԱՄՕԹՈՎ ԿԱՄ ԱՌԱՔԻ.
ՁԻ ԾԱՌԱՅԵԼ ՔԵԶ ՁԿԱՐԱՑԻ:
ԱՐԴ ԴՈՒ ՆԱՅԵԱՑ ՅԻՍ ՔԱՂՑՐՈՒԹԵԱՄԲ.
ԹՈՂ ՁՅԱՆՅԱՆՍ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՄԲ.
ՈՒՐԱԽԱՑՈ ԱՌ ՔԵԶ ԿՈՁՄԱՄԲ.
ԵՒ ՍՓՈՓԵԵԱ ՔՈ ՍՈՒՐԲ ՏԵՍԼԵԱՄԲ.
ՎԱՍՆ ԽԱՁԻՒ ՁՈՐ ՊԱՇՏԵՑԻ.
ԵՒ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆԴ ՁՈՐ ԿՐԵՑԻ.
ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ
Ի ՌՄԻԹ ԹՈՒԻ, ԵՒ ՅՈՒԼԻՍԻ 26-Ի.
Ի ՎԱՐԴԱՎԱՌ ԿԻՒՐԱԿԷԻ»:

Սիմեոն Երևանցու կողքի երկրորդ գերեզմանը Աբրահամ Բ Խոշաբեցունն է, առանց տապանաքարի. «Կից յայս տապանի հիւսիսոյ է շիրիմն Բ Աբրահամ կաթողիկոսի Մշեցւոյ»[77],

Նույն կողմի երրորդ գերեզմանը Մինաս Ա Ակնեցունն է. «Կից սմին ըստ այնմ Մինասայ կաթողիկոսի Ակնեցւոյ որ վախճանեցաւ յամի 1735, ի 12 մայիսի, այսր տապանի վէմ գոլով կիսաբեկ, և այն հատոր վեմին անհայտ, թողաք ի բաց զթերին մակագրութիւն»[78], Մինաս կաթողիկոսի շիրիմը ևս առանց տապանագրի է։

Մինաս Ա Ակնեցու կողքին թաղված է Ղուկաս կաթողիկոս Կարնեցին, որի շիրիմն ունի հետևյալ տապանագրությունը.

«ՅԱՐԿ ԴԱՄԲԱՐԱՆԻՍ Է ՎԵՀԻՆ ՄԵԾԻ
ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,
ՈՆԻԿ ԳԱՒԱՌԱՒ ԷՐ ՍԱ ԿԱՐՆԵՑԻ,
ՀԱՆԴԱՐՏԱԿԵՆՑԱՂ ԵՒ ՁԱՆԻՒՔ ԲԱՐԻ.
ԹԷՊԷՏ ԴԻՊԵՑԱՒ ԴԱՌՆ ԱՄԱՆԱԿԻ,
ՊԱՏԵՑԵԱԼ ՎՇՏՕՔ ԸՍՏ ՓՈՂՈՑՆ ՄԵԾԻ,
ԱՑԼ ՅՕՐԷ ԿՈՁՄԱՆՆ ԵԴ ԻՍԿ Ի ՄՏԻ
ՇՔԵՂԱՁՄՐԴԵԼ ԶԳԱՀՆ ՀՐԱՇԱԼԻ.
ՈՐ ԵՒ ԵՏ ԾԱՂԿԵԼ ԿԱՐԻ ՍԵՐԱԼԻ.
ՁՄԷՋ ՏԱՃԱՐԻՆ ՄԻԱԾՆԱՒՋԻ.
ՆԱ ԵՒ ՆՈՐՈԳԵԼ ԵՏ ՇՈՒՐՋԱՆԱԿԻ.
ՇԻՆԵԱԼ ԵՒ ՁԱՅԼ ՇԷՆՍ ՈՐՔ ԵՆ ԻՍԿ
ՅԱՑՏՆԻ:
ԱՊԱ ԸՆԿԱԼԵԱԼ ՁՎԱԽՃԱՆ ԲԱՐԻ.
ԴԻՄԵԱՑ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՅՈՅՍՆ ԱՄԵՆԱՅՆԻ.
ՅՈՐՄԷ ԸՆԿԱԼՅԻ ՁՎԱՐՁՍ ԲԱՐԻ
ԵՒ ՅԱՐՔԱՑՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՐՃՈՒԵՍՅԻ:
ԱՄՓՈՓԵՑԱՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1799 Ի
ԴԵԿՏ. 29, Ի ՏՕՆԻ
ՈՐԴԻՈՅՆ ՈՐՈՏՄԱՆ»:

Ս. Գայանեի վանքի արևմտյան գավթի հարավային կողմի տապանագրության հերթականությունը եթե պահպանելու լինենք, այդ շարքի հինգերորդ գերեզմանն է Ս. Էջմիածնի Սինոդի առաջին պրոկուրոր Թովմա Ղորղանյանինը, որի կողքին է գտնվում ընտրյալ կաթողիկոս Հովսեփ Արղությանցի շիրիմը, հետևյալ տապանագրությամբ.

«ԱՐՂՈՒԹԵԱՆ ՔԱՋ ԱՐՀԻՆ
ՏԷՐ ՅՈՎՍԷՓ ՊԱՆԾԱԼԻՆ.
ԿԱՅՍՐԸՆՏԻՐ ԱՐԺԱՆԻՆ.
ՄԵԾ ԴԱՀԻՍ ՄԻԱԾՆԻՆ.
ԱՅԼ ՏԱՊԱՐ ԺԱՆՏ ՄԱՀՈՒՆ.
Ի ՍԱ ԻՍԿ ՀԱՐ ԻՍԿՈՅՆ.
ՈՐՈՅ ԿԱՄՔ ԿԱԼ ՅԱԹՈՌ.
ԵՄՈՒՏ ԱՍՏ Ի ՏՈՒՆ ԽՈՐ:
1801, 3-Ց ՄԱՐՏԻ»:

Արղությանցի կողքին թաղվել է Ս. Էջմիածնի Սինոդի նախանդամ Բարսեղ արքեպիսկոպոսը[79],

Այս գերեզմանի կողքին կան նաև երեք գերեզմանատեղեր տապանաքարերով, բայց առանց որևէ տապանագրության։ Առայժմ դժվարանում ենք ճշտել, թե այս գերեզմաններում որո՞նք են թաղված, որովհետև մեր ձեռքի տակ ոչ աղբյուրներ ունենք և ոչ էլ քարեղեն որևէ հիշատակարան։

[77] Նաճիխաբունյանց. Ա. էջ 279։

[78] Նույն տեղում.

[79] Սրմանյան. «Ազգապատում», Գ, էջ 3327։

(Շարունակելի)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճեպագիր)

ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՂԲԱՏ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ*

10. Ս. Աստվածածին եկեղեցի.— Գտնվում է Մեծ գավթի հյուսիսային կողմում։ Եկեղեցու արևելյան պատի վրա, արտաքուստ փորագրված արձանագրության համաձայն, որը մեջ ենք բերում ստորև, եկեղեցին կառուցել է խաչենացի Դեսումյան Հասան իշխանի դուստր Խաթունը ԺԳ դարում՝ իր և իր եղբայրներ Սենեքերիմի և Սեադայի հիշատակի համար.

«Կամաւն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս առդեամբ Խաթունին, որ էր դուստր Հասանայ յազգէ Դեսումեանց՝ որ բերաւ ի Խաչենոյ յամուսնութիւն Զաքարիայ, որ էր տէր Գագայ եւ Տաւշոյ, Գարդմանայ եւ Տիրուանականին եւ այլոց գաւառաց. ընդ որում եկեալք եղբայրք իւր Սենեքերիմ եւ Սեադա եւ փոյթեալ ի Քրիստոս, եդան առ դրան կաթուղիկէիս։ Իսկ Խաթուն վասն յիշատակի նոցա եւ իւր շինեաց զսա. եւ եդ ի սա զսուրբ նշանն ոսկի, որ ունի մասունս, եւ զանտարանն մեծածախ, եւ սկիհք արծաթիք, եւ այլոգի մի ի Խաթունաշինի։ Եւ ես Տէր Յովհաննէս եւ միաբանքս Հաղբատայ տուաք սոցա քառասունք մի պատարագ ի տարւոջն. ով խափանէ՝ դատե զնա Աստուած, եւ կատարիչքն աւրհնեսցէ Քրիստոս Աստուած. ամէն»։

Ս. Աստվածածին եկեղեցու շենքը գմբեթավոր մի փոքր կառուցվածք է, արտաքուստ ուղիղ քառանկյունի, ներսից խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևը խորն է, ուր տեղադրված է կիսակլոր աբսիդը՝ փոքրիկ ու ցածր բեմով։ Խաչթևերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միանում են կամարներով, կազմելով թաղակապ ծածկը և իրենց վրա են կրում գմբեթը՝ կլոր թմբուկով ու սրածայր վեղարով։

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով և գեղաքանդակ պարակալով։ Վերջինս բաղկացած է երեք շերտերից՝ արտաքին երկու շերտերը ուղղանկյուն ձևով են՝ գծավոր, շղթայաձև զարդաքանդակներով, իսկ ամենաներսի շերտը, որն անմիջապես մուտքի եզրերից է, գլանաձև կիսասյուների ձևով է, շքեղազարդ և նուրբ մշակված խարիսխներով ու խոյակներով, որոնց միացնող կամարը եզերում է մուտքի ճակատակալ քարը։ Վերջինիս վրա, նրա կենտրոնական մասում, քանդակված է մի վարդ, իսկ սրա կողքերին՝ մի-մի փոքր, գեղեցիկ խաչ։

Ցուրաքանչյուր պատի ճակատային մասից բացվում է մեկական երկար ու նեղ, ուղղանկյուն լուսամուտ՝ գծավոր շրջանակներով։ Նույն ձևի մեկական լուսամուտ էլ՝ կամարակապ գագաթով, բացվում են գմբեթի թմբուկի մեջ՝ աշխարհագրական չորս գլխավոր կողմերից։

---

* *Շարունակված ամսագրի 1960 թվականի № 8-ից, № 9-ից և 1961 թվականի № 8-ից։*

Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով։ Սալահատակված է նույն բազալտ քարով. տանիքը և գմբեթի վեղարը պատած են կարմրագույն սալաքարերով։ Նկատվում են բազմաթիվ վերանորոգումների հետքեր։

11. Երեք խորան-մահարձաններ.— *Այդ երեք դամբարան-հուշարձանները, որոնք առանձին հետաքրքրություն են ներկայացնում մահարձանաշինության ասպարեզում, գտնվում են Համազասպ ժամատան հյուսիսային կողմում, վանքի պարսպի հյուսիս-արևելյան անկյունավորման մասում։ Կառուցված են կողք-կողքի, մի ուղիղ շարքով՝ հյուսիսից հարավ ուղղությամբ։*

Բոլոր երեք մահարձաններն էլ ստորին մասում շատ փոքրիկ մատուռների ձևով են՝ ուղղանկյուն հատակագծով, թաղակապ ծածկով. արևելյան կողմից ունեն փոքրիկ սեղաններ՝ վեմ քարերով, մեկական շատ փոքր լուսանցքեր բացվում են այդ կողմի պատերից։ Բոլորի փոքրիկ, ուղղանկյուն մուտքերն էլ արևմտյան կողմից են, որոնք, ինչպես և քիվերը, շրջապակված են երկրաչափական ձևերի և շղթայահյուս զարդաքանդակներով։ Բոլոր խորան-դամբարաններն էլ կառուցված են կապտագույն բազալտի մաքուր տաշած քարերով, կրաշաղախով մածուցված։ Տանիքները հարթ են, ուր կապտագույն բազալտե մի ամբողջական քարի խոշոր պատվանդանների վրա կանգնեցված են մեկական մեծ խաչքարեր՝ շատ գեղեցիկ և նուրբ ձևով մշակված զարդաքանդակներով։

Հյուսիսային կողմի դամբարան-մահարձանը, ինչպես այդ երևում է նրա խաչքարի վրա փորագրված արձանագրությունից, որը մեջ ենք բերում ստորև, պատկանում է Սմբատի որդի Նաչմադինին և նրա որդիներ Սմբատին և Վահրամին.

«Ի թուին Հայոց ՈԿ (1211). անուամբն Աստուծոյ ես Նաչմադինս, որդի Սմբատայ, թոռն Ուռանայ և որդիք իմ Սմբատ եւ Վահրամ, յուսացամ ի սուրբ նշանն Հաղբատայ եւ եղամ ի տեղւոջ աստ զգերեզմանս մեր, եւ զոր թագաւորաց թագաւորն Գէորգի եւ զուստրն նորա Թամար վասն շատ ծառայութեան զՆոփ ի սիգելով մեզ էին տուեալ եւ որ անդ զԱրեւուտքն շինական եւ զկնշեւնուտի եռուն մեզ գՀոգւոյ գալստեան պատարագն, ե Թվանէի արեւշատութեան եւ մեր մեղաց թողութեան։ եւ Տէր Յովհաննէս եւ միաբանքս եռուն մեզ գՀոգւոյ գալստեան պատարաւն, եւ զայն աւրն, որ մեզ տուած է՝ ի մեր արդեանց սեղան զնեն. ով խափանէ մեր մեպացն տէր է. եւ որ կատարէ, աւրհնին յԱստուծոյ»։

Ա. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԿԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

Հարավային կողմի մահարձանը, ըստ նրա խաչքարի վրա փորագրված արձանագրության, որը նույնպես մեջ ենք բերում ստորև, պատկանում է Սմբատի որդի Քուրթ իշխանին և նրա որդիներ Սմբատին և Ուքանին։ Մահարձանի կառուցումը սկսում է ինքը Քուրթ իշխանը, սակայն դեռ չավարտած մահանում է, ապա նրա որդիները՝ Սմբատը և Ուքանը շարունակում և ավարտում են այն 1220 թվականին.

«Ի թուին Հայոց ՈԿԹ. յառաջնորդութեան Տեառն Յովհաննիսի՝ սուրբ ուխտին Հաղբատայ, ես Քուրթս, որդի Սմբատայ՝ եղբայր Տեառն Բարսղի, շինեցի զեկեղեցիս եւ զպարիսպս ի վերայ ճանգստարանի իմոյ վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ ոչ ժամանեցի կատարել, զի կոչեաց զիս Տէր. եւ մեք Սմբատ եւ Ուքան, որդիք նորա, կանգնեցամ զխաչս և աւրհնեցամ զեկեղեցիս, որ երկրպագէք յաղաթս ձեր յիշեցէք զմեզ և զծնողս մեր»։

Միջին մահարձանի խաչքարն ընկած ու անհայտացած է. տանիքի վրա մնում է միայն նրա պատվանդանը, ուստի մահարձանի կառուցման հանգամանքների մասին, որն անշուշտ փորագրված պետք է լիներ խաչքարի վրա, ոչինչ հայտնի չէ։ Սակայն մատուռդամբարանի մուտքի վերևում փորագրված հետևյալ կարճ մակագրությունը՝ «Սուրբ Յարութիւն, ազնեա ապաւինելոյս ի ՔԻՉ Թարսդի», հաստատում է, որ այն պիտի պատկանի վերը մեջ բերված հարավային մահարձանի արձանագրության մեջ հիշատակված Քուրթ իշխանի եղբայր Թարսեղ արքեպիսկոպոսին։ Մահարձանի կառուցման ժամանակը չի նշվում, սակայն շինարարության ձևից և տեղադրությունից երևում է, որ այն

ԵՐԵՔ ԽՈՐԱՆ-ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐԸ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

պետք է կառուցված լինի հյուսիսային կողմի մահարձանի հետ միաժամանակ, այսինքն 1211—1212 թվականների ժամանակամիջոցում։

Մատուռ դամբարանների առջևում, իրար կողքի, մի շարքով գտնվում են Նաչմադինի և նրա որդիներ Սմբատի ու Վահրամի, Թարսեղի, Քուրթ իշխանի ու նրա որդիներ Սմբատի և Ուքանի գերեզմանները՝ հարթ երես ունեցող խոշոր տապանաքարերով։

Բոլոր մատուռները և խաչքարերի պատվանդանները կապտագույն բազալտից են, իսկ խաչքարերը՝ կարմրագույն քարից։

12. Վանքի միաբանության բնակելի շենքերը.— Բավականին մեծ թիվ կազմող այդ շենքերը գտնվելիս են եղել, վանքի հուշարձանների վերը նկարագրված խմբի հարավային, հյուսիսային և արևելյան կողմերում պարսպին կից։ Բոլորն էլ հիմնովին ավերակ վիճակում են, ուստի նրանց կառուցման ժամանակը, կառուցողները և ընդհանուր բովանդակությունը պարզ ու որոշ չէ։ Պահպանվել է միայն հյուսիսային կողմի՝ սեղանատան արևելյան պատին կից փոքրիկ մասը, բաղկացած երկու սենյակներից, որոնք շարված են կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով մածուցված, և ունեն թաղակապ ծածկ։ Ներսում ունեն կրակ վառելու հատուկ օջախներ, որոնք այնքան բնորոշ են նույնիսկ մեր ժամանակների Լոռու բնակարաններին։ Հավանական է, որ դրանք լինեն վանքի միաբանության ամենահին կացարանները և վերաբերեն ԺԱ—ԺԱ դարերին։ Դրանց շատ մոտիկ, սեղանատան հարավային պատին կից, պահպանվել է բոլորովին ուշ ժամանակ կառուցված երկհարկանի հասարակ մի շենք՝ յուրաքանչյուր հարկում երկուական սենյակից, ուր բնակվում էին վերջին վանահայրերը։

13. Պարիսպ.— Պարիսպը ձգվում է վերը նկարագրված հուշարձանների շուրջը, բավական ընդարձակ տարածության վրա։ Ծրեք մատուռ-մահարձանների՝ հարավայինի խաչքարի վրա փորագրված արձանագրության մեջ ասվում է, որ պարիսպը կառուցել է Սմբատի որդի, վանքի առաջնորդ Թարսեղ արքեպիսկոպոսի եղբայր Քուրթ իշխանը 1220 թվականին. «Ի թուին Հայոց ՈԿԹ. յառաջնորդութեան Տեառն Յովհաննիսի՝ սուրբ ուխտին Հաղբատայ, ես Քուրթս որդի Սմբատայ, եղբայր Տեառն Թարսդի, շինեցի զեկեղեցիս և զպարիսպս...»։

Սակայն պարսպի կառուցողական ձևերը վկայում են, որ այն կառուցված կամ վերակառուցված պետք է լինի տարբեր ժամանակներում։ Այդ տեսակետից որոշակի կերպով նկատվում է, որ հիշյալ մատուռ-մահարձաններին համարյա կից եղած մասը ավելացում է, այդ երևում է նաև արձանագրությունից, ուստի կասկածից վեր է, որ արձանագրության մեջ նշված «շինեցի» դարձ-

ՊԱՐՍՊԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԲՐԳԱԶԵՎ ԱՇՏԱՐԱԿԸ

վածքը պետք է հասկանալ պարսպի ընդարձակման իմաստով։

Բացի դրանից, նկատվում է նաև, որ պարսպի արևմտյան և հարավային մասերն ավելի վաղ ժամանակի կառուցվածքներ են, քան հյուսիսային և արևելյան կողմի մասերը։ Պարսպի արևմտյան պատը, օրինակ, մեծ մասամբ շարված է կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով մածուցված. օգտագործված են նաև տարբեր մեծության անմշակ քարեր, որը, հավանաբար, վերանորոգման արդյունք է։ Այդ նույն պարսպի հարավային ծայրը շարված է Քրծած աղյուսից, կրաշաղախով, որի հետ օգտագործված են նաև մանր քարեր։ Պատի մեջ կան երեք բրգաձև աշտարակներ, ըստ որի հարավ-արևմտյան անկյան աշտարակը ամենից մեծն է և շարված է Քրծած աղյուսից, կրաշաղախով։

Պարսպի հարավային պատի արևմտյան ծայրը կամ արևմտյան պատին կից մասը նույնպես շարված է Քրծած աղյուսից, կրաշաղախով, իսկ մնացած մասը, բացառությամբ արևելյան ծայրի փոքրիկ մասիր, շարված է գանգրան մեծության անտաշ քարերով, դարձյալ կրաշաղախով։ Հարավային պատի մեջ կան հինգ բրգաձև աշտարակներ, որոնցից մեկը նույնպես շարված է Քրծած աղյուսից։

Ամբողջ արևելյան պատը, հյուսիսային պատի արևելյան կողմի մեծ մասը և հարավային պատի արևելյան փոքրիկ մասը շարված են մանր, անմշակ քարերով, ցեխով։

Գլխավոր մուտքը՝ մեծ, սրահավոր դարբասի ձևով, արևելյան կողմից է, որը, արևելյան պատի մեջ դրված մի փոքր խաչքարի վրա փորագրված կիսաեղծ արձանագրության համաձայն, կառուցվել է Համազասպ արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ 1246 թվականին. «Ի թուին ՈՂԵ. յառաջնորդութեան Տեառն Համազասպայ շինեցաւ...» Մի ուրիշ, փոքր մուտք էլ բացվում է հյուսիսային պատից, երեք խորան-մահարձանների արևմտյան կողմից։ Պարիսպը վերանորոգել է վանքի առաջնորդ Ավետիս արքեպիսկոպոսը 1677 թվականին։

14. Սեղանատուն.— Սեղանատունը գտնվում է վանքի վերը նկարագրված հուշարձաններից դեպի հյուսիս, մասամբ պարսպից դուրս։ Սկզբում այն եղել է պարսպից ներս, ըստ որի նրա հյուսիսային պատը հանդիսացել է պարսպի մի մասը։ Մինչև այժմ էլ պարսպի հյուսիսային պատի արևելյան մասի արևմտյան ծայրը միացած է սեղանատան շենքի հյուսիսային պատի արևելյան ծայրին։ Հետագայում, վանքի անկման շրջանում, երբ մասնավոր մարդիկ սեփականում են սեղանատան շենքը և վերածում ձիթհանի, քանդում են պարսպի հյուսիսային պատի սեղանատնից արևմուտք գտնվող մասը և վերջինս քիչ ներս քաշելով, նոր կառուցված մասի արևելյան ծայրը միացնում են սեղանատան հարավային պատի արևմտյան ծայրին, այսպիսով պարսպից դուրս թողնելով սեղանատան արևմտյան մուտքը։

Թե ե՞րբ է կառուցվել ճարտարապետական այդ հետաքրքիր շենքը և որո՞նք են եղել նրա կառուցողները, ստույգ հայտնի չէ։ Սակայն ուշադիր կերպով դննելով նրա կառուցողական ձևերը և այն համեմատելով մյուս վանքերի նույնատիպ կառուցվածքների հետ, կարելի է ենթադրել, որ դա կառուցված պիտի լինի ԺԳ դարում։ Ոմանք այդ շենքը համարում են ձիթհան, ոմանք էլ՝ վարժարան, սակայն, մեր համոզմամբ, այդ երկու ենթա-

դրությունները էլ ոչնչով չեն հիմնավորված. իրականում նա վանքի սեղանատունն է.

Շենքի ներսում. նրա կենտրոնական մասում երկու քարյա ամբողջական սյուները և արևմտյան ու արևելյան պատերին կից երկուական, իսկ հարավային և հյուսիսային պատերին կից՝ ձգվող շորսական կիսասյուները միանալով խաչաձևվող կամարներով, նախ շենքը բաժանում են երկու հավասար քառակուսիների և ապա կազմում են թաղակապ ծածկը՝ յուրաքանչյուր քառակուսի մասի տանիքի կենտրոնում իրենց վրա կրելով մեկական գմբեթ՝ ութակող ցածրիկ թմբուկներով, որոնց ծայրերում կան հատուկ լուսանցքներ՝ երդիկների ձևով. Միաժամանակ կողերի պատերին կից ձգվող կիսասյուները, միանալով որմակամարներով՝ պատերի մեջ առաջացնում են կամարակապ լայն խորշեր։

Սյուների բները, խարիսխները ու խոյակները մի ծայրից քառակուսաձև են, մյուս ծայրից գնդաձև. Կիսասյուների բները, խարիսխները ու խոյակները նույնպես ամբողջական մեծ քարերից են՝ ոմանց բները կիսագլանաձև են, ոմանց էլ երեք կամ հնգակող. դրանց համապատասխան ձևով էլ մշակված են խարիսխները ու խոյակները։

Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է՝ պատի կենտրոնական մասից, որն ունի կիսակլոր ճակատակալ մեծ բար և գեղեցկադարդ պարակալ։ Ճակատակալ քարի վրա բարձրաքանդակ ձևով քանդակված է մի գեղեցիկ խաչ։ Մի ուրիշ փոքր մուտք էլ բացվելիս է եղել արևելյան կողմից, որն արտաքին կողմից շարված, փակված է, իսկ ներսի կողմից գոյացել է կամարակապ մի խոր խորշ, որի մեջ դրված է գեղաքանդակ մի մեծ խաչքար։

Արևմտյան պատից, մուտքի երկու կողմերից բացվում են մեկական երկար ու նեղ, կամարակապ գագաթով լուսամուտներ՝ թեավոր, գեղեցկաքանդակ պսակներով։ Նման մի լուսամուտ էլ բացվում է հյուսիսային պատից՝ արևելյան կես մասի մեջ։

Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրա-



ՍԵՂԱՆԱՏՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ

շաղախով։ Զիթհանի վերածելու կապակցությամբ ամբողջովին քանդել են սալահատակը, քանդված է նույնպես հյուսիս-արևմտյան անկյունը, թափված են պատերի երեսապատ քարերի մի մասը և տանիքի ու գմբեթների վեղարների բոլոր սալաքարերը։

Դ. ՀԱՂԲԱՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՂՐԱՏ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

15. Ս. Աստվածածին եկեղեցի.— *Հուշարձանի վիմագրություններին մեջ եկեղեցին հայտնի է Ս. Աստվածածին անունով. տեղացիք այն կոչում են նաև Քդրաշեն։ Գտնվում է վանքի հուշարձանների գլխավոր խմբից դեպի հարավ-արևմուտք, պարսպի հարավ-արևմտյան անկյան բրգաձև աշտարակին մոտիկ՝ պարսպից դուրս։ Կառուցել է ոմն Սալոմա 1195 թվականին, մի ուրիշ եկեղեցու տեղում, որի վերաբերյալ արձանագրությունը փորագրված է եկեղեցու արևմտյան և մասամբ հարավային պատերի վրա, որը հետևյալն է.*

«Ի ՈՒԹ թուականիս, ես Սալամա նուաստ աղախին Քրիստոսի վերստին շինեցի զՍուրբ Աստուածածինս, որ խախտեալ էր ի ճիմանց, վասն մեր ճայրենի գերեզմանացս։ Եւ ինձ ետուն Ր. պատարագ զԱստեաց Աստուածածնին եւ Միանասայ աւրն՝ ի կենդանութեան իմում՝ Դաւթի եւ յետ իմ մահուան՝ ինձ, Ով խափանէ Յուդայի կցորդ է եւ մեր խղճիս տէր։ Ամէն»։

Արձանագրությունից պարզվում է, որ նա ոչ միայն կառուցվում է հիմնովին ավերված մի այլ եկեղեցու տեղում, այլև կառուցվում է որպես տոհմական գերեզմանատեղի։ Դրա հետևանքով եկեղեցու մուտքի առջևում կան 12 գերեզմաններ՝ խոշոր տապանաքարերով, որոնցից միայն երկուսն ունեն տապանագրություն՝ «Դաւիթ» և «Հասան» կարճ մակագրությամբ։

Եկեղեցու հատակագիծը երկարաձիգ ուղիղ քառանկյունի է, ծածկը թաղակապ. արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր աբսիդ՝ ցածրիկ բեմով։ Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով և գեղեցիկ պարակալով. վերջինիս կողերը գլանաձև կիսասյուների ձևով են՝ շքեղ քանդակված խարիսխներով ու խոյակներով, որոնք միանալով զույգ կամարներով, եզերում են մուտքի ճակատակալ քարը։

Արևմտյան պատի մեջ, մուտքի երկու կողմերին փորված կամարակապ խորշերի մեջ ագուցված են մեկական խաչքարեր, որոնք եզերվում են նույն գլանաձև կիսասյուների և դրանց միացնող կամարների նմանությամբ շրջանակով։ Խաչքարերի ընդհանուր ձևը շատ յուրօրինակ է, քանդակները բուսական մոտիվներով են և վերին աստիճանի նուրբ ձևով մշակված։

Մուտքի ճակատակալ քարը պատած է նույնաձև, համեմատաբար փոքր խաչքարերի, աղավնակերպ թռչունների և վարդաձև զարդաքանդակներով։ Արևելյան և արևմտյան պատերից բացվում են մեկական երկար ու նեղ, կամարակապ գագաթով լուսամուտներ՝ թեավոր պսակներով։ Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով։

16. Ս. Զորավարք եկեղեցի.—*Գտնվում է Հաղբատի հարավային կողմում, այգիների մեջ։ Կառուցել է Բարսեղ քահանան 1279 թվականին, ինչպես այդ մասին տեղեկացնում է եկեղեցու մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը.*

«Կամաւ նախախնամողին Աստուծոյ և յառաջնորդութեան Տէր Յովանիսի, ի թուին Հայոց ՉԻԸ, ես Բարսեղ քահանայ կանգնեցի զՍուրբ Զաւրավարքս եւ շինեցի զխորանս լուսոյ յանուն սրբոցս մեծաւ ջանիւ եւ քրտնամուխ անձամբ իմով՝ ի փրկութիւն ճոգւոյ իմոյ և յիշատակ մեզ եւ ձնողաց մերոց եւ սնուցողացն...»։

Եկեղեցին փոքր է, երկարաձիգ ուղիղ քառանկյունի հատակագծով, ծածկը թաղակապ է, արևելյան կողմից ունի փոքր աբսիդ՝ ցածրիկ բեմով։ Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով, որի առջևում կառուցված է հատուկ սրահ։ Շենքը կառուցված է զանազան մեծության և տարբեր հանքաքարերի կիսատաշ քարերով, թույլ կրաշաղախով. քիվերը կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերից են։ Եկեղեցին մասամբ քանդվել է 1827 թվականի երկրաշարժից։

Եկեղեցու շուրջը տարածվում է փոքրիկ գերեզմանոց, ուր, բացի տապանաքարերից, կան նաև մի քանի խաչարձաններ. թե՛ տապանաքարերը և թե՛ խաչարձանները փոքր են

ու մշակված են պարզ ձևով։ Տապանագրություններ չեն նկատվում,, ուստի նրանց թաղման ժամանակը և ում պատկանելը հայտնի չէ։

17. Ս. Սիոն եկեղեցի.—Վիմագրություններ մեջ կոչվում է Ս. Սիոն, տեղացիք անվանում են նաև Ս. Առաքելոց։ Գտնվում է գյուղի մեջ, վանքից քիչ դեպի հյուսիս։ Եկեղեցու մուտքի առջևում ընկած մի խաչքարի վրա փորագրված արձանագրության համաձայն, որը մեջ ենք բերում ստորև, եկեղեցին կառուցել են հինգ եղբայրներ՝ Անդրեյը, Գնելը, Տիրանը, Գորգը (հինգերորդ եղբոր անունը արձանագրության մեջ չի ընթերցվում՝ եղած լինելու պատճառով) 1268 թվականին։ Ահա՝ այդ արձանագրությունը.

«Շնորհաւքն Յիսուսի, հրամանաւ Տէր Յովանիսի գրեցաւ գիրս յիշատակի (հինգերորդ եղբոր անվան տեղը) եւ եղբարց Անդրէի, Գնելի, Տիրանոյ, Գորգա, ի ճալալ սարդեանց մեր շինեցաք զՍուրբ Սիոնս բարեխաւս առ Քրիստոս մեզ եւ ծնողաց մերոց։ եւ ընծայեցաք ի սմա ԴՃ. սպիտակ, գնած էգին, Հացազոմս, զանձանանքն, ՌՃ. սպիտակ, մէն մի խաչագնէիս զմեզ յիշել։ Այլ եւ ինն պատարագ մեզ՝ Գ. ի Սնեղոց, Գ. Զատիկ, Գ. Սուրբ Խաչին։ Կատարիչքն աւրհնեսին յԱստուծոյ. ով խափանէ դատի ի Տեառնէ. թուին ՉԺԷ»։

Եկեղեցու շենքը շատ փոքր է՝ մատուռի ձևով։ Հատակագիծը ուղղանկյուն է, ծածկը թաղակապ։ Արևելյան կողմից ունի փոքրիկ աբսիդ՝ ցածրիկ բեմով։ Փոքրիկ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով. մի շատ փոքրիկ լուսամուտ բացվում է արևելյան կողմից, աբսիդի մեջ, որը շարված, փակված է։

Շարված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով. սալահատակված է, տանիքը պատած է եղել սալաքարերով։ Բոլոր պատերի արտաքին երեսների վրա նկատելի են վերանորոգման հետքեր, որի ընթացքում օգտագործվել են խաչքարերի քանդակազարդ բեկորներ։

Այժմ կիսավեր վիճակում է, թափված են տանիքի ողջ սալաքարերը, պատերի քիվերը և արտաքին երեսպատ քարերի մի մասը, քայքայված է տանիքի վերի շերտը։ Քանդված մասերը թափված են եկեղեցու շենքի շուրջը՝ առանձին բեկորների ձևով, որոնց վրա նկատելի են վիմագիր բազմաթիվ արձանագրություններ և նրանց մասերը։

Եկեղեցու արևմտյան պատին կից, արտաքուստ, մուտքի երկու կողքերին, հատուկ պատվանդանների վրա կանգնեցված կան երկու գեղեցկաքանդակ խաչքարեր՝ կապտագույն բազալտ քարից։ Հարավային կողմի խաչքարը, նրա վրա փորագրված արձանագրության համաձայն, որը մեջ ենք բերում ստորև, կանգնեցրել են Աթանագինեն և Փիլաքսոնը 1005 թվականին.

«Ի թուին ՆԾԴ. ի հայրուրեան Սիմէոնի, ես Աթանագինէ եւ Փիլոքսոն կանգնեցաք զսուրբ խաչս ի փրկութիւն հոգւոց մերոց եւ ամենայն երկրպագուաց իւրոց, եւ յոգեկանութիւն թագաւորին մերոյ Դաւթի»։

Հյուսիսային կողմի խաչքարը, որը համեմատաբար մեծ է և ավելի շքեղազարդ՝ տեղահան է եղած և վայր է ընկած գետնին։ Այդ խաչքարի վրա է գտնվում Ս. Սիոն եկեղեցու կառուցման վերաբերյալ արձանագրությունը, որը մեջ բերվեց վերևում։

18. Ս. Աստվածածին կամ Ս. Կյուրակե եկեղեցի.— Այս եկեղեցու շենքը գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին, բարձունքի լանջակողի վրա, Ջրաղացաձորը տանող ճանապարհի վրա։ Արձանագրության մեջ կոչվում է Ս. Աստվածածին, հայտնի է նաև Ս. Կյուրակե անունով։ Եկեղեցու շենքը շատ փոքր է՝ մատուռի ձևով, շարված է կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով։ Արևելյան կողմից ունի փոքրիկ սեղան վեմքարով։ Մուտքը արևմտյան կողմից է, որի առջևում կառուցված է փոքրիկ սրահ՝ վերջինիս մեջ, նրա հարավային ծայրում, կանգնեցված է մի մեծ խաչքար։ Եկեղեցու կառուցման վերաբերյալ արձանագրությունը փորագրված է այդ խաչքարի վրա, որի համաձայն եկեղեցին կառուցել է Սարգիսը 1188 թվականին։ Ահա՝ այդ արձանագրությունը.

«Յանուն Աստուծոյ ես անպիտանս Սարգիս կանգնեցի ի նիմանց զտաճար Սրբոյ Աստուածածնին։ Արդ աղաչեմ զընթերցողսդ և զամենեսեան, որք երկրպագիցէք Սրբոյ Աստուածածնիս, յիշեսջիք յաղաւթս ձեր զծնողսն իմ եւ զիս՝ զվերոգրեալսդ անուն, եւ Աստուած զձեզ յիշեսցէ. ամէն։ Ոկէ թուին»։

(Շարունակելի)

ՊՐՈՖ–ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԱԼԻՔՍԵԹ-ԲԵԿ
(Գիտության վաստակավոր գործիչ)

ՄԻ ԱՆԾԱԺՈԹ ԷՋ ԺԶ ԴԱՐԻ ՏԱՂԱՍԱՑ ԶԱՔԱՐ ԼՄՆԵՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ գրականության մեջ միջնադարյան հայ բանաստեղծ-տաղասացների մասին մի ժամանակ արտատացած էր այն տեսակետը, ըստ որի «Քուլակից հետո՝ մինչև նաղաշ Հովնաթանը և Սայաթ-Նովան, այլևս գրական խոշոր դեմքեր չեն հանդիպում»[1]։

Պրոֆ. Մ. Մկրյանը այս մասին գրում էր. «Ինչպես, որ այդ ժամանակաշրջանում այնուամենայնիվ քիչ չեն տաղանդավոր բանաստեղծներ, բայց, մանավանդ 17-րդ դարում, ընդհանրապես նկատվում է լիրիկայի թուլացում»[2]։

Միաժամանակ Մ. Մկրյանը թվում էր մի շարք բանաստեղծների անուններ՝ «Հովասափ Սեբաստացին, Ղազար Սեբաստացին, Մինաս Թոխաթեցին, Հովհաննեսը, Զաքարիա Գնունյանց (ընդգծումը մերն է—Լ. Մ.-Բ), Դավիթ Սալաձորեցին, Ներսես Մոկացին և ուրիշներ»[3], որոնց կողքին «հրապարակի վրա հայտնվում են էպիգոններ և բանագողներ»[4], և այլն։

Սույն հոդվածիս նպատակն է անդրադառնալ Զաքարիա կամ, որ նույնն է, Զաքարա կամ Զաքար Լմնեցու կյանքին և գործունեությանը։ Զաքարը ավելի հայտնի է «Գնունյաց եպիսկոպոս» հորջորջումով։

***

Զաքարիա տաղասացի և նրա ստեղծագործության ուսումնասիրության խնդիրը առաջին անգամ հրապարակ հանեց Վիեննայի Մխիթարյան Հ. Ներսես Ակինյանը դեռևս կես դար սրանից առաջ[5]։

Հենվելով ԺԶ դարի բանաստեղծ Խաչատուր Կեչարեցու[6] մի հիշատակարանի վրա, որ օգտագործել էր դեռևս 1892 թվականին Հ. Հակոբոս Տաշյանը Կեղծ Կալիսթենեսի «Վարք Աղեքսանդրիս» զրույցի կապակցությամբ[7], Հ. Ներսես Ակինյանը կռահել էր, որ Զաքարիան եղել է ոչ միայն տաղասաց, այլև գծագրող, ծաղկող, նկարող, այսինքն մանրանկարիչ։ Ընդ սմին հայտարարվել էր, որ «Զաքարիա տոհմով կիշնար Հայոց պատմության մեջ անվանի Պոռշյանց տոհմենն»[8]։

Այսպիսով հասկանալի է, որ երբ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը (հետագայում Գարեգին Ա կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո, 1943—1952) մշակում էր իր մնայուն աշխատությունը հիշյալ տոհմի պատմության մասին, իհարկե, չէր կարող Զաքարիայի գործունեության լուսաբանության կողքով անցնել։ Ուստի և իր աշխատության Ա հատորի ԺԱ գլուխը, որ կրում է «Պոռշյանց մնացորդ-

---

1 Մ. Մկրյան, «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Ընտիր նմուշներ», Երևան, 1938, էջ XXXIV։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Ներսես վրդ. Ակինյան, «Զաքարիա եպիսկոպոս Գնունյաց և յուր տաղերը», «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 231—237, 279—288, 341—345, և առանձին մատենաշարում՝ «Ազգային մատենադարան», ԾԲ, Վիեննա, 1909, ԺԲ + 87 էջ։

6 Սրա մասին տե՛ս Մ. Թ. Ավդալբեգյան, «Խաչատուր Կեչարեցի XIII—XIV դ. դ.», Երևան, 1958, 220 էջ։

7 Հակոբոս վրդ. Տաշյան, «Ուսումնասիրություններ ստույն-Կալիսթենյա վարուց Աղեքսանդրիս [«Ազգային մատենադարան», Ե], Վիեննա, 1892, էջ 88—89։

8 «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 231։

ներ ԺԶ և ԺԷ դարերում» վերնագիրը, նվիրում է Զաքարիա «ծաղկող»-ի խնդրին[9]։

***

Կենսագրական տվյալները Զաքարիայի մասին կցկտուր են, ընդ որում նրա ո՛չ ծննդյան և ո՛չ էլ մահվան թվականներն են հայտնի։

Բայց և այնպես, անվիճելի է, որ Զաքարիան եղել է Աղթամարի «շնորհազարդ» որևէ Գրիգորիս կաթողիկոսներից մեկի (առաջինը 1512—1544, երկրորդը 1544—1586)[10], գուցե և հաջորդաբար երկուսի էլ, և Հովսեփ վարդապետի ժամանակակիցը, որոնցից վերջինս ՋՂԳ (1544) «ամի փոխեցաւ ի դասս անմահից»[11]։ Նա եղել է նաև Կոստանդնուպոլսի Աստվածատուր պատրիարքի (1537—1550) և սուլթան Սուլեյմանի (1520—1566) ժամանակակիցը։

«Հայրենյոք էր Զաքարիա Բզնունյաց ափանց վրա հաստատված խժիժ գյուղեն, և ասկե առյալ կկոչվի Խժրժեցի»,— գրում է Հ. Ն. Ակինյանը,— և ապա շարունակում. «Բնակությամբ թե դաստիարակությամբ հայտնի չէ, իր կենաց համար նշանակալից եղած է Լիմ անապատն ալ, և կհորչորչվի երբեմն Լմեցի»[12]։

Մի ժամանակ Զաքարիան եղել է Գնունյաց եպիսկոպոս, ուստի և տաղերից մեկում իրեն կոչում է «Խժրժեցի Զաքարիա» և «եպիսկոպոս ամենայն Գնունեաց»[13]։

Սակայն, քանի որ «Գնունյաց եպիսկոպոսն... Վարագեն շատ հեռու չէ ապրածս, Զաքարիան, ըստ Հ. Ն. Ակինյանի կռահման, «կրնար, ինչպես Գնունցի, Խժրժեցի, Լմեցի կոչված է, նաև Վարագեցի անվանվիլ»[14]։

***

Ինչ վերաբերում է Զաքարիայի ստեղծագործությանը, այն Հ. Ն. Ակինյանը երևան է հանել ըստ 98 ձեռագրերի[15] մեկուկես տասնյակի սահմաններում, «որոնց սակայն մեկ տաղասացի վերաբերիլն դժվարին է հաստատելը»,— ասում է հրատարակիչը։

Բացի «Կալիսթենյա Աղեքսանդրի վարուց նոր խմբագրութենեն», Զաքարիա եպիսկոպոսի ընծայված տաղերը, ըստ Հ. Ն. Ակինյանի, «երկու խմբի կրնանք բաժնել զանոնք. 1 հարազատք և 2. երկրայականք»[16]։

«Հարազատք» կոչված խմբի 6 տողերից երեքը այբբենի շարքով հյուսված բանաստեղծություններ են. 1. «Տաղ ի Խժրժցւոյ Զաքարիա եպիսկոպոսէ ամենայն Գնունեաց», 18 տուն, 4 տող, ընդամենը 72 տող (յուրաքանչյուր տառով 2 տող), 2. «Տաղ վարդին և բլբուլին ի Զաքարիա եպիսկոպոսէ Գնունցւոյ», 36 տուն=150 տող, և 4. «Տաղ-Վարդին և բլբուլին ի Զաքարիա եպիսկոպոսէ», 19 տուն=76 տող։ Երկուսը ակրոստիկոսներ են. 3. «Տաղ վարդին և բլբուլին ըստ անուան երգողին Զաքարիա եպիսկոպոսէ», 14 տուն=56 տող, որոնց սկզբնատառերը տալիս են «ի Զաքարիայէ» ընթերցումը, և 5. «Տաղ ըստ անուան երգողին ի Զաքարիա եպիսկոպոսէ գովասանութիւն ումեմն վարդապետի», 13 տուն=42 տող, որոնց սկզբնատառերը կարդացվում են. «Զաքարիայ Նրուաստէ»։ Բացի դրանից, մի տաղն էլ՝ 6-րդը, «ի գծողէ Զաքարիայէ» վերնագրով, ո՛չ այբբեն է, ո՛չ էլ ակրոստիկոս։

Հայոց տաղաչափության պատմության տեսակետից հատուկ ուշադրության արժանի է 5-րդ տաղը, որը կրկնակի ակրոստիկոս է, քանի որ տալիս է երկու ընթերցում. մեկը սկզբնատառերից՝ «Զաքարիայ Նրուաստէ», մյուսը վերջատառերից՝ «Վարդապետին էն»[17]։

«Երկրայականք» տաղերի խմբի մեջ Հ. Ն. Ակինյանը դնում է «Տաղ Վարագայ խաչին»[18], 15 տուն=60 տող, և երկու ակրոստիկոս. 1. «Տաղ ողորմուկ», 7 տուն=28 տող, ուր կարդացվում է «Զաքարիա», և 2. «Տաղ վասն զարիպութենն», 12 տուն=48

---

9 Գարեգին արհեպիսկոպոս Հովսեփյան, «Հաղբակյանք կամ Գոռշյանք Հայոց պատմության մեջ, Պատմա-հնագրական ուսումնասիրություն», մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 239—248։

10 Այստեղ և ստորև ժամանակագրական տվյալները նշված են ըստ Մատթիոս արհեպիսկոպոս Օրմանյանի «Ազգապատում»-ի Գ հատորին կցված աղյուսակների («Հոգողությամբ Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանի»), Երուսաղեմ, 1927, էջ ՃԼԲ։ Հմմտ. նաև Մեսրոպ վրդ. Մաքսուդյանց, «Հավաքարան անվանց կաթողիկոսաց Աղթամարա», Էջմիածին, 1916։ Հ. Ներսես վրդ. Ակինյան, «Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարա, Պատմական ուսումնասիրություն» [«Ազգային մատենագրարան», ՁԶ], Վիեննա, 1920։

11 «Հանդես ամսօրյա», 1908 թ., էջ 232։

12 Նույն տեղում, էջ 231։

13 Նույն տեղում, էջ 238։

14 Նույն տեղում, էջ 233։

15 Նույն տեղում, էջ 234։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, էջ 236։

18 Հավանական է, որ այս տաղի հեղինակությամբ կամ ազդեցությամբ լինի հորինված, վրացերեն լեզվով, Կուռց անապատի միաբան Գեորգ վարդապետ Կակաբեենց Գորեցու (ԺԸ դար) «Տաղ Վարագայ խաչին» (հրատարակել ենք մենք «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագրի» ժ հատորում, Թբիլիսի, 1940, էջ 105—108)։

տող, ուր կարդացվում է «ի դարիպ Զաքարէ», այբբենով է դասավորված «Տաղ ի Սուրբ Կոյս Մարիամ»-ը, 36 տուն=144 տող,

Այբբենի կարգով է հյուսված, ի միջի այլոց, և Մ. Մկրյանի հրապարակածը՝ «Այլ տաղ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսէ». 70 տողից բաղկացած, որ սկսվում է «Առաջին մարդոյ նման եմ» բառերով[19], սակայն առանց գործածելու է տառը, որը բացակայել է Մաշտոց-Մեսրոպյան այբբենում։ Մինչդեռ Հ. Ն. Ակինյանի հրատարակած տաղերում առկա են ինչպես է, նույնպես և օ և ֆ տառերը։

***

Զաքարիայի տաղերը երբեմն պարունակում են կարևոր ինքնակենսագրական նյութեր։

Այսպես, օրինակ, «Վարդին և բլբուլին» նվիրված տաղերից մեկում բանաստեղծը նշում է.

«Ասէ զայս աշխարհս խև Գընունցի,
Որ կու թափէ զմարդիկ քան զտերև ծառի,
Դարձի՛ր ի մեզաց ու գործէ՛ բարի,
Որ կը կըրէ ամօթ ի կալն Ոտնայի»[20],

Նույն թեմային նվիրված մի ուրիշ տաղում կարդում ենք.

«Զաքարիա յիմար գերի,
Ակրըն փուշ է դառն ու լեղի,
Դու աստ արա թաղրիր[21] քեզի,
Որ անդ կըլնիս խեղճ ու լալի»[22],

«ի գծողէ Զաքարիայէ» վերնագիրը կրող տաղը հեղինակն ավարտում է հետևյալ տողերով, որ նվիրված են Կոստանդնուպոլսո Աստվածատուր պատրիարքին, և ուր, ի միջի այլոց, հիշված է իր ուսուցիչ Հովսեփ Աղթամարցին, որը վախճանվել է 1544 թվականին.

«Տէր Աստուածատուր իմ շնորհալի,
Զքեզ աղաչեմ յոյժ փարելի,
Որ վայելող ես այս տառի,
Ցիշեա և դիս դու ի բարի։
Զաքարիա գրծագրողի
Եւ անվարժող նըկարողի,
Մի՛ մեղադրէք դասք արհեստի,
Զի կար մեր այս էր որ ցուցի։
Եւ իմ վարպետըն սըխրալի,
Եւ Տէր Յովսէփն Աղթամարցի,
Ի յայսմ ամի վերափոխի,
Եւ ինձ սուգ եղև անբուժելի։
Դուք ասացէ՛ք սրտով ի լի
Ինձ և նորա՝ Տէրն ողորմի,
Որ քաղցրուսոյց էր և բարի,
Եւ անձանձիր յարհեստ բանի»[23],

Ահա և Վանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում երբեմն պահվող ձեռագիր Ավետարանի հիշատակարանը, ուր, ի միջի այլոց, կարդում ենք.

«Գրեցաւ Սուրբ Աւետարանս այս ձեռամբ Զաքարայ եպիսկոպոսի ի գաւառս, որ կոչի Ամոկ, ի կղզիս, որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ Սուրբ Գէորգայ զաւրավարին, ի հայրապետութեան Տեառն Գրիգորիսի և ի թագաւորութեան Խոնթկար անուն փատշահի, որ է, տառապանք աղգիս Հայոց, յայսմու ժամանակի, վասն ծովացեալ մեղաց մերոց, ի թուաբերութեան Հայոց ՋՂԸ (1549)»[24],

Այս հիշատակարանի գրության տարեթիվը՝ 1549՝ պարզապես համապատասխանում է նրա մեջ հիշված «Տեառն Գրիգորիսի», այսինքն Գրիգորիս Բ Աղթամարի կաթողիկոսի (1544—1586) «հայրապետության» ժամանակաշրջանին։

***

Զեռնարկելով իր՝ «Զաքարիա եպիսկոպոս Գնունյաց և յուր տաղերը» շահեկան գործը, ուր հրապարակ են հանված Զաքարիային անկասկածելիորեն պատկանող 6 տաղերը («Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 238, 279—284) և երկուասան «կափայս ի պատմութունն Մեծին Աղեքսանդրիս» (էջ 341—345), Հ. Ներսես Ակինյանը կարևոր էր համարել նախազգուշացնել ընթերցողին, որ նա «հրատարակել փորձելով միջնադարյան հայ բանաստեղծիս մտաց աստուածաշունչն առաջին անգամ», վստահ է, «թեև գրգիռ մը ընծայած պիտի ըլլանք այլոց՝ բանաստեղծիս այլ անձանոթներն ալ ի լույս հանելու, ըլլա գրչագրաց հիշատակարաններ իր ձեռքեն, որոնք իր կենսագրությունը կրնան լուսավորել, ըլլա նորանոր տաղեր, որոնք իր մտաց կորովությունն ավելի կըրնան բարձրացնել»[25],

Հ. Ն. Ակինյանի այս տողերին մենք ի վիճակի ենք արձագանքել այսօրվա ելույթով, հիմք ունենալով Զաքարիա տաղասացի մի նորահայտ բանաստեղծությունը, որը մենք հրատարակում ենք ստորև։

Թբիլիսիի պետական համալսարանի գրադարանը 1939 թվականին մի մասնավոր

19 Մ. Մկրյան, հիշյալ գիրքը, էջ 169—170։
20 «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 281։
21 Այսինքն՝ խորհուրդ, խարհրդակցություն։
22 «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 283։
23 Նույն տեղում, էջ 284։
24 Եվանդ Լալայան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», Ա, Թիֆլիս, 1915, էջ 651—654։
25 «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 236։

անձից մեռք բերեց հայերեն ձեռագիր՝ Տաղարան-Գանձարան ԺԷ—ԺԸ դարերի, որն իր բովանդակությամբ տարբերվում է նմանօրինակ ժողովածուներից։ Ձեռագիրը թղթից է, 10×15,5 սմ. մեծությամբ, գրությունը 6,5×12 սմ., սկիզբն ու վերջը թերի, կազմով, պարունակում է ընդամենը 134 թերթ, մեջը 2 էջ մաքուր թողած, ուր հետագայում գրվել է ոտանավոր սիրային բովանդակությամբ թուրքերեն-ադրբեջաներեն լեզվով և արաբական գրությամբ[25]։

Ձեռագրի մեջ ալքի է ընկնում, նախ, Փարման մանկան պատմությունը (սկզբում թերի), որը գրավում է ժողովածուի գրեթե կեսը[27], ապա գալիս են Գրիգորիս Աղթամարցու հանրածանոթ տաղերը, թվով հինգը. «Մաքուր պատկերովն», «Դու ես արեգակ», «Արեգնափայլ գեղովն», «Մաղկունք ասեն» և «Դու դրախտ Եդեմայ»[28]։

Իսկ այս տաղերի ետ ու առաջ գետեղված են հետևյալ երկերը. «Տաղ Ստեփանոսի», Տաղ Ուսկա որդոյն», «Պատմութիւն վասն վաճառականաց Մարխայ է և Կոստայու ասացեալ»[29], «Վարգանայ պատասխանի թղթին պլպլին», «Տաղ Զաքարայ եպիսկոպոսի Լմենեցոյ ասացեալ», «Երգ պաշտպան գեղեցիկ ասացեալ՝ Ով սուրբ մանկունք», «Տաղ ձայնի ասացեալ՝ Աղբիւր կենդանի», «Տաղ Ադամայ ասացեալ՝ Ինունդ Ադամայ», «Տաղ Երուսաղեմայ՝ Գովենք զքեզ, Երուսաղէմ»[30] և «Գովասանք Սուրբ Կարապետին» (վերջը թերի)[31]։

26 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս մեր հոդվածում՝ «Հարհրդային Վրաստան» (Թբիլիսի), 1959 թ., 27 IX, № 271։

27 Սրա մասին՝ «Նուշանիկ Նազարյան, «Պատմություն Ֆարման մանկան (միջնադարյան պոեմ)», Երևան, 1957, 195 էջ։

28 Կարապետ Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը», Թիֆլիս, 1898, էջ 48—71, 76—79։ Հ. Ներսես վրդ. Ակինյան, «Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, կյանքն ու գործերը [«Ազգային մատենադարան», ՃՁ], Վիեննա, 1958, էջ 20—33, 75—79։

29 Այս պատմությունը հիշեցնում է Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ և առաջաբանով լույս ընծայված «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (Երևան, 1957) ժողովածուում տեղ գտած օրինակները։

30 Թերևս համապատասխան Սաղմոսի (ՃԼԷ) ներշնչմամբ և նմանողությամբ՝ «Գովեա, Երուսաղէմ, զՏէր, և օրհնեա՝ զԱստուած քո Սիոն»։

31 Հմմտ. Սայաթ-Նովայի քառալեզվյան խաղը, որ սկսվում է հայերեն (Թբիլիսիի բարբառով)՝ «Մէյ սուլթան Սուրբ Կարապետ Թարփիուն» բառերով (Մ. Ա. Հասրաթյան, «Սայաթ-Նովա», Երևան, 1959, էջ 80)։ -ատ Լենինգրադյան ձեռագրի։

***

Զաքար Լմենեցու նորահայտ տաղը, որ զետեղված է այս ժողովածուում, պարունակում է 6 տուն, տունը 4 տող և տողը 15 վանկ, Այն տիպիկ նմուշն է տաղերի այն շարքի, որ առանձնապես տարածված էր Աղթամար—Լիմ—Կտուց— Վարագ—Մոկսի միջավայրում դեռևս ԺԵ դարից, ուր խոսվում է վասն «չորից մշտահոս գետոցն յԱդենական աղբերէն յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց ոռոգումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս», «Եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն՝ ոռոգանել զպաքեալ միտս մարդկային քնութեանս»[32]։

Օգտվելով առիթից, կուզեինք նշել, որ ԺԵ դարի գրիչ Ավետիսը որակավորում է «եդեմական» գետերն այսպես.

«Փիսոն՝ կոչող Սեմայ ազգի,
Գեհոն՝ զԲանան յաղատ երկրի,
Տիգրիս-Եփրատ՝ բազմադիմի
Յարէթական Հայկազունի»[33],

Իսկ ԺԸ դարի գրիչ Զաքարիան գրում է.

«Այլ և գետոցդն զանազան,
Որք ի դրախտէն յառաջ խաղան՝
Փիսոն, Գեհոն ընդ Տիգրիսն այն
Եւ Եփրատէսն հրաշազան·
Որ ցուցանէ յայտնի նշան
Զառ ի չորիցն համանրման։
Փիսոն՝ ասէ ըզՄատթէոս,
Գեհոն՝ զՄարկոսն առիւծանման.
Տիգրիս զՂուկաս եղնանրման
Եւ Եփրատէս՝ զարծիւն Յոհան»[34],

«Տաղ ի Զաքարայ եպիսկոպոսէ Լմենեցոյ ասացեալ» վերնագիրը կրող բանաստեղծությունը, որ մենք ստորև հրատարակում ենք, արձագանքում է հին և միջնադարյան հայ գրականության մեջ արմատացած այն տեսակետը, որ եդեմը (դրախտը) գտնվելիս է եղել չորս խոշոր գետերի՝ Փիսոնի, Գեհոնի, Տիգրիսի և Եփրատի շրջապատում։ Եվ այս տեսակետը, բխելով Աստվածաշնչի Ծննդոց գրքից (Բ 10—14)[35], հետագայում այլևայլ կերպ մեկնաբանվել է մատենագիրների կամ գրիչների կողմից։

Այսպես, օրինակ, Անանիա Շիրակացին իր «Սակս բացայայտութեան Թուոյ երկասիրութեան մեջ գրում է. «Եդեմական աղբե-

32 Ե. Նալյան, հիշյալ աշխատությունը, էջ 599, 604։

33 Նույն տեղում, էջ 594։

34 Նույն տեղում, էջ 598, 603։

35 «Հմմտ. Մեսրոպ եպիսկոպոս [Տեր-Մովսիսյան], «Հատվածք երկաթագիր Հին Կտակարանի հանդերձ հնագրական պատկերավ» [«Բիբլիոթեկա Արմենո-Գեորգիկա», V], Պետրոգրադ, 1915, էջ 2։

րէն, որ է սեռական առաքինութիւն, չորս բղխեն առաջս, Առաջին Փիսոն, որ կոչի բերան հրոյ,... Իսկ երկրորդ գետն՝ Գեհոն. որ կոչի լանջք կամ եղջիւր ցլու, որ պատէ զԵթովպիա, որ կոչի նուաստութիւն վատութեան, ...Իսկ երրորդ գետն՝ Տիգրիս, որ երթայ յանդիման Ասորոց, որ է ողջախոհութիւն, ...Իսկ չորրորդ գետն՝ Եփրատէս ոչ ունի վայրս և գետս դէմս գնացից, որ է արդարութիւն, զի ոչ ընդ իշխանութեամբ ուրուք ի դոցանէ է և ոչ իշխէ ումեքն[36]։

Հայերեն ձեռագիր Ավետարաններին կցված հիշատակարաններում չորս թիվը սովորաբար օժտված է սիմվոլական բովանդակությամբ, որոնք են.

Չորս ծագք աշխարհիս՝ արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ (Հմմտ. հետագայում չորս «քուստիս»-ների գաղափարը Սասանյան Իրանում և չորս ոդեշխության գաղափարը Հայքում)։

Չորս նիւթեղէն աշխարհի՝ հող, ջուր, օդ և կրակ։

Չորս անկիւն և եղջիւրք սեղանոյ։ Նույնն ըստ «տեսիլքս»-ի Եզեկիել մարգարեի՝ Ռաբակերպյան աթոռը։

Չորս թեք խաչի։

Չորս առաքինութիւնք հոգւոյ՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն։

Չորս բանք Աւետարանի՝ պատգամ, պատուիրան, սպառնալի և աւետիս։

Չորս եղանակք խաւսից Աւետարանի՝ հրաման, խրատ, օրինակ և վկայութիւն։

Չորեքկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, ցուլ (եղն) և արծիւ։

Չորս ավետարանիչք՝ Մատթէոս մարդն —Փիսոն, Մարկոս առիւծանման—Գեհոն, Ղուկաս եզնանման—Տիգրիս, և Յովհաննէս արծիւն—Եփրատէս։ Նույնը՝ հրոյ բերան, բարձրաբերձ, արիութիւն, հնազանդութիւն։ Եվ այլն։

ՏԱՂ Ի ՁԱՔԱՐԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԼՄՆԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

1 Դու, արեգակ, նման ելանես ի յառաւօտէ,
Պայծառ ճառագայթ լուսով կու լնուս
զաշխարհս համօրէն,
Պատկեր գեղեցիկ լուսով նկարեալ
ի յԱրարողէն,
Ոսկ և ճեմելով ծագիս թաւալմամբ ամէն
վաղօրէն։

2 Դու ես բոլորեալ աշխարհին լուսատու
ի տասնուհնգէն,
Կիշերն մեղմով գնաս, փարատես
զխաւարն ի տանէն,
Դու պայծառ մոլար աստեղ երեկոյէն,
Ոստոստ աստեղօք շրջիս միշտ ի վառան
աղօտ լուսէն։

3 Ցնդեն դրախտ ես. դու տնկեցար հզօրին
բազկէն,
Վէմ անմահութեան, պտուղ միշտ կանաչ
ես և լուսեղէն,
Դու թեթև ամպ, անձրևին մեղմ ցող ես
ի յառաւօտէն,
Զարդարին երկիրս բուսով ծառք և տունք
զարանան ի քէն։

4 Ի գետն Փիսոն նմանիս, ելանես յեմատն
լեռնէն,
Գաս ի յԱպրրշահ երկիրն և ոսկին բուսանի
ի քէն,
Դու, Գեհոն, մանրածաւալ ելանես
ի Հուսին լեռնէն,
Հատանես զԵթովպիայ, եգիպտոս
զովանալ ի քէն։

5 Դու, ծիծաղալցնաց Տիգրիս, ելանես
ի գեղջն Ոլորէն,
Ասորեստանօք պտտիս, արբենան երկիրս
համօրէն,
Դու, երկու ականց Եփրատ, ելանես
ի Ոսկեանցն ակնէն,
Միանաս դու ընդ Տիգրիս, ոլորս տաս
ի Պարսկաց տանէն։

6 Մտանես ի ծովն մեծ, դադարեն ալիքդ,
որ ի քէն,
Ծառաւիս, որ առ քեզ եմ, արբեցոյ ի քո
ցուրտ ջրէն,
Զսովեալս ի սեղան կոչեալ, կերակրեալ
զիս անմահ հացէն,
Բաժակ բերկրութեան ես դու, արբեցոյ
ի քո սուրբ որթէն։

***

Զաքար Լմնեցու տաղին կցված է հիշատակարան հետևյալ բովանդակությամբ.

«Զաքարիայ բանս երգողի շարժելով առ քեզ, սիրելի, տխմարիս բանս ընթերցի՛ր. աւրհնութիւն Փրկչին եղիցի։

36 Աշոտ Աբրահամյան, «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 242—243։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼՅԱՆ
(1887—1961)



Փետրվարի 2-ին վախճանվեց արևելագիտության ականավոր դեմքերից մեկը, ՍՍՌՄ Գիտություններ ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, բազմավաստակ գիտնական Հովսեփ Աբգարի Օրբելյանը։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելյանը ծնվել է Քութայիսի քաղաքում, 1887 թվականի մարտի 8-ին (20-ին)։

Թիֆլիսում ավարտելով գիմնազիան, 1904 թվականին նա ընդունվել է Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը։ Դեռևս ուսանողական նստարանից նա այլի է ընկել լեզվաբանության, հնագիտության և արվեստագիտության հանդեպ հետաքրքրությամբ և սիրով։ 1906 թվականից սկսած նա մասնակցել է Անիի պեղումներին և Ն. Մառի բացակայության ժամանակ ղեկավարել հնագիտական աշխատանքները։

1911 թվականին Հ. Օրբելյանը փայլուն կերպով ավարտել է Պետերբուրգի համալսարանի երկու ֆակուլտետ։ Նույն թվականին, Ռուսական Գիտությունների ակադեմիան նրան գործուղել է Թուրքիա՝ ուսումնասիրելու Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի հայկական, ուրարտական և սելջուկյան հուշարձանները։ Դրա հետ միասին նա ուսումնասիրել է հայ և քուրդ բնակչության կենցաղն ու բարքերը և հարուստ նյութերով վերադարձել Պետերբուրգ։

1913 թվականին Հ. Օրբելյանը Պետերբուրգի համալսարանում հանձնել է հայվրացական բանասիրության գծով մագիստրոսական քննություններ և հաջորդ տարվանից այնտեղ աշխատել որպես պրիվատ դոցենտ։ Ն. Մառի հետ միասին Հ. Օրբելյանը 1916 թվականին գործուղվել է Վան պեղումներ կատարելու և հայտնաբերել է ուրարտական Սարդուր Բ թագավորի թողած 265 տողանի սեպագիր արձանագրությունը, որը բացառիկ նշանակություն ունի ուրարտագիտության համար։ 1918 թվականից, որպես Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր և մի շարք գիտական հիմնարկությունների ու կազմակերպությունների անդամ, նա մասնակցել է արևելագիտական, արվեստագիտական, հնագիտական հիմնարկների աշխատանքներին։

Անխոնջ գիտնականի կազմակերպչական տաղանդն ու եռանդը հանդես են գալիս Պետական էրմիտաժում, որտեղ նա աշխատում է 1920 թվականից։ Հ. Օրբելյանի ջանքերով է կազմակերպվել և համաշխարհային հռչակ վայելել էրմիտաժի արևելագիտական բաժինը։ 1934—1951 թվականներին նա վարել է Պետական էրմիտաժի դիրեկտորի պաշտոնը։

1935 թվականին Հ. Օրբելյանը ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։ Հ. Օրբելյանի բեղմնավոր կյանքի բազմաթիվ էջերը կապված են հայագիտու-

թյան զարգացման, մասնավորապես Հայաստանի գիտության և գիտական օջախների ստեղծման ու գիտական կադրերի պատրաստման հետ։ Հ. Օրբելյանը 1938 թվականին ընտրվեց ՍՍՌՄ Գիտություններին ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահ։

1943 թվականին Երևանում հիմնվեց Հայաստանի գիտական մտքի խոշոր կենտրոնը՝ Գիտությունների ակադեմիան։ Նորաստեղծ ակադեմիայի առաջին պրեզիդենտը ընտրվեց Հ. Օրբելյանը։

Հանձին Հ. Օրբելյանի, հայագիտությունը կորցրեց փայլուն տաղանդի և գիտական բացառիկ սուր մտքի տեր հետազոտողի, անձանձրույթ ուսանողի, գիտության մեջ առաջադեմ, կյանքում անկեղծ և անմիջական և հայրենասեր գիտնականի։

Հովսեփ Օրբելյանի պայծառ կերպարը միշտ վառ կմնա ընդհանրապես գիտության մշակների և ի մասնավորի հայ մշակույթի վաստակավորների շարքում։

Հարգա՞նք մեծ գիտնականի հիշատակին։

ՅՈՒՑԱԿ ՄԱՏՅՈՒ ԱԹՈՌ Ա. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 132
ՇԱՐԱԿՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 392։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 33, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ Ա՝ 13, Բ՝ 10 և ԼԳ՝ 9 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 21,8×16,2×3,3սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղձած և կեղտոտած դիմացկուն թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշամով զարդեր են նկարված։ Կազմի երեք բռնիչները ընկել են։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում կան թղթե կուպական թերթ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ թեպետև լավ է, սակայն պրակների կարի թելը արդեն փտած լինելով, որոշ պրակներ դուրս են գալիս կազմից։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ մխայուն։— ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1, 2, 381, 392։— ՏՈՂԵՐԸ՝ 23։— ԳՏՈՒՄՆԵՐԸ՝ առանց հընչման։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հատարակ խորաններ և կիսախորաններ, լուսանցազարդեր և սրբանկարներ, թռչնագրեր և զարդագրեր, խաչեր և մի հատ էլ կաթողիկոս (թ. 812 բ)։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ մահտեսի Հովհաննես խասապողլի։— ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1706 թ. նոյեմբերի 23։— ՎԱՅՐԸ՝ Ղրիմ։— ՅԱՆԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված 1954 թվականին Նոր-Նախիջևանից, Տ. Մկրտիչ ավագ քահանա Յորլուփյանից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 114բ.—Յոյս իմ ի միւս անգամ զալրստեանքն քո մի անտես առներ զիս, Տէր Աստուած իմ։

Թ. 389ա.—Փառք և գոհութիւն և երկրպագութիւն Սուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեան, ամէն։ Գթութեամբ և մարդասիրութեամբ էին Աստուծոյ յանգելեալ աւարտեցաւ տառս եղանակաւոր՝ ի լրումն կաթուղիկէ եկեղեցւոյ ըստ քատակութեան վիմին Կեփայեան, նախագիծ շարադրութեան մարմնոյ գլխոյն պսակեալ գլխոցն, յոգաշար. միութեամբ զբստ աւգականիս մերոյ զկերպ և զգաղափար, պաղպաճուն իրագործեալ, ըստ եթերականաց խորհրդածութեանն, եզ առ մու կենսեղուտ սպեստափառեալ։ Որ ունի ընդդոգեալ յինքեան զամենայն միահամուռ լուսածնելոցն և զառկայացելոցն, յաւէտ և անկէտ միշտ լուսանորելոցն խորհրդակից գոլով, անյագ և միշտ ըղձակերտութեամբ, լիակատար և անթերի լրմամբ՝ պա(թ. 389բ) տարուն գալով յամենայն պաշտաւնս տիրատենչ ըստ հոգեւոր և զեկ թե թուղթիկ՝ յարատանչ ալեկրութեանց յապահովեցու։ Որ ականատես լեալ յետին ի գրիչս և ի փանաքիս ի քարտուղարս, չուառս և աղկաղկս ամենայնի, և մոռացեալ զիս ե զբնիկ տրկարութիւնս՝ ցանկացաւղ եղեալ սրմա, թէպետ և յոյժ անբմբռն, ապաւինեալ յայն՝ որ տայն ամենայնի առատապէս և ոչ նախատէ։ Զեռնարկեցի ի սրմա հողս և փոշիս, և հասի ի զրաւ գրչութեան սորա ոչ թէ ըստ արհեստիցս և զարուութեան անձինս, այլ ի կատարումն ուխտեալ հրամանին մարդասիրին, թէ ամենայն որ խնդրէ՝ առնու։ Արդ, ցանկացող եղեալ յայսմ եղանակաւոր տառիս այրն հոգելի մահտեսի Յովհաննէսն, սերտ սիրով և կարի ջերմեռանդասուն փափագմամբ եւ գծագրել զաստուածախաս և եղանակաւոր տառս և անգին մարգարիտս ընդ այսմ անչինչ քարտիսի (թ. 390ա)... (այս թերթի վերևից կտրված է հինգ տող)։ Ի թուականութեանս Արամայենեայց սեռի՝ ՌՃՄԵ (1706) ամին, ամսեան հրոմայելեցւոց նոյեմբերի ԻԳ, ի հայրապետութեան Սուրբ էջմիածնայ Տեառն Նահապետի, որ հանգուցեալ է առ Քրիստոս։ Եւ առաջնորդութեան յերկրիս Ղրիմու Տէր Յակոբ վարդապետին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ։ Արդ, աղաչեմք զդասս կարգաւորացդ և հանդիպողացդ, յիշել նախ զարժանին յիշատակի զվերոգրեալն զմահտեսի Յովհաննէսն և զծնողսն՝ Խաճայ Սարգիսն և Շաքար Պիքան, զնկերն նուր Պիքայն, զկենդանիս և զհանգուցեալսն մի անգամ և զամենայն արեան մերձաւորսն, որոյ Տէր (թերթի վերևից կտրված է հինգ տող)։ (թ. 390բ) կամ ծխելոյ կամ գրաւելոյ, իսկ խընամաւք և զգուշութեամբ պահողքն աւրհնեալ եղիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Դարձեալ աղաչեմ զսրբազան և աստուածամերձ դասս քահանայից, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսջիք ի Տէր Յիսուս Քրիստոս զմահտեսի Յովհաննէսն, որ մականուամբ Խասապօղլու կոչի, և ըղծնողսն Խաճայ Սարգիսն, և զՇաքար Պիքայն, և զկենակիցն նուր Պիքայն, և զփեսայն տիրացու պարոն Յովհաննէսն, և զզաւակսն իւր Մանանային, Կիւլպիքէին, Շաքարպիքէին և Լաւսպիքէին, և ամենայն զարմիցն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Հայր մեր որ յերկինս...։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— Այս շարակնը Մինաս Վարդանովին է, բարով վայելչ, ամէն։

№ 133 ՔԱՐՈԶԳԻՐՔ

ԹԵՐԹԵՐԸ՝ 442։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 55, յուրաքանչյուրը 8 թերթից, բացառութեամբ հեռացել պրակներից. Ե՝

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից, Է-ից, Թ-ից և 1961 թվականի № Բ-ից։

3, ԺԱ և ԺԸ՝ 6, Ա՝ 7, ԽԶ և ԽԸ՝ 10։—ՄԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 21,5 × 15,5 × 6,2 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղեցիկ հաստակ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ լավ։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապսակ։— ՏՈՂԵՐԸ՝ անհամաչափ, 23—27։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ոչ ճմշումով։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 441 և 442։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի մի քանի հատ շատ հասարակ զարդագրեր և թուղնագրեր։— ԳՐԻՉԸ՝ Մարտիրոս։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Կոստանդնուպոլսո Հակոբ Պատրիարք։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1755 թ.։— ՎԱՃԱՌԸ՝ Կոստանդնուպոլիս։— ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը գրված է 1954 թվականին Թբիլիսիից. Հակոբ Տեր-Հարությունյանի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Զբոլոր գործս զայս նուիրեմ քեզ հոգիդ Սուրբ Աստուած, զքոյս ի քոյոցդ քեզ առաջնոյ պարգևիդ ընծայելով ազքատս ամենահարբստի, Տեառնդ իմոյ զիս ստացողիդ, որպէս և աստուածաբանն Գրիգոր, ի ճառին որ ի վերայ քո աստուածաբանութեանցն ասաց, թէ մեք այնքան վստահանամք ի Հոգին, զոր պաշտեմքն, մինչ զի աստուածաբանութեանս արասցուք սկիզբն։ Վասն որոյ և հիմն ամենից բարեաց և արմատ բնաւից պարգևաց դաւանելով, զկանխախայծս զայս քարոզ ի պատիւ աստուածութեանդ նուիրելով, զօգնութիւն քոյ նուաստս հայցեմ ի բանասիրաց, Յակոբ ևեթ անարժան պատրիարգս Կոստանդնուպոլսոյ, զի որ յամենայնի նուազեալն եմ զիս քեզ համայն ստանալով ըզգոլն իմ և բարուոք գոլն խնամեալ դարմանիցես և անուանդ քում զփառս տացես։ Եւ զի դու լեր պարգև չարչարանաց էակիցդ, և փառակիցդ, նմին իրի յուրբաթի աւուրն վերջնոյ մեծի բարեկենդանին սկսայ ի փառս քոյ, յամի մարդեղութեան քո օծեցելոյ Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի 1755 և ՌՄԴ։

Թ. 440բ.— Ո՞ Տէր իմ Յիսուս Քրիստոս, յորժամ նստիս յաթոռ դատողական հատուցանել մարդկան իւրաքանչիւր զգործս իւր, զոչ թողեալս և դատաստան քո, և զխրլեալս իրաւանց քոց, զՄարտիրոս գրիչ, որ խրատեալս եմ վրէիս տալով մեղաց իմոց, բաւականասցէ ի մարդասիրէդ, ընդունիցիմ զարքայութեանդ։ Հայր մեր որ յերկինս...

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 177բ.—(Կա մի կնիք, որն անընթեռնելի է)։

№ 134

ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 219։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 19, յուրաքանչյուրը 13 թերթից, ի բաց առյալ Ա՝ 8 ԺԲ՝ 7 թերթից։— ՄԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 21,5×14,5×4,8 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղեցիկ և կեղտոտած հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով խաչ է նկարված։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ քայքայված, սկզբից ու վերջից թերի։ Կազմի կաշին տեղտեղ պոկվել է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— Տողերը՝ 23։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան երեք ավետարանչների նկարները, ամբողջական էջի ծավալով (Թ. Թ. 62բ, 102բ, և 167բ) և չորս խորաններ։ Կան նաև թուղնագրեր, զարդագրեր, խաչեր, գմբեթներ և լուսանցազարդեր՝ նկարված հասարակ արվեստով։— ԳՐԻՉԸ՝ Վրթանես քահանա։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— Տաղողը՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1686 թ.։— ՎԱՃԱՌԸ՝ անհայտ։— ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է 1954 թվականին Ռոստովի հայոց եկեղեցուց, դոկտ.-պրոֆ. Աշոտ Աբրահամյանի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 218ա.— Գրեցաւ Սուրբ Աւետարանս ՌՃԼԵ (1686) թվին, ի ձեռամբ և ամենամեղ և անարժան Վրթանէս իրիցու։ Աղաչեմ զձեզ, ով հանդիպողք Սուրբ Աւետարանիս Աստուած ողորմի ասացէք մեղաւորիս, Աստուած ձեզ ողորմի միւս անդամ դալըստեանն, ամէն։ Հայր մեր որ յե...։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 9ա.— Թախշի Դավիթ Մարկոսեան։

Թ. 30բ.— Թիվն ՌՄՀ (1821) էր։

Թ. 102ա.— Յիշայղակ է Սուրբ Աւետարանս Տէր Քասպարին, իր գողայկից նագուն, իր որդի Մալխասին, հայրն իմ Աւաքն, մայրն իմ Զարիփին, իր որդիք Ղուկասն, Ովանէսն, Պաղտասարն, Յարութիւնն, Պալասանն, Մարտիրոսն, դուստրն իմ Աղաթիան, ասդ հաւաքեալ նեղեցելոցն, որք ողորմի ասէք։ ամէն։

Սուրբ Աւետարանս առին գուին ի ծեռն մեր որդի Մալխասին, թվին ՌՄՀԶ (1727)։ Եբրեցաւ ծեռամբն Գրիգոր վարդապետին։

Թ. 102բ.— Զմատենից Մովսէս քահանայի Տէր Գրիգորեանց 1840 № 5։ Ե՛ն. 1740 թ.։

Թ. 188բ.— Առա Ավվետարան կրէց աւրհնտէր Ավագիս թվին ՌԹԺԵ (պետք է լինի ՌՄԺԵ՝ 1766) խառ ի թվին։

Թ. 219բ.—...Համագոյ և մի... անբաժանե... Երրորդութեանն, Հաբ, Որդոյ և Հոգւոյն Սրբոյ... ականի և անդնեելի անձնաւորութեանն, Հօրն անեղի, Որդոյն Միածնի, Հոգւոյն բղխողի, էիցս հաստատի, աշխարհս ազատողի և բարերարի։ ամէն։

Արդ, ցանկանալով ցանկացաւ բերանոյս Յիսուսի և լեզուս Քրիստոսի աստուածային հրոյս և լաճալոյս գրոյս որ կոչի Աւետարան, երանելի և երջանիկ, հեզահոգի և բարեմիտ Մէլքումն, ի հալալ վաստակոց իւրոց։ Յիշատակ իւրն և ծընողաց իւրոց հօրն Կոստանդին, մօրն Փարուն, և որդոյն Պարոնին և Նարինին և կողակցին Միրասին և ամենայն արեանառու մերձաւորացն, ամէն։ Դարձեալ լիշեցէք ի Քրիստոս զեղբայր սորին պարոն Պաղին և իւր որդիքն՝ նորընծայ քահանայն Տէր Յակոբն և կողակիցն իւր Մարգա-

բիսն և ամենայն արեանառու մերձաւորացն, ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զեղբայր ոգին պա... /յարունակութիւնը կրող թերթը ընկել է/։

№ 135

ՄԱՇՏՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 173։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 16, յուրաքանչիւրը 12 թերթից, ի բաց առյալ Ա՝ 7, Ժ՝ 8, Թ՝ 9, Դ և Ե՝ 10, ԺԲ և ԺԳ՝ 11, ԺԶ՝ 13 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 20,5×15,8×5,5 սմ.։—ՆՅՈՒԹԸ՝ գեղնած և կեղտոտած սովորական թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ սաթաակ, քայքայված, վրայի կաշին պոկված է, իսկ երեք բոնիչներն ու մետաղյա խաչի մեծ մասը ընկել են։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ անբավարար, սկզբից և մեջից բազմաթիվ թերթեր ընկել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 23։— ԳՈՒՄՆԵՐԸ՝ ճեշտմամբ։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հասարակ թուղնագրեր, զարդագրեր և լուսանցազարդեր։—ԳՐԻՉԸ՝ Գրիգոր քահանա։—ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Ղարիպշան։—ԵԱՂԿՈՂԸ՝ անհայտ։—ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1725 թ.։—ՎԱՅՐԸ՝ Կորդվաց նահանգի (Մահմատանի) Ըռոմոյի գյուղի Ս. Աստվածածին։— ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Տ. Սուքեն Եպիսկոպոս Թորոսյանի միջոցով, Կրասնոդարի բնակիչ տիկին Զարուհի Անտոնյանից, որ գաղթի ժամանակ 1915 թվականին իր հետ է բերել Երզրումից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 26ա.— Ո՞վ եղբայրք, անմեղադիր լերուք, Բ տուն Բ անկամ գրեցաւ, վասն գալոյ մարդկաց և զրոցից, վա՛յ ինձ։

Թ. 37բ.— Պսակ վերացնելն (թ. 38ա) ապարտեցաւ, մեղաւորիս վայ ասացաւ։

Թ. 45ա.— Ո՞վ եղբայր, յիշեա զիս զմեղաւորս։

Թ. 50ա.— Վա՛յ ինձ Ռ բերան։

Թ. 56ա.— Վա՛յ մեղաւորիս։

Թ. 59ա.— Մեռի թէ գիտես ասա, չէ յետ կաց և հազայ։

Թ. 63ա.— Ողբ զանազան սիրուն մանկանց և տղայոց (սույն թերթը՝ էջ 63ա և 63բ տեքստից դուրս է, գրված է միասյուն, սակայն նույն գրչի գիրն է)։

Թ. 65ա.— Եւս առաւել մեղապարտ Գրիգոր գրչիս և ստացողի գրոցս...։

Թ. 68ա.— Ո՞վ եղբայր։

Թ. 108ա.— Վա՛յ մեղաւորիս։

Թ. 110ա.—Վա՛յ մեղաւորիս Ռ բերան։

Թ. 113ա.— Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, թողութիւն և արքայութիւն շնորհեա մեղապարտ Գրիգոր գրչիս և ստացողի գրոցս ...։

Թ. 126բ.— Աւրհնեսցէ Տէր Աստուած զստացող Սուրբ Գրոցս զբարեմիտ... (3 տող բաց է թողնված) և պահեսցէ զնայ անփորձ ։ անսասան հոգով և մարմնով, ամենայն սրբոց և արժանաւորաց մաս նաև պսակակից արասցէ, ամէն։

Թ. 128բ.— Քարոզ պատուիրատուին ապարտեցաւ։

Թ. 129ա.— Զգուտն ձեր դուք գիտէք, եղբայրք, զի յիմ վերայ այս կայր և ասացի ձեզ։

Թ. 139ա.— Աւարտեցաւ, մեղաւորիս վայ ասասացաւ, սնագոյն չար պարտեցաւ, վայ և եղուկ է ինձ հազար բերան։

Թ. 172ա.— Փա՜ռք համագոյ, զուգափառ, հաւասարապատիւ, անբաժանելի Սուրբ Երրորդութեանն, գոյացողչին բնաւին եղականաց, Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն յառաջ քան զամենայն յաւիտեանս։ Որ ետ կարողութիւն տկար ոգոյ Գրիգոր մեղապարտ երիցու հասանել յաւարտ Մաշտոցիս, որ է յիշատակ բարեմիտ և հաւատարիմ տանուտէրոյն Ղարիպշանին, կողակցին Թազագուլին, ծնողացն Յովանիսին, (թ. 172բ) Ոսկանին, քուերն Խոխէին, ամէն։

Եւ արդ, ես յետինս ի գրչացդ, անկարգս ի կարգաւորացդ, մեղաւորս ի յարդարոց, ունայնս ի թարօրս ի յամենայն առինութեանց, և անմասն ի մասնակցութենէ սրբոց, ծոյլս և պղերգս ի փառաբանութեանցն Աստուծոյ, Գրիգոր մեղօք լցեալ գրիչս։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զՍուրբ Գիրքս, ի յերկիրն Կորդուաց, որ ածմ Մահմուդան ասի, ի գիւղն Ըռոմոյի, որ մականուն Եղրս ասեն, ընդ հովանեա Սուրբ Յարութենին և Սուրբ Վարդանա զօրավարին, ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնա Տեառն Աստուածատուր Կաթուղիկոսին Ամենայն Հայոց։ Եւ մերոյ Աթոռոյս յառաքելաշէն և հռչակաւոր սուրբ ուխտիս, Հոգոց վանից Սուրբ Աստուածածնին Եալատուր վարդապետին։ Ի թուականիս հայոց ՌՃՀԴ (1725), ի դառն և ի նեղ ժամանակիս, որ եմք ի վիշտս և ի տառապանս, մանաւանդ ի ձեռս մեղաց և յայլազգայ։ Եւ ըստ այսմ ամի ծղև աստուածասաստ բարկութիւն ի վերայ ամենայն աշխարհի, ես առաւել ի (թ. 173ա) վերայ Պարսիկ աշխարհին, որ եւաւ Ատղուա փաշէն բազում հեծելով և անթի զօրօք և գնաց աւերելով և գերի առնելով և անողոր սպանելով մինչ էառ զԹարուէզ քաղաքն, որ է շահաստան, և այն ես վասն ծովացեալ մեղաց իմոց եղև, զոր Տէր Աստուած ի խնամս իւր պահեսցէ զամենայն հաւատացեալ ժողովուրդս իւր ի ցասմանէ, ի պատուհասէ, ի փորձութենէ սատանայի, ամէն։ Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպող սուրբ տառիս անմեղադիր լերուք ի խոշորութեան գրոյս (զի այս էր կարս մերս Եւ... ասացէք Գր. մեղապարտ ... զի չեմ արժանի ... չիլ քահանայ, և Աս-

տուած ողորմի յիշողացդ և իմ արեան մերձաւորացն, ևս առաւել ծնողաց իմոց ի ... թին, Յոթիարին, և կողակին իմոյ Գուլստանին, որ փոխեալ է առ Քրիստոս և ամենայն հաւատացեալ քրիստոնէից, և ի վերայ մեր խնամս տանողաց և հացիւ և շրով զմեզ յիշողաց, ևս առաւել զխլօն և զկողակիցն...(մի անվան տեղ բաց է թողնված) իւր որ հանապաղ կերակէր զմեզ, և Քրիստոսի փառ յաւիտեանս, ամէն։

Թ. 173բ.— ... Աստուած ... Ղարիպջանին, ... զաղուլ ... ացն Յովանիսին, Ոսկանին, եղբարցն Մարտիրոսին, կողակցին Ղարիպխանին, զստերն Գուլարին, Խանղադին, ՌՌէյանին, Յովանէսին, Զաքարին, հօրեղբօրն Մարգարին, կողակցին Համբէկուն, որդոյն Վարդանին, կողակցին Զամանին, որդոյն Մարգարին, Համբէկուն, Մարգրտին, հօրեղբօրն Զաքարին, կողակցին Սառային, Մուրատին, մեծ պա...ցն Խաթունին, Բէկզադին, Ամիրզադին։ Դարձեալ Աստուած ողորմի Ղարիպջանին, կողակցին Թաղագուլին և իւր արեան մերձաւորացն առհասարակ ամենեցուն, ամէն։ Որ ստացաւ ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ հոգոյ իւրոյ յաւիտենից, ամէն։ Զխլդաթն և յիշեցէք ի Քրիստոս, որ եղն կամակից բարի բանիս, կողակիցն Շուլարին, որդոյն Գրիգորին, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 10ա.— Զմաքրեցեն։

Թ. 10բ.— Զողոպ կայ անդր հարսանիք մի այլ աղօթ ասասուք։ ԱԲԳ. արգ, այլ աղօթք։

Թ. 11բ.— Օրհնեալ Աստուած։

Թ. 27բ.— Յիշատակ է այս Մաշտոց Տէր Գրիգորին և իւր տղայ Տէր ըՍտէփանին և իւր նխպար Ոհանին թվ. ՌՄՁ (1831) փետրվարի Զ։

Թ. 28ա.—Յիշատակ է այս Մաշտոց Տէր Գրիգորին և իւր տղայ Տէր ըՍտէփանին և... ծնաց Նորին։

№ 136

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԴԻՈՆԷՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻՈՅ (Թարգմանված լեհերենից 1669 թվականին, Ստեփանոս Իլովացու կողմից)

ԹԵՐԹԵՐԸ՝ 396 (394 + Թ. Թ. 16ա և 18բ)։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 33, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ պրակներ ԼԳ՝ 9, Ա, ԻԸ և ԼԲ՝ 10, ԻԵ՝ 11 թերթ։— Մեծությունը՝ 20,1×14,5×5,3 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի երկու կողքերի վրա ճնշումով զարդեր են նկարված։ Կազմի առջևի մասին ներսից կպցված է գունավոր և ծաղկավոր մի լաթ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ 7 թերթ սկզբում և 5 թերթ վերջում։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն որոշ պրակներ պակվել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ Թ. Թ. 1—7, 339, 375, 390—394։— ՏՈՂԵՐԸ՝ 21—25։— ԳՏՈՒՄՆԵՐԸ՝ հեշտությամբ։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի շատ գեղեցիկ թռչնագրեր և զարդագրեր, ծառեր և ծաղիկներ, բույսեր և լուսանցազարդեր։ Ծաղիկների համար գործածված են առավելապես կանաչ, կարմիր, նարնջագույն և կապույտ գույները։ Կան հինգ կիսախորաններ (Թ. Թ. 83բ, 158բ, 297ա, 306ա և 324բ)։ Կա մի Զ տառ (Թ. 38բ), որը շատ արիգինալ ձևով է նկարված։ Դա մի թռչնագիր է, երկու թռչուններ, որոնց միշտ նկարված է մարդու դիմագիծը շատ հաջող կերպով։ Ձեռագրում կան նաև երկու տառեր Ի (Թ. 62ա) և Ե (Թ. 311բ), որոնց թռչնագրի և ձկնագրի խառնուրդ են։ Շատ գեղեցիկ են և շատ հաջող։— ԳՐԻՉԸ ԵՎ ԿԱԶՄՈՂԸ՝ Եսայի վարդապետ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ՍԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1713 թ.։— ՎԱՃԱՌԸ՝ Նախիջևանի Երնջակ գավառի Ս. Կարապետ վանք։— ՍԱՆՈՒԹՅՈՒՆՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Վեհափառ Հայրապետից 1960 թվականի հունվար ամսին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 8ա.— Յառաջաբանութիւն գրոց.

Նախ քան զձեռն արկել յիրողութիւն, արժան վարկանիմ պատճառ արտագրել, թէ վասն է՞ր համարձակեցայ վերստին թարգմանութիւն առնել, մի գուցէ թուեսցի ունեմք աւելորդ գոլ աշխատութիւնս մեր։ Արդ, վասնզի թարգմանութիւնն Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի էր դժուարիմաց և բնաբան ի բազում տեղիս փոփոխեալ, և մեկնութիւնն առ ի Սրբոյն Մաքսիմոսէ արարեալ կիսակատար թարգմանեալ, քանզի ոչ եթէ ինքն Սուրբն Ստեփաննոս մեկնեաց, որպէս ոմանք կարծեն, այլ ի յունաց բարբառոյ ի մերս թարգմանեաց։ Վասն որոյ ես Ստեփաննոս Իլովացի, յետին ի բանասիրաց, ի խնդրոյ եղբարցն ուսումնասիրաց, ի դուռն Սրբոյ Աթոռոյ էջմիածնի, համարձակեցայ միւսանգամ թարգմանել ի լատինացւոյ բարբառոյ ի հայոց լեզու, թէ՛ զբնաբանն և թէ՛ զմեկնութիւնն լիակատար, և զիւրաքանչիւր գլուխս բաժանեցի ի գլխաւոր մասունս, զորոց ցանկս ըստ իւրաքանչիւր մասանց ի սկիզբն գլխոց համառօտիւք եդի, զի այսպէս դիտաւորութիւն բանիցն դիւրեաւ իմասցի։ Եւ ապա զկնի իւրաքանչիւր մասին, բնաբանին մեկնութիւն շարագրեցի։ Եւ արտաքոյ մեկնութեանն, զոր արարեալ էր Սրբոյն Մաքսիմոսի յունաց վարդապետին, այլ ուսա ևս բազում (Թ. 8բ) բանս մեկնողականս առ ի բացայայտութիւն նկարագրին դրոշմեցի։ Եւ գիտելի է ուսումնասիրացն, զի արտաքոյ շարագրութեանցս, որք այսոր առ մեզ են, զայլ ևս յիրողութիւն յիշատակ իւր կորովամիտ իմաստութեանն Սրբոյն Դիոնէսիոսի թողեալ էր, որք ոչ են ի

միջի այսօր, և զորս ինքն յիշատակէ և են այսոքիկ.

Յաղագս նշանական աստուածաբանութեանն։

Յաղագս անձին։

Յաղագս աստուածայնոցն օրհնաբանութեանց։

Յաղագս աստուածաբանական տպաւորութեանց։

Յաղագս արդարոյ և աստուածայնոյ իրաւագործութեան։

Իսկ մնացեալ շարագրութիւնքն, որ այսօր առ մեզ գտանին, են այսոքիկ.

Յաղագս երկնային քահանայապետութեանն։

Յաղագս եկեղեցականին քահանայապետութեանն։

Յաղագս աստուածայնոցն անուանց։

Յաղագս խորհրդականին աստուածաբանութեանն։

Եւ թուղթք զանազանք։

Առ Գայիոս թուղթք չորս։

Առ Դորոթէոս մի։

Թ. 9ա.— Առ Սոսիպատրոս մի։

Առ պօղիկարպոս մի։

Առ Դիմոփիլոս մի։

Առ Տիտոս մի։

Առ Յովհաննէս աւետարանիչ մի։

Արդ, նախ ձեռն արկեսցուք ի շարագրութիւն յաղագս երկնային քահանայապետութեան, որոյ գլուխք են հնգետասան։ Եւ քահանայապետութիւն է կարդաց եկեղեցւոյ հոգաբարձութիւն։ Եւ քահանայապետք են իշխանք քահանայիցն, և հրամայողք խորհրդոյն։ Իսկ վասն Սրբոյն Դիոնէսիոսի, թէ վասն էր Արիսպագացի գոչեցաւ, կամ յորում ժամանակի էր, կամ զիարդ հաւատաց, և երբ նահատակեցաւ, ի վերջոյ զպատմութիւնն զսմանէ դիցուք։

Թ. 10ա.— Դիոնէսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյ առ Տիմոթէոս Եփեսացւոյ Յաղագս երկնայնոցն քահանայապետութեան։

Թ. 16ա.— Թէ վայելչաբար աստուածային և երկնայինքն ի ձեռն աննմանիցն նշանաց երևին։

Թ. 24ա.— Զի՞նչ է քահանայապետութիւն և զինչ քահանայապետութեանն իմացուած։

Թ. 28ա.— Զի՞նչ նշանակէ հրեշտակաց մականունութիւնն։

Թ. 34ա.—Վասն է՞ր ամենայն երկնայինքն էութիւնք ըստ հասարակաց հրեշտակք կոչին։

Թ. 36բ.— Որ առաջին զարդ երկնայնոցն էութեանց, որ միջին և որ վերջին։

Թ. 38ա.— Յաղագս Սերովբէից և Քերովբէից և Աթոռաց և յաղագս Առաջին քահանայապետութեանց։

Թ. 48ա.— Յաղագս Տէրութեանց և Զօրութեանց և Իշխանութեանց, և յաղագս Միջին քահանայապետութեանց։

Թ. 53ա.— Յաղագս Պետութեանց, Հրեշտակապետաց և Հրեշտակաց և Վերջին քահանայապետութեան նորա։

Թ. 58բ.— Վերստին առումն և ժողովումն հրեշտակականին բարեկարգութեան։

Թ. 60ա.— Վասն է՞ր ամենայն երկնային էութիւնքն առհասարակ զօրութիւնք երկնային կոչին։

Թ. 62ա.— Վասն է՞ր մարդկան քահանայապետք հրեշտակք կոչին։

Թ. 64ա.— Վասն է՞ր ի սերովբէէն ասի մաքրել մարգարէն Եսայի։

Թ. 70բ.— Զի՞նչ նշանակէ աւանդելն հրեշտակացն թիւ։

Թ. 71ա.— Զի՞նչ են կերպաւորականք պատկերք հրեշտակացն զօրութեանց։

Թ. 82բ.— Սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյ առ Տիմոթէոս աշակերտն Պօղոս եպիսկոպոս Եփեսոսի, Յաղագս եկեղեցական քահանայապետութեանն։

Թ. 83ա.— Առ քահանայակիցդ Տիմոթէոս ի Դիոնէսիոսէ քահանայէ։

Թ. 117բ.— Յաղագս մեռոնին կատարման և նովաւ կատարելոցն։

Թ. 118ա.— Խորհուրդ կատարողութեան մեռոնին։

Թ. 127ա.— Յաղագս քահանայապետաց, կարգաց և կատարմանց։

Թ. 134ա.— Խորհուրդ քահանայականաց կատարմանց։

Թ. 138ա. —Յաղագս նուիրեցելոցն կարգաց։

Թ. 144ա.— Յաղագս ի վերայ ննջեցելոցն կատարմանց։

Թ. 147ա. —Խորհուրդ ի վերայ սրբազնաբար ննջեցելոց։

Թ. 156բ.— Դիոնէսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոց առ Տիմոթէոս եպիսկոպոս, Յաղագս աստուածայնոցն անուանց։

Թ. 157բ.— Զի՞նչ դիտաւորութիւն գրոցս և զի՞նչ յաղագս աստուածային անուանց աւանդութիւնք և ասացեալքն։

Թ. 158բ.— Քահանայակցի Տիմոթեայ ի Դիոնէսիոսի քահանայէ։

Թ. 175ա.— Յաղագս միաւորեցելոյ և անյատելոյ աստուածաբանութեանն և թէ զի՞նչ է աստուածային, միութիւնն և անջատումն։

Թ. 186ա.— Սրբոյն Յեռոթէոսի բանք յաստուածաբանականացն տարութեանց։

Թ. 189բ.— Թէ դի՞ն, ազգի զորութիւնն

և յաղագս երանելոյն Յեռոթէոսի և յաղագս երկիւղածութեանն և շարագրութեան աստուածաբանականի։

Թ. 193բ.— Յաղագս բարւոյ, լուսոյ, աղնուի, տոփման, զարմացման, նախանձու, և եթէ չար ոչ գոյ է, և ոչ ի գոյից, և ոչ ի գոյու։

Թ. 212ա. —Սրբոյն Յեռոթէոսի ի տոփականացն օրհնութեանց։

Թ. 212բ.— Նորին ի տոփականացն օրհնութեանց։

Թ. 214ա.— Նորին ի տոփականացն օրհնաբանութեանց։

Թ. 235բ.— Յաղագս էի, յորում և յաղագս յարացուցի։

Թ. 249բ.— Յաղագս կենաց։

Թ. 253ա.—Յաղագս իմաստութեանն մտաց, բանի ճշմարտութեան հաւատոյ։

Թ. 262բ.— Յաղագս զօրութեանն, արդարութեանն, փրկութեան, փրկանաց, յորում և յաղագս անհաւասարութեանն։

Թ. 270բ.— Յաղագս մեծի, փոքու, նորին այլոյ նմանոյ, աննմանոյ, կայից, շարժութեան, հաւասարութեանն։

Թ. 279բ.—Յաղագս Ամենակալին, հնոյն աւուրց, յորում և յաղագս յաւիտենի և ժամանակի։

Թ. 282ա.— Յաղագս խաղաղութեան, ինքնագոյոյ և ինքնակենաց և նոցուն նմանոց։

Թ. 289ա.— Յաղագս սրբոյն սրբոց, թագաւորին թագաւորաց, Տեառն տերանց, Աստուծոյն աստուծոց։

Թ. 291բ.— Յաղագս կատարելոյն և միոյն։

Թ. 296ա.— Դիոնէսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյ, Առ Տիմոթէոս եպիսկոպոս Եփեսացւոյ, Յաղագս խորհրդական աստուածաբանութեան։

Թ. 296բ.— Զի՞նչ է աստուծային մէգ։

Թ. 300բ.— Զիա՞րդ պարտ է միաւորիլ և օրհնութիւնս վերադրել ամենայնի։

Թ. 302ա.— Զինչ են ճառեիքն աստուածաբանութիւնք, զինչ անճառելին։

Թ. 305բ.— Սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոց, թուղթք զանազանք։

Թ. 306ա.— Առ Գայիոս միայնակեաց, թուղթ առաջին։

Թ. 307ա.— Առ նոյն, թուղթ երկրորդ։

Թ. 308ա.— Առ նոյն, թուղթ երրորդ։

Թ. 308բ. —Առ նոյն, թուղթ չորրորդ։

Թ. 310ա.— Առ Դորոթէոս պաշտօնեաց, թուղթ Ե, բացայայտէ, թէ զինչ է աստուածային մէգ, զորմէ ճառեաց ի գիրս յաղագս խորհրդական աստուածաբանութեանն։ Աստուածային մէգ է անմատոյցն լոյս յորում բնակեալն ասի Աստուած։

Թ. 310բ.— Առ Սոսիպատրոս քահանայ, թուղթ Զ։

Թ. 311ա.— Առ Պօղիկարպոս քահանայապետ, թուղթ է։

Թ. 315բ.— Առ Դիմոփեղոս սպասաւոր, յաղագս անձնիշխան գործոյ և քաղցրութեանն, թուղթ Ը։

Թ. 319ա. Ընդդիմադրութիւն որպէս Դիմոփեղայ հաբցմամբ։

Թ. 324ա.— Թուղթ Թ։ Տիտոսի քահանայապետի Կրէտացւոց, խնդրեալ ի նմանէ ի ձեռն Թղթոյ, թէ զի՞նչ է իմաստութեանն տունն, զի՞նչ խառնարանն, և զի՞նչ կերակուրք նորա և ըմպելիք։

Թ. 333ա.— Թուղթ Ժ։ Առ Յովհաննէս աստուածաբան առաքեալ և աւետարանիչ աքսորեալ ի Պատմոս կղզի։

Թ. 335ա.—Պատմութիւն սրբոյն Դիոնէսիոսի։

Թ. 340ա.—Օգնեա աննախանձ Հոգի Սուրբ Աստուած ճշմարիտ, ի խնդիրս հասարակաց օգտի։

[Ա]րդ, ես Յակոբս Ղրիմեցի և զառաջեալս մեղօք յոժարի, աշակերտ Գէորգ բարունապետին մեծի և քաջփաղեբային Եղընկացի, հոգեւոր զաւակաց իմոց մանկանց Սիօնի, և նորաբողբոջ կուսակրօն քահանայից, թարմատար սոսկ անուամբ միայնակեացս Յակոբ, դասիւ զաւակաւ ինչ ի տումարական արհեստէս ուսուցաք սոցա, իսկ սոքա ծանուցեալ զդժուարութիւն իրին աղաչանօք խնդրեցին ի նուաստութենէս մերմէ ըստ բանին ուսուցանելոյն և գրով աւանդել նոցա։ Եւ հարկեալ բարունապետին իմոյ կատարել զխնդիրս նոցա, ըստ հրամանի Տեառն, թէ ամենայն որ խնդրէ ի քէն տուր, վասն որոյ և մեք առանց յապաղելոյ, բուռն հաբաք ոչ ըստ բոլոր արհեստին, այլ սակաւ ինչ ի գլխաւորագունից մասանց մակացութեանս, ի հարկաւորացն, և համառոտաբար զրանս իմաստասիրաց և եկեղեցւոյ սուրբ վարդապետաց աշխատասիրելոց, ի գործս յայս, զրանս նոցա որ տարածեալ էր ի բազումս, մեք զայն գլխաւոր օրէն ի մի վայր հաւաքեցաք, և զի էր ուրէք որ ծածուկ ունէր զտեսութիւնս միտք բանին, մեք զայն պարզ և յայտնի բանիւ բացայայտեցաք ի զուարճութիւն ուսումնասիրաց տումարական մակացութեանս։ Եւ յոյս զայս ունելով ի մտի, թէ որոց քաղցր թուեսցի մակացութիւնս (թ. 340բ) այս ի յուսանիլն, Աստուած ողորմի ասասցեն, յորդոր սրտիւ մեղուցեալ անձինս։ Որ և ինքեանք ողորմութեանն Աստուծոյ արժանասցին ամենայն հաւատացելովք հանդերձ, ամէն։

Թ. 341.— Մեկնութիւն Տոմարին հայոց (բառ առ բառ ճիշտ նույն գրությունը ինչ որ կա Թ. Թ. 40ա—340բ-ում)։

(Շարունակելի)